— Այո, այդ ե, — պատասխանեց Զաքարը, — բայց միշտ հիմարանալ հիմարության կլինի։ Հիմա զիտե՞ս ի՞նչ, Սմմա, — զարձագ նա կնոջը. — Ի՞նչ վոր հարկավոր չե, հիշում եմ, ի՞նչ վոր հարկավոր ե, մռանում եմ. — զու կնասես այս սնգուկե առջև (սնգուկ նա անվանում եր գաշնամուրը) և մեզ համար մի յերկնային բան կբրէսկիթ խկացնես... յերկայն չհասկանաս, յերեկնային եմ ասում, այնպիսիներից, ելի, յե՞ ու զու վոր գիտենք, Նու, Արսեն, — հանկարծ դարձավ նա Զազունյանին, — զու չինուս, զոր կինս յերկար ժամանակ յերաժշտությամբ եր պարա-

պուած Առանձին ուսուցչունի յեր վարձել. Մուկվայից յեկած, թէ վոնդում, չպիտեմ, մի քաֆթառ Փրանսունի յեր՝ իմ քթից եւ մնե քթով, յերեսին պուզը — վորքան քեփդ տա. մի կատարյալ ցավ եր անպիտանը, կողքով անցնելիս զոռով դիպչում եր և խկոյշն — պարզնու: Բայց ճշմարիաը պիեաք և ասած իր գործին հմուտ եր և կնորս լուզ սովորեցրեց. հիմա կտեսնես, թէ ինչպես հիմնալի նվազում եւ.

Ենի խորամանկությամբ ժպտալով նա ծուռ նայեց կնոջը:

Նման, վոր հավաքում եր խառնթղթի սեղանը, կարմրեց և մի տեսակ թեթև ամոթխածությամբ ու մինույն ժամանակ բարեկամարար ժպտալով նայեց Զազունյանին:

— Ենու ձեզ ի՞նչ եյի ասում, ո՞ւ Զազունյան, — ասաց նա:

— Ի՞նչ, ի՞նչ եյիր ասում, — հարցրեց Զաքուրը շատապով:

— Տիկինն ասում եր, վոր զու ամեն բան չափազանցնում ես, — նրա տեղ պատասխանեց Զազունյանը:

— Ճիշտ ե, յետ առնասուրակ մի սովորություն ունեմ. ի՞նչ վոր լավ ե, միշտ չափազանցնել, իսկ ի՞նչ վոր վասե, միշտ մեղմացնել, և կարծում եմ, վոր այդ մեղք չե, չե՞ ՞են, յեկնատիր և սկսիր, — զիմեց նա կնոջը:

Նման վարանցով նստեց զաշնամուրի տաջն: Սկզբում շփոթվում եր, ձեռքերը թեթև կերպով զողում եյին, իսկ սիրուց բարխում եր արագ: Վերցրեց ձայնագրատեսքը և սկսեց թերթեր Յերկար ժամանակ չեր արզանում վորոշել, թե ի՞նչ նվազի: Թեև չեր նայում Զազունյանին, բայց զուռ եր, վոր շա սպասում ե և նրա աշքերը նայում են իրեն: այդ պատճառով ավելի յեր կորցնում իրեն: Վերջապես ամբողջ արթով մի տեսակ շարժում գործեց, կարծես աշխատելով դուրս գալ անսպոր շփոթությունից, իրեն բռնի սիրու տվեց, արագ բաց արեց մի բան, ի՞նքն ել շիմանալով ի՞նչ, և սկսեց նվազել: Ինչպես արքած ժամանակ, յերբ մարդ մի տեսակ անբնական լարված զղերու մի բան և գործում կամ խոսում առանց ի, են հաշիվ տալու, նույնպես և նա: Թեև նրա գեղեցիկ, յերկար, վեզ սկրի պես փայլուն մատները սահնելով խաղում եյին զաշնամուրի ստեղծունքների հետ և աշքերը տենօպային վայլով հետեւմ եյին ձա նազը իրենին, բայց նա ի՞նքը վոշինց չեր հասկանում, կարծես յերուզի մեջ լիներ: Սակայն, այդ միայն մի քանի բռպե տեսց, այնուհետեւ նա տիրապեսեց իրեն: աթոռի վրա, վոր մինչեւ այդմ նստած եր փոքր ի՞նչ առաջ թեքված, ուղղվեց, շառագունած զեմքը մի վայրկյան միայն

զարձրեց դեպի Զաքարն ու Զազունյանը, ինքնամուռաց ժողոտվ նայեց նրանց և շարունակեց նվազել այս անգամ շատ սահման, առանց վորեւ ջանազրության, ևս մինչև անգամ սկսեց զրավդվել իր նվազով և շարունակելով նվազել, զգում եր, թէ ինքը դեռ յերբեք այսպես գեղեցիկ և վարպետութեն վոշինչ չեր նվազեր նրա ձեռքերն այլևս չեյին զողում, սիրան այլևս արագ չեր բարխիւմ: Այս անգամ ամբողջ մարմեր մեջ մի անսակ զուրալի աշխույժ եր զգում: Միայն զեմքն առաջվա նման շառագունած եր և սասարիկ գեղեցկացած: աչքերի մեջ փայլում եր յերջանկության և ինքնարավականության հուրը:

Գեղեցիկ պիյեսի վերջին ակնորդները, արձագանք տալով ընդարձակ հյուրասանյակի մեջ, լուսին նրան մատների տակ և նա, թողնելով գաշնամուրի ստեղունքները, վեր կացավ տեղից: Առաջին հայացքը, վոր նա ձեզ, Զազունյանի վրա յեր, Այդ հայացքը կարծես հարցնում եր — ինչպես եր, զմ՞ն եք,

Զազունյանը վեր կացավ, մտեցավ նրան և ջերմ կերպով սեղմեց նրա ձեռքը:

— Ծնորհակալ եմ, տիկին, — ասաց նա, — շատ շնորհակալ եմ Զաքարն իրավունք ուներ: զուք հիանալի նվազում եք: Ծնորհակալ եմ:

Նա կրկին սեղմեց Սմմայի ձեռքը:

Նման բոլորովին շառագունեց և աչքերը ամոթիսածությամբ վայր թռղեց:

Եթրջանկությանն ու ինքնարավականությանը խազում եյին նրա զեմքին: Կորքման գեղեցիկ եր նա այդ բուզեյին: Ակամա հիացմունքը պաշարեց Զազունյանին:

— Բոմբո, — հանկարծ լսվեց Զաքարի ձայնը: Նա կարծես նոր ուշքի յեկավ այն հիացմունքից, վոր պատճառել եր նրան կնոջ նվազը: — Բոմբո, բոմբո, նմա... Բոավիմսիմո...

Նա վեր կացավ և մինչև անգամ սկսեց ծափանարել:

XI

Նույն որը՝ զիշերը Սմման մենակ նստած եր իր փոքրիկ սենյակում, սեղանի առջև և զրազված եր նույն որվա ձեռագործով: Զեռքերը զործում եյին, իսկ միտքն ամբողջապես զբազված եր այդ որվա տպապորություններով: Անա, առավույան վեր և կենում և առաջին միտքը, վոր ծագում ե նրա զլխում, այն ե, վոր այդ որը Զազունյանը պետք ե այցելի իրենց, և այդ զիտակ-

ՅԵՐԵՎԱՆԻՑ մի անսովոր զվարթություն, մի անսովոր ուրախություն պաշարում ենքուն։ Առա սպասում ե նու, անդազար զուրս ու տուն անում անելով, թեև զիտե, վոր Զազունյանն արդպես վաղ չեղաց, և վորքան շատ և սպասում, վորքան շատ և զուրս ու տուն անում, լուսամուտից զեպի զուրս նայում, այն գանձ անհամբերությունն ավելի յեղ պաշարում նրան։ Կերջապես, առա նու զալիս և կառքով։ Խոտած ե, ինչպես միշտ, ուզիզ, Նմեան անգամա ձեռքը դնում և կրծքին զապելու համար սրտի թրթռոցը։ միենույն ժամանակ զգում ե, թե ինչպես արյունը ըոլոր յերակների մեջ ախորժելի կերպով յեռում ե և խփում յերեսին։ Նու արագությամբ հեռանում և լուսամուտից և տեսնում ե, վոր կանգնած և հայելու առջի։ Հայելու միջից նրան նայում և քննույց և գեղեցիկ մի դեմք, ամբողջապես յերջանիկ ժպիտ կտրած։ Հետո հեռանում և հայելուց և համարյա թռչում զեպի դուռը նախասենյակում։ Հանդիպում և Զազունյանին և զգում ե, վոր առաջվա ժպիտն առաջին ևս պայծառացնում, առավել ևս զեղեցկացնում և զեմքը Զերմ կերպով սեղմում և Զազունյանի ձեռքը և հրավիրում յշորասինյակ։ Նրանց նոտած են միջյանց զիմաց։ Առա Զազունյանի այրական դեմքը, առա նրա խելացի աշքերը, վորոնց հայցացն այնքան պարզ ե և այնքան անթափանցելի յե։ առա նրա զգաստ շարժութերը, զրավիչ, հանգարս ձայնը, առա նրա մեղմ ժպիտը, վոր այնքան սաղում և նրա դեմքին, առա նրա խոռուն ճակատը, նրա հանգարս, զողղոջյուն ծիծաղը, վոր, կարծեն, նրա զեմքից յետ և քաշում մի մայլ քող և յերեան և հանում նրա մարզող ներքին աշխարհն իր ըոլոր բարեմասնություններով... Ի՞նչ քաղցր եր այն խոռակցությունը, վոր նախ քան Զաքարի գալը՝ բացվեց նրանց միջև։ Սեվ նրա զիտում վերանորոգվեց այդ խոռացցությունը։ Խոսակցության մեջ զբանական համարյա բառ առ բառ ապավորվել եր նրա ուղղում, և Յե ձեզ արգեն անային մարզու տեղ եմ ընդունում, պ. Զազունյան, և այդ պատճառով չեմ ուզում հետեւ հյորասիրության խոտապահանջ որենքներին և կարծում եմ, վոր դըս համար զուք ինձ կներեք։ Նու հիշեց և Զազունյանի պատասխանն ու հարցը և զարձյալ իր պատասխանը, և Վորովինեան զուք իմ ամուսնու բարեկամն եք, այդ պատճառով ուզում եմ, վոր և իմ բարեկամն լինեք։ Սեվ հիշելով իր պատասխանը, այժմ հանկարծ ամոթի, մի զգացում պաշարեց նրան։

«Այս ի՞նչ եմ ասեմ այս ի՞նչ եմ ասեմ» սարսափով շնչաց նու և անզգայարար շպրտելով ձեռագործը սեղանի վրա, դեմքը

ծածկեց ձեռքերով։ Նրան թվում եր, թե շատ հանդուզն և անհերելի բան և ասել, Յեկ թնջանես նա այն ժամանակ չհասկացավ, վոր նոր ծանօթին այդպիսի խոսքեր չեն ասում։ «Ավ գիտե՞ այդ խոսքերից նա ինչ յեղակացրեց» ասաց նա ինքն իրեն և ձեռքերը կամաց հեռացրեց զեմքից։ Նրա զեմքն անմեղ ամոթիսածությամբ լուր ծիծաղում եր, ևս կարճ ժամանակ մասց անշարժ, աշքերը մի կեսի հատած, հետո հանկարծ վեր թռավ տեղից։

«Վհ, այս ներելի չե, այս ներելի չե» ցած ձայնով բացականչեց նա և հեռացավ զեսի լուսամուտը, ևս բաց արեց լուսամուտի տախտակե փեղկերը և, սրբելով ապակու զոլորշին, զեսի դուրս նայեց։ Դուրս գեշերը բոլորովին մութն եր։ Լուսամուտի առջև յերեւում եյին փողոցում անկված ծառերի կատարների տակավին մերկ ճյուղերը, իսկ այն կոզմը, հեռու, զիմացի հակատները դիշերային մթության մեջ նկարվում եյին իրենց մայլ ուրվագիծերով։ Առչ վոքի լուսամուտից ճրագի լույս չեր յերեւում, վորովհետեւ բոլորի տախտակե փեղկերը փակ եյին։ Յերեւում եր միայն փողոցի լապտերը, վոր իր փայտե սյունի վրա կանգնած՝ շուրջը, շատ մոտ տարածության վրա, ազոտ լույս եր սփոռում և այդ լուսավորված տարածություն վրա փողոցի սալահատակը պղտոր ջրի գույնի յեր խփում։

«Թնջանես յերեւում և, զուրսը բավական ցուրտ եւ, ասաց նա ինքն իրեն, աշխատելով մոռանալ Զազունյանին ասած խոսքերը, վորոնց հիշելիս նրա դիմքը շարունակ այրվում եր ամոթից։ Նա ապակու միջից նայեց բարձր, յերկնքին։ «Արդյոք ամպան և, թե մառախուղով և պատաժ։ աստղեր չեն յերեւում։» Նա կամաց ճակատը կպցըրեց սառն ապակուն և այս անդամ սկսից նայել դեպի ցած, փողոցին։ «Անցուզարձը կտրվել և. վոչ վոք չի յերեւում շարունակում եր նա մոտածել ուրիշ բաների մասին, վորովհետի բոլորովին մոռանալ Զազունյանին ասած խոսքերը։ «Չե, ահա մի մարդ։ շատապով անցնում եւ Իւարկե, առուն կլինի գնալիս Տեսնես վմբանեղ և յեղել։ Յեկ այսպես, վորքան աշխատում եր ուրիշ բաների մասին մոտածել, չեր աջողվում։ Զազունյանին ասած խոսքերը համառորեն ամեն ինչ յետ եյին մզում նրա ուղեղից և իրենց միայն ուզում եյին տպավորված մաս այնանդ։

«Եհ, վերջապես ինչ ուզում եւ, թող յեղակացնի», կամաց բացականչեց նա։ «Յես այդ խոսքերը բոլորովին անկեղծությամբ ասացի և ինչմէ չպետք և ներելի լինի ինձ։ կամ այստեղ Բնչ կա ամաչելու, ինչ մի պախարակելի բան եմ ասել։»

Նա հանգստացավ և ամոթի շառապոյնը դադարեց այրելու նրա զեմքը Հեռացավ լուսամուտից և թեթև, անչսելի քայլերով սկսեց յիս ու առաջ զնալ սենյակում, Նրա աշքերն ընկած սեղանի վրա ընկած ձեռապործին, «Ծեմ առանց չափազանցնելու կասեն, տիկին»։ Չատ սիրուն և շատ սիրելի բան եւ, մասրերեց նա Զազունյանի խոսքերը և այս անգամ արդեն ինքնարավականության և անմեղ հպարտության շառապոյնը պատեց նրա զեմքը, Նա ժպտաց, ինչպես Ժպտում են անմեղ, բարեսիրայերենաները, և շարունակեց քայլել յիս ու առաջ, Այնուհետեւ նրա մտքում արագությամբ նորոգվեցին Զազունյանի զատողությանները, Այդ զատողությանները նրան անսխալ եյին թվում և ինքը կատարելապես համաձայն եր նրա հետ, «Այս, ամեն բան, ինչ վոր գոյտ թյուն ունի աշխարհին յերեսին, ուղղակի թի անուղղակի դեպի լավը, զեզի բարբին և ծառայում, ՀՀնջաց նա Զազունյանի խոսքերը, և այդ վոչ թե նրա համար, վոր ինքն անձամբ փորձված եր այդ բանում կամ, այդ հարցը խոր քննության յենթարկելով, այդ համոզմունքին եր հասել, այլ նրա համար, վոր այդ ժամանակ այզպես եր զգում, Այս, այդ ժամանակ Եման զգում եր, վոր աշխարհին մեջ ամեն ինչ լավ և բարի յի և վաս կամ չար ասած բանը գոյտ թյուն չտնի, «Մարդիկ միայն բարի յին ճնշում, իսկ չար — յերբեք հիշեց նա Զազունյանի ուրիշ խոսքերը, — և մինչև վերջն ել այզպես Թում ենա ավելացրեց նա իրենից, Մթթն սիսալ և այդ։ Սիսալ չեն, Անա իր ամուսինը, վորը նոյզնչափ լավ մարդ ե, նոյզնչափ բարի յի, վորքան և Արամիկը, Անա ուսւաղութիւնը, հայ խոհարարը, հայ ծառան, զրանք բոլորն ել լավ և բարի մարդիկ են, Նոյզնչես և այդ միենույն տան հարեան բնակիչները, զրանց մեջ վոչ վոք վատ և շար մարդ չկա։ Նոյզնիսկ այն ուշացած պարուն, վոր փոքր ինչ առաջ փողոցում շտապ անցնում եր, նա ել շատ լավ և բարի մարդ եր յերեւմ։ Վերջապես... ինքը — Զազունյանը... Մթթե նրանից ել լավ, բարի, խելոց, աղնիվ, քաղաքավարի, սիրելի և... պեղեցիկ մարդ կա աշխարհին յերեսին... Ամենքը, ամենքը լավ և բարի յին, Յեկ ինչժե բարի և լավ չպետք ել լինեն, քանի վոր կյանքն այնքան քաղցը և սիրելի յի, Նրա աշքն ընկազ պատեց կախված մի գեղաններկ նկարի վրա։ Նկարը ներկայացնում եր մի կաթոլիկ քահանա՝ սաստիկ հաստ փորով և շաղ, սափրած կըորիկ զեմքով, Նա կանգնած եր զինու տակառի տաջն և ձեռքին կարմիր զինով կիսալից մի բաժակ բռնած՝ հիացմունքով նայում

եր նրան լույսի վրա, նմման նայելով այդ նկարին, հանկարծ ձիգեղեց,

«Ան այդ քահանան ել անշուշտ շատ լավ, բարի և զվարճասիր մարդ ողեաց ել ինի. Ի՞նչ վասա, վոր գինի շատ և սիրում. մգ շունի վորոնե պակասություն...»:

Ժամանակ նա շարունակեց յետ ու առաջ քայլել սենյակում Կաթողիկ գինեմոլ քահանան մոռացվեց, և նա շարունակեց մոտերել այդ որվա յեղելությունը, վոր նրա համար ամեն բանից քաղցր եր, Ան ճաշը, Ի՞նքը նստած և ողիղ Զաղունյանի ղիմացը և... նայում և նրան Ի՞նչ լավ եր նրան նայելը, Թեև սեղանը շատ առատ եր և կերակուրներն ամենահամելու, բայց ինքն ախորժակ չուներ ուստեղու... Բակ Զաքարի թուչ ձիգաղելի յեր, մանավանդ թուղթ խաղալիս նա մոտերեց Զաքարի կոմիքական անքափականությունն իր անաշողությունից և ձիգաղեց, Չե, Զաքարը շատ ձիգաղելի յե, շատ... Ան և գաշնամուրի առջև նստած՝ նվազում և, Ի՞նչ եր այն... Մցցարտ... Շնորհերա... չե, Բեթանիկն, Բեթանիկն... Ի՞նչ սքանչելի բան եր... կարծես ինքը չեր նվազում, այլ մի աներեսոյթ ույժ մտել եր նրա մատների մեջ և խաղում դաշնամուրի ստեղունցների հետ: «Շնորհակալ եմ, տիկին, շատ շնորհակալ եմ. դուք հիմնալի նվազում եք: Շնորհակալ եմ», հիշեց նա Զազունյանի խոսքերը և նրա սիրուն յերջանկությամբ մարեց: «Դուք հիմնալի նվազում եք», Միթե այդ լոկ հանոյախոսություն եր, վորպիսին շույլում են աղամարդիկ կանանց առջև, Վճէ, վճէ, նրա մեջ քծնանցի մի գիծ անդամ չկա և նա լոկ քաղաքավարության համար չեր կարող հանոյախոս լինել: Միթե ինքը իր աչքերով շահսավ, թե վորթան խոր զգացված եր նա. նրա հայացքի յուրաքանչյուր զիծը, ձայնի յուրաքանչյուր յելնենջը հիացմունք և շնորհակալություն եր արտահայտում:

Նմման նորից մոտեցավ լուսամուտին և այտն առաջվա նման սեղմեց ապակուն:

«Ա-ի, Ի՞նչ, լավ ե՞... անհուն քաղցրությամբ շշնջաց նա և մակուդ աչքերը փակեց:

«Մեկ, յերկուս, կարծես յերազում համարեց նա ժամացոյցի ձայնը, վոր զալիս եր հարևան սենյակից: Հանկարծ աչքերը բաց արեց, այտը հեռացրեց ապակուց և ականջ զրեց:

«Միթե յերկուսն են շշնջաց նա զարմացած: «Այսովէս արտահայտված գիշերը... Բակ քունս չի զալիս... Զարմանալի յե...»: Նա

փակեց լուսամուտի փեղկերը, գնաց նստեց և շարունակեց ձեռպործը:

Ու մտածունքները նորից պաշարեցին նրան:

Վերջապես նրա աշխերի կոտերը սկսեցին ծանրանալ. քունն արտգությամբ սկսեց ազուտացնել նրա քաղցր մտածմունքները և թմրեցնել նրա մարմինը. Զեռագործը մի կողմ դրեց, խառնված աշխերը ձգեց առաստաղին և յերջանիկ ժամփը գեմփին՝ հորանցեց, սիրուն կերպով բաց անելով փոքրիկ բերանը:

«Մեկ, յերկու, յերեք» համարեց նա ժամացոյցի զարկերը, վերկացավ, ճրացը հանգրեց և գնաց ննջարան:

Իր անկողնում պատկամ եր Զաքարը, Այնովեն խորն եր քնած, վոր յեթի թնդանոր անզամ արձակելին, թվում եր, թե դարձյալ չեր արթնանա և ամպի լույսում ընկնում եր նրա զեմքին. Սմման ակամա կանոն առավ նրա անկողնակալի տաղեւ և սկսեց զննարար նայել նրա զեմքին. Տե՛ր աստված, Բնչ սարսափելի, մեծ և նրա քեթը... իսկ պնչերն ինչպես անհոռնի կերպով լայնանում են և անախորժ շշյունով ներս են ձեռմ ողը... Հապա ճակատը, — Բնչ նեղ և անհոռնի յե... հապա մորթեցը, բոխերը, հոնքերը, զիմի մազերը ինչպես վաս խճճվել են... հապա զեմքը... հապա...

Բնչ-վոր վաս զգացմունք զողի նման ներս սողաց Սմմայի սիրուը և նա ակամա զզվանով շրջեց զեմքն ամուսնուց. Բայց նույն ըռպեկելին, կարծես ընազդմամբ, հասկանալով, վոր այդ լավ չե, նա ի ներքուստ ինքն իր զեմ կատաղեց և անկոչ զգացմունքը խլացրեց իր մեջ. Աըսդ մատեցավ լամզին, լոյսը ցածացրեց, դոզզովյուն ձեռքերով հանվեց և պառկեց իր անկողնի մեջ ինչ-վոր վաս, շատ վաս նախազգացումով...

XII

Հետեյալ որը Սմման, մատրերելով դիշերվա իր դրսթյունը, շատ զարմացավ. Առաջին անգամն եր, վոր մի որվա տպավորությունները այդ աստիճան զրադեցնում եյին նրա միտքն ու սիրու և նա վորքան աշխատում եր վորենե բացաարություն տալ այդ յերեսոյթին, մոռմ եր տարակուսած. Վոչ մի պատճառ չեր զըսնում, վոր հավանական լիներ. և այդ պատճառով նրա տարակուսանքն ավելի մեծանում եր. Այն ինչ այդ որը նա իրեն տիրուր եր զգում, առանց վորենե ակնհայտ պատճառի. Նախորդ որվա անզուսպ ուրախություն հետքն անզամ չկար նրա մեջ. Մի ինչ-վոր ծանր, զան զգացմունք ճնշում եր նրա սիրուը.

Նազգում եր, վոր սովորական տիտղոսակով չե խմում պոռավոտ-
յան թեյը, սովորական ախորժակով չե ուսում նախաճաշը։
Ամուսնու կատակները նրան դյուր չեցին գալիս Մինչև անգամ,
յերբ առավոտյան հազցեում եր Արամիկին, մայրական այն խան-
գավառ սիրով շնորհուեց նրա վիզը, ճնուտի տակ, ինչպես ուրիշ
անգամներ։ Ազախնի և ծառայի վրա ինչ-վոր աննշան պատճեռով
մի քանի անգամ բարկացավ, վոր առաջ չեր պատճեռում։

Այդ որն իր և Արամիկի համար մի քանի բաներ ուներ զնե-
լու ժամը տասն և մեկն եր, Առաջ Արամիկի ձեռքը և զորս
յեկավ տանից։ Դվորցովայա փողոցի վրա մտավ մի խանութ։
Խանութը մի ներ կամարով բաժանված եր յերկու մասի Առաջին
մասում շահյին հարկավոր իրերը նրան հրավիրեցին յերկորդ
մասը։ Նա արդեն գնել եր, ինչ վոր հարկավոր եր, և նայում եր
այնուեղ զարսած մանր-մուսր առարկաներին, յերբ հանկարծ
խանութի առաջին մասից լսվեց Զազունյանի ձայնը։

Կարծեմ այստեղ նվիրատվություն և ընդունվում մի շքա-
վոր ընտանիքի ոգախն, — առում եր նա։

— Այստեղ և ընդունվում, — յեղավ պատասխանը։

— Անդրեմ նվիրատվության ցուցակ։

Եմման հիշեց, վոր յերկու որ առաջ լրազրում մի լուր եր
տոպված, վորով հրավիրում եյին բարեզործների ուշադրությունը,
թե այս ինչ խանութում մի շատ շքավոր ընտանիքի ոգախն
նվիրատվություն և հավաքվում։ Նա նայեց զեսի խանութի
առաջին մասը, բայց մի քանի զնորդ կանայք և բաժանող կա-
մարի պատը խանդարում եյին նրան տեսնելու Զազունյանին։
Սակայն մի քանի բազեյից հետո Եմման տեսավ նրան, յերբ նա
արդեն զուրս եր զնում խանութից, նա շտապով մի քանի անր-
մուսր բաներ ել զնեց և Արամիկի հետ զուրս յեկավ խանութի
առաջին մասը։

— Զքավոր ընտանիքի ոգախն այստեղ և ընդունվում նվի-
րատվությունը, — հարցրեց նա մի գործակատարի։

— Այս, տիկին։

Եմման հանեց հինգ ուորլիանոց մի թղթաղրամ, անխոս
տվեց նրան, և առնելով Արամիկի ձեռքը, ոզում եր զուրս զնալու։

— Զսորուազընցք, տիկին, — քաղաքավարությամբ նկատեց
նրան գործակատարը, բաց ցուցակն ու զրիշը առաջարկելով նրան։

Եմման առավ զրիշը և, նախ քան ստորագրելը, կարդաց վեր-
շին նվիրատվությունը, վոր ինչպես յերեւում եր, Զազունյա-

նինն եր. «Կոմ» — 20 ռ.ր. Նա շտապով հանեց գործյալ հինգ սուրլի, ավեց գործակատարին և ստորագրեց. «Մի տիկին» — 10 սուրլի։ Այնուհետեւ առանց նայելու գործակատարին, առանց նայելու իր շտրջը կարծես ամաչելով, վերցրեց զնած իրերն, առավ Արամիկի ձեռքը և շտապ գուրս զնաց խանութից. Ինչվոր ախորժելի հուզմունք պաշարել եր նրան, մաքերը խառնվում էրին նրա զլիում, և նա զգում եր, թե դեմքն այրվում և շահագունով։

Դեռ ևս վազ եր, նա չուզեց այդպես շուռ տուն զառնալ և, Արամիկի ձեռքից բռնած, անցավ զեզի պալատ։ Պալատի առջև ծառուղիի ծայրին տեսավ Զազունյանին, վարը մի կողմ քաշված՝ խոսում եր մի պարոնի հետ։ Սմման մտացավ նրան և պետք եւ անցներ նրա մոտով, առանց հույս ունենալու, թե նա կտեսնի իրեն, բայց նոյն բողեյին Զազունյանն, յերեկի վերջացնելով խոսակցությունը, սկզմեց խոսակցի ձեռքը և ողում եր անցնել մինեւոյն ուղղությամբ, ինչ վոր ծմանն։

Նա ահասվ Սմմային և իսկույն մտացավ նրան։

— Բարեւ ձեզ, տիկին ներեցեք, քիչ եր մոռմ անցնեցի տունց ձեզ նկատելու, — ասաց նա ջերմորեն սեղմելով նրա ձեռքը։

— Դուք այնպիս տոք խոսակցության մեջ եյիք այն պարոնի հետ, — ասաց Սմման մոլուրով։

— Այս, — պատասխանեց Զազունյանը, կսմանլով Արամիկի թշիկը։ — Իմ փաստաբանն եր, վորին հանձնել եմ գործա։

— Հազար ասում եյիք, թե գործն այնքան ել զգվարություններ չի ներկայացնում ձեզ համար։

— Ինչ ուզում եւ լինի, տիկին, զատարանի հետ փոքր իշտեն խճճված գործ ունեցողը առանց փաստաբանի վոշինչ չի կարող անել Յես տեղեկացաց, վոր հակառակորդներս ուզում են գործն ավելի խառնել, այնպես վոր վախճնում եմ, թե մի զուցե պատրաստություններ չտեսած տանուլ առաջ գործը։

Եեվ նա համառաւ, ընդհանուր զծերով սկսեց պատմել գործի եյլ թյունը։

Դանդաղ քայլերով նրանք առաջ եյին զնում, Սմման զգում եր, թե ինչպես կամաց-կամաց անցնում եւ իր անորոշ տիրությունը և յերեկվա նոյնպես անորոշ ուրախությունը նորից պաշրում երեն։ Զազունյանի պատմելու ժամանակ նա յերբեմն ակամա զննողական հայացքով դիտում եր նրան և ամեն անզամ ներքուստ մի տեսակ գոհունակություն եր զգում, տեսնելով նրա

պատկառելի և պրավիչ արտաքինը, վորով աղամարդկանցից շատ քչերն են լինում ուժոված։ Նա մինչեւ անզամ մի տեսակ հպարտություն եր զգում, յերբ տեսնում եր, վոր անց ու զարձ անող համարյա բոլոր կանայք մի առանձին հայացքով եյին նայում Զազույանին, իսկ նրա հետ և իրեն, և այդ հպարտությունն ավելանում եր ավելի այն ժամանակ, յերբ տեսնում եր, վոր Զազույանը, բացի իրենից, վոչ վոքի ուշադրություն չի զարձնում, իսկ շատերին բոլորովին չի յել նայում։ Ենի իրավ, Զազույանն անցնելով Սմմայի հետ, այնպիսի սիրով և իրեն հատուկ զգացած քաղաքավարությամբ եր խոսում նրա հետ, վոր կարծես այն ահազին մայթի վրա, բացի նրանից, վոչ վոքի և վոչինչ չեր տեսնում։ Յերեսում եր, վոր սովորականից ավելի լավ տրամադրության մեջ։ Եր Խորակցությանն յերբեմն այնպիսի սրամիւ և թեթև կատակի ձեւ եր տալիս, վոր Սմման ակամա ծիծազում եր, Բնավորության այդ մի գիծը թեև նա առաջ ել նկատում եր Զազույանի մեջ, մասնավունդ Զաքարի հետ ունեցած խոսակցության ժամանակ, բայց այժմ այդ գիծը նրան ավելի յեր աշխի ընկում և ավելի յեր զրավում նրան, թեև Զաքարը վոտից ցպլոխ կատակ եր, բայց նա յերբեմն այնպիսի անհամ կատակներ գիտեր անել, վոր լսողը ծիծազում եր նրան համար միայն, վոր այդ կատակները անհամ եյին, այն ինչ Զազույանի կատակները լինում եյին այնքան սրամիս, յերբեմն հնդկական, թեթև, թոռցիկ և անոպասնելի, գլխավորը — անսպասելի, վոր լսողն ուղերձուզեր պետք և անպատճառ հիացման ժպիս արտահայտեր, Ենի այդ կատակները վոչ թե խանգարում, այլ ընդհակառակը, մինչեւ անզամ մի տեսակ ներդաշնակության եյին տալիս նրա լուրջ և զգացած բնավորությանը։ Համեմուկ «Քաղաքային ժողովարանին» նրանք դարձնու և նույն դանողադ քայլերով սկսնեցին յետ դառնալը։

Ազնվականների ժողովարանին առջև լայն մայթի վրա, Զազույանը հանկարծ տեսավ այն զինվորականին, վորին մի քանի որ առաջ գիշերը հանդիպեց հյուրանոցի ասնզուղին վրա։ Զինվորականը գալիս եր զիմացից մի գեղեցիկ մանկանասակ կնոջ հետ, բայց վոչ այն, վորի հետ այն զիշերը տեսավ նրան Զազույանը։ Ինչպես յերեսում եր, նու դեռ հեռվից եր նկատել Զազույանին։ Այն ինչ Զազույանը նրան տեսավ այն ժամանակ, յերբ նա իրեն ուղեկցող կնոջ հետ նրանից մի քանի քայլ հեռավորությամբ պետք և անցներ նրա մոտով։ Զինվորականը նայելով նրան՝ ձեռքը մտացը եց զիմարեկին իրը բարենի նշան,

ըայց նույն վայրելյանին Զազունյանն արագ շրջեց դեմքը առանց պատասխանելու նրա բարեին, ցույց տալով, թե չտեսավ նրան:

Սմբան տեսավ այդ և յիս նայեց զինվորականի կողմը:

— Այն զինվորականը, կարծեմ, ձեզ բարենց, ող. Զազունյան, — ասաց նու:

— Վեր զինվորականը, — շփոթված հարցրեց Զազունյանը և, փոխանակ յիս նայելու, դիտմամբ նայեց այս ուժայն կողմը:

— Անս նոս, վոր զնում եւ այս կնոջ նետ:

Զազունյանը, ըստ յերեսոյթին ցոյց տալու համար միայն, վոր ուզում եւ տեսնել, թե այդ ինչ զինվորական եր իրեն բարեվողը, յիս նայեց և նույն բովելին ել դեմքը դարձրեց:

— Հետ, — ասաց նու հանգիստ ձայնով: — Տեսնա:

Այնինչ Սմբան նկատեց, վոր նու անսավ զինվորականին, բայց դիտմամբ չպատասխանեց նրա բարեին: Ակամա հետաքրքրությամբ նայեց Զազունյանի դեմքին և նկատեց, վոր շփոթված և մռայլված եւ Ծեկ մի քանի բռպէտ առաջ այնքան պարզ և հասկանալի այդ մարդն այժմ իր շփոթված և մռայլ դեմքով այն աստիճան մերթ և խորհրդավոր եր յերեսում նրան, վոր թվում եր, թե վոչ մի կերպ չեր կարելի թափանցել նրա հոգին իմանալու համար, թե ինչ և կատարվում այնտեղ: Սակայն Զազունյանի մեջ կատարված այդ փոփոխությունն յերկար չտևեց: Կարծես հանկարծ ուշքի գալով, վոր իրեն ակամա կորցրել եր, նա բռնի կերպով տիրապեսեց իրեն և վերստացավ իր առաջքա արամազդությունը: Սմբան գարձալ ակամա զննողաբար նայեց նրա դեմքին և զարմանագով տեսավ, վոր նրա հանկարծակի փոփոխության հետքն անզամ չկա: Նույն խելացի, նույն հանգարտ և մերթ ընդ մերթ նույն քաղցրությամբ ժպտող դեմքը, վոր այնքան ծանոթ և ակամա զրավում եր նրան: Կորցան Սմբան մտ եր ծանոթանում, խորը դիտում Զազունյանին, այնքան այդ տարրինուկ մարդը նրան զարմանալի և անհասկանալի յեր թվում: Վոչ մի կերպ չեր կարողանում նրա մասին մի ճիշտ, ամփոփ զաղափար կազմել, վորպեսզի նրա հետ ունեցած իր հարաբերությանը համարձակորեն տար այն յեղանակը, վորին, թեև տակամին անորոշ, բայց ձգուում եր նրա սիրաց: Այդ մարդը մեջ հենց սկզբից նա շատ մութը կերպով տեսնում եր մի բան, — բնչ — ինչն ել չգիտեր, — վոր ակամա ստիպում եր նրան փոքր ինչ դոպված մնալ և մինչև անզամ նայել նրա վրա... կասկածանքով: Ծեկ արդյուք լմզ եր այդ մի բանը, թե վատ, — հենց

այդ եր, վոր նա չգիտեր և թվում եր, թե յերբեք ել չի գիտնալ։
Բաժանվելիս Զազունյանն ասաց։

— Այս գիշեր «Հայուհաց» Բարեգործական Ընկերության
ոգտին կոնցերտ են տալիս, դուք այնումն կլինեք։

— Չգիտեմ, ճշմարիտ, — պատասխանեց Նման։ — Ենքն Զա-
քարը տոմսակ լինի վերցրած…

— Են չեմ կարծում, թե նա գեղի բարեգործական նպա-
տակն անտարբեր զտնվի, — ասաց Ժողովարք Զազունյանը։

Նման հիշեց խանութիւնցը և կարմրեց։

— Են ել չեմ կարծում, — պատասխանեց նա նույնով ապառալով։

Զազունյանը սեղմեց նրա ձեռքը, նորից կսմանց Արամիկի-
թշիկն ու հեռացավ։

Նման մի քանի անգամ յետ նայեց նրան, ինքն ել չիմա-
նալով ինչու, և Արամիկի հետ զիմեց զեղի տուն։

XIII

— Զաքար, այսորվա կոնցերտի համար տոմսակ վերցրել ես։

— «Հայուհաց» Բարեգործական Ընկերության ոգտմն, Ինչ-
պես չեմ յերեք հաս։ Ճեկը քեզ համար, ճյուղն ինձ՝ յերբորդը
Զազունյանի համար։ Են զիտեմ, վոր տոմսակ վերցնելու հա-
մար նա ժամանակ չի անենա։

— Դու ի՞նչ զիտես. զուցե նա քեզանից առաջ և վերցրել։
Են այսոր պատահեցի նրան և առաջին անգամ նա հիշեցրեց
ինձ այդ բանը։

— Համ, պատահեցիր, Դե, ինչ անենք, թող վերցրած լինի,
թող մի տոմսակ ավել լինինք վերցրած, նպատակը բարեգործա-
կան և, — իրեւ թե Արամիկին ել հետոներս ենք տարել։ Տոմսակը
վերցնելուց հետո անցա Զազունյանի կողմը, բայց նրան չգտա
հյուրանոցում։ Մտադիր եմ յերեկոյան ել անցնել, — այն կողմը
զործ ունեմ, — այդ ժամանակ նա անպատճառ տանը կլինի.
Կվերցնեմ հետո, կզանք, թեյ կխմենք, իսկ հետո միտախն կդնանք
թատրոն։ Ի՞նչպես եր, հավանեմ ես ծրագրը։

Նման նայեց նրա բարի, ժպտուն աչքերին և ծիծաղից։

— Հավանում եմ, — ասաց Նա ուզեց պատմել խանութիւնում անցքը,
բայց ամոթի նման ի՞նչ վոր մի զգացմունք ստիպեց նրան լոել։

Ծաշից հետո՝ իր սովորության համեմատ կուզտ քննելով, Զա-
քարն յերեկոյան դուրս գնաց իր «ծրագրի» համեմատ զործելու։

Սմման սպասում եր, վոր նա անպատճառ կզա Զագունյանի հետ, բայց նա մենակ վերադարձավ:

— Են հուսահատված եմ, Սմմա, — մանելոն պես՝ ասաց նա: — Այսակղից ուզգակի զնացի Զագունյանի մոտ, առաջը չպատճենութեացի զործիս և վերադառնալիս զարձյալ անցա նրա կողմը, — զարձյալ այնանդ չեր, Սպասեցի մոտ առան բռպի, — չեկավ: Ճարահասայալ, առա, զալիս եմ մենակ, Ի՞նչ արած, սիրելիս, առանց նրան պետք ե զնանք: Յեթե նա զալու յե, ի՞նչը կզա, բայց յես ուզում եյի, վոր միասին զնայինք և միասին նստեյինք:

Կինը սառնությամբ, կարծես վիրավորված, նայեց նրան և վոշինչ չպատասխանեց: Մինչև Զագարի զալը, յերբ նա սպասում եր, վոր Զագունյանը կզա նրա հետ, մեծ ցանկություն ուներ կոնցերտ զնալու, բայց այժմ այդ ցանկությունը մի ակնթարթում անցավ:

Մինչև թեյ խմելը Խմման դես հազնված չեր: Նա այնպիսի զանդաղությամբ եր խմում թեյը, վոր կարծեն բոլորովին մտադիր չեր այդ զիշեր տանից գուրս զնալու: Զագարը, վոր թեյը տառշը զբան՝ զբաղված եր այդ որվա լրազբների ընթերցանությամբ, հանկարծ հանեց ժամացույցն և նայեց:

— Պահ, ժամը շուտով ութը կլինի, — բացականչեց նա: — Սմմա, ի՞նչ ես անում, վես հազնվիր ե: Դեր զու թեյդ ել չես վերջացրել:

— Ի՞նչ եմ շուտապում, վերը ի՞նչ ուզ զնանք, ի՞նչ կա վոր, — պատասխանեց Սմման:

— Մի վախեիր, առանց այն ել ուշ կզնանք: կես ժամ և մոռմ: Մինչև կնազնվես, մինչև կզնանք, արդեն բավական կուշանանք: Շատապիր, շտապիր:

Սմման, չնայելով ամուսնու խոսքերին, շարունակեց գունդաղությամբ խմել թեյը: Սակայն այդ բաժակը շուտով վերջացրեց, կամաց վեր կացավ և զուրս զնաց հազնվելու: Հայելու առջև կանգնած՝ հազնվում եր զանդաղությամբ: կարծես նրա համար միենալոյն եր, վոր կորսեթը լավ չսեղմեց, վորից և իրանն ու կուրծքը լավ ձև չստացան: Նույնակես ուշազբություն շգարձեց և հագուստի մի քանի մանր-մունը բաների վրա, վորոնք, չնայելով իրենց աննշան լինելուն, ուրիշ անդամներ կատարելապես պատկում եյին նրա զեղեցիկ արտաքինը: Հագուստը վերջացնելով, ծածկեց զիլին բամբակի զունդ-զունդ զործած սպի-

տակ շամը, վերցրեց ձեռնոցներն և ուղարմ եր գուրս զնալ, յերբ Հանկարծ նրան թվաց, թե Զազունյանը կոնցերտում կլինի, Յեզ իսկապես, յեթե նա կոնցերտ չպետք ե զնար, ել ինչու յեր այդ որը հարցնում Եմմային թե նրանք ոլլուք ե զնան, Շալը շտապով վերցրեց գլխից, ձեռնոցների հետ շորտեց աթոռի վրա և այս անգամ սկսեց զննողաբար նայել իր հազուսաբն, զեմքին, մազերի սանրվածքին, Դեմքը ժապում եր և ասում ինձ կատարելապես վշտինչ հարկավոր չե, բայց հազուսաբն և մազերի սանրվածքի պակասություններն իսկույն աշքի ընկան: Ուզգեց ինչ վոր հարկավոր եր, մի քանի անգամ շուռումուռ յեկազի հայելու առջև, վերցրեց շալն և այս անգամ ծածկելու վրա յեր, յերբ հարեան սենյակից լսվեց Զաքարիի վառների ձայնը և նու ներս մտավ շտապով:

— Եմմա, ինչ ես անում, Ե, չվերջացրի՞ր, — ասաց նա,

— Վերջացրի, վերջացրի, — պատասխանեց ժապալով Եմման:

Դայտկին Արամիկի վերաբերմամբ մի քանի պատվերներ տալով, նրանք դուրս գնացին, նստեցին մի կառք և զեմեցին զեպի «Քաղաքացա, ին թատրոն»:

Կոնցերտի նպատակը բարեգործական լինելով, թատրոնը լի յեր հանդիսականներով, վորոնց թվում, բայցի հայերից, կային և բավականաշափ ստարագիններ, վորովհետև կոնցերտին մասնակցողների մեծ մասը ոպերայի յերգիշյերգչուներներ եյին: Կոնցերտի առաջին բաժինն արդեն սկսվել եր, յերբ Զաքարն ու Եմման ներս մտան դահլիճը, Բարեբաղդաբար նրանց համարներն աթոռների շարքի ծայրում եյին և նրանք առանց ուրիշներին անհանգություն պատճառելու, նստեցին իրենց տեղերը: Եմման ըոլորովին ուշադրություն շղարձրեց, թե բեմի վրա ով և յերգողը և ինչ են յերգում, այլ նստելուն պես աշքերով սկսեց վորոնի Զազունյանին: Նա զիսեց առջևի և յետենի շարքերը սկըզբեց մինչև վերջը, բայց Զազունյանին չտեսավ: Նայեց և սթյակներին, կարծելով, թե զուցե այնտեղ և նստած, բայց այնտեղ ել Զազունյան չկար: Համոզվելով, վոր Զազունյանը կամ դեռ չի յեկել կամ ըոլորովին չի զա, նա աշքեն ուղում եր դարձնել զեպի բեմը, յերբ հանկարծ ոթյակներից մեկի մեջ տեսավ այն զինվորականին, վոր այդ որը փողոցում Զազունյանին բարեւպիեց, բայց վորին Զազունյանը չտեսնելուն ավեց: Զինվորականը նստած եր յերկու զեղեցիկ կանանց հետ և, ըստ յերեսոյթին, մեծ ուշադրությամբ նայում եր բեմին: Եմման մտարերեց

Զազունյանի այդ որվա շփոթված ու մռայլ դեմքը և այդ զինվորականի ներկայությունը նրան շատ անախորժ թվաց, թեև բոլորովին չպիտեղ, թե ով եր նա: Այդ որվա հանգիստումից այս քանի միայն յեզրտկացրեց, վոր Զազունյանի և այդ զինվորականի միջն ինչ-վոր կա, վոր շատ ուստիորժ և Զազունյանի համար: Այսմ կործեց, թե զուցե Զազունյանն յեկել եր, բայց ահանելով, վոր զինվորականն այստեղ և, հեռացել եթ, վորոցին չտեսնի կամ չհանգիստի նրան: Նա սաստիկ տիեզեց, Մինչև անգամ ասելու թյան նման մի զզացմանք շարժվեց նրա սրտում զեզի այդ անծանոթ զինվորականը, Նա չիմացավ, թե ինչ յերգեցին և ինչպես վերջացավ կոնցերտի առաջին բաժինը: Վարագույն իջավ, շուրջն սկսեցին ծափանարել և ըրուավձև, «բիւ զոռալ»:

— Ի՞նչ ես ծափանարում, — զժզոնությամբ ասաց նա ամուսնուն, վորը համարյա ամենից յեռանդով եր ծափանարում:

— Ի՞նչպես շծափանարեմ, քանի վոր ուս յերգչուհին հայերեն «Նոր», ինչ անուշ՝ յերգեց, — հեացմունքով պատասխանեց Զաքարը և շարունակեց ծափանարել:

Վարագույրը բարձրացավ, յերգչուհին դուրս յեկավ, ժպատկով ովես տվեց և, չնայելով ամեն կողմից լսվող «բիւս-երին», նորից հեռացավ: Վարագույրը նորից իջավ:

— Ի՞նչ, չծափանեցի՞ր, — հարցեց Զաքարը կնոջը, յերբ դաշիճը խաղաղեց:

— Ի՞նչ կար հավանելու, յես չեմ համեստում, — պատասխանեց կինը:

— Ի՞նչպես թե, ինչ կար հավանելու, — բացականչեց զարմացած Զաքարը: — Հրաշալի բան եր, ի՞նչ ես ասում, հրաշալի բան «Box սու այսու»:

Ենք նա իր սովորական շափականցություններով սկսեց բացատրել, թե ինչու և ինչով եր հրաշալի ուսու յերգչուհու հայերեն յերգած «Box սու այսու» յերգը:

— Դուրս չես զալիս, — հարցըրեց նա կնոջը,

— Կոչ, նոր չեկմնը, — պատասխանեց կինը:

— Լավ:

Զաքարը վեր կացավ և մենակ դուրս գնաց զաւլիճից:

Նման մաց նստած: Անուշազիր և տիուր հայացքով նայեց եր շուրջը, մեծ մասամբ զատարկ աթոռներին, վորովհետեւ հանգիստականների մեծ մասը դուրս եր զնացել զաւլիճից, նայեց և

ծանոթ ոթյակին, վորպեսզի լուվ տեսնի, թե այն ինչ մարդ է, վորից Զազունյանն այնպես խորշում է. բայց ոթյակը պատարկ էր. զինվորականը յերկու կանանց հետ դուքս եր գնացել. Սմման սկսեց մտածել. թե ինչ կառ կարող եր լինել զինվորականի և Զազունյանի միջն, արզյոք ինչ տարածայնություն, անախորժություն եր պատահել նըսանց միջն, վորի պատճեռով Զազունյանն այնպես խորշում եր նըսանից և միջն անգամ չեր ուզում պատասխանել նըսա բարեին. Գուցե մեղավորը Զազունյանն եր, վոր այնպես խորշում եր այդ զինվորականից, ապա թե վոչ ինչու պետք և խորշեր նըսանից, յեթե մեղավորը նա լիներ, Ինչեւ չե. կարող և մեղավորը և այդ զինվորականը լինել գուցե այդ մարդը Զազունյանին այնպիսի ծանր վիրավորանք և հասցըեւ վոր նա վոչ մի կերպ չի ուզում նըսան ներեւ. Սմման մտարերեց Զազունյանի շփոթված և մասյլ զեմքը և տեսավ, վոր զա մեղավոր մարդու զեմք չեր, այլ սասահիկ վիրավորված, սասահիկ անպատճած մարդու զեմք, վոր իրեն հասցրած վիրավորանքի և անպատճության հետ վոչ մի կերպ չի ուզում հաշտվել.

Տեսնելով, վոր մտքերն ու յենթադրություններն իրեն շատ հեռու յեն տանում և վոչ մի բավարար յեղբակացտթյան չեն հասցնում, քանի վոր ինքը փաստն ել տակավին յենթադրություն և, նա այլևս վոչինչ չուզեց մտածել, վեր կացավ և դուրս գնաց դահլիճից. Բայց վարքան յեղավ նըսա զարմանքը, յերբ տեսավ իր ամուսնուն մի կողմը քաշված՝ այն զինվորականի հետ բարեկամարար խոսելիս Սմման յերբեք չեր կարող յերեակայել, թե Զաքարը նըսա հետ վորնե հարաբերություն կարող ե ունենալ, քանի վոր Զաքարը վոչինչ չեր ասել նըսան, թե մի այդպիսի ծանոթ կամ բարեկամ ունի, այն ինչ նըսանց խոսակցության ձևը ցույց եր ատլիս, վոր նըսանք նոր ծանոթներ չերին, այլ հին բարեկամներ: Նա ուզում եր և մտահենալ նըսանց և շե, վորովհետև զինվորականը, ներկայանալով տակավին իրեւ մի խորհրդավոր անձնավորություն, և հետաքրքրում եր նըսան, և ատելության զգացմունք ներշնչում, թեև ինքն ել պարզ շգիտեր, թե ինչ բանի համար: Սակայն նա մասց այնտեղ, վորտեղ կանգնած եր, Ավելի լավ համարեց սպասել, մինչև վոր Զաքարը կվերջացնի խոսակցությունը և կմոտենա իրեն. այնուհետև նըսանից տեղեկություն կհարցնի այդ զինվորականի մասին: Զաքարը զինվորականի հետ խոսում եր մեջքը կողմ կողմ արած, ապա թե վոչ Սմման կարծում եր, վոր յեթե նա տեսներ իրեն մենակ

կանգնած, իսկույն զինվորականին կը բերեր և կծանոթացներ իր հետ։ Այն ինչ զինվորականը կանգնած եր զեմքը։ Նրա կողման արած և, շնորհելով վոր խոսում եր Զաքարի հետ, բայց աշքերը շարունակ նրա կողման ուներ Սմմային թվաց, թե զինվորականը ճանաշում է իրեն, վորովնետե այդ, որը տեսավ իրեն Զազունյանի հետ զբոսնելիս։ Բայց նրա հայացքն այնպիս սուր ու համառ եր, վոր Սմման ակամա շփոթվեց և աշքերը շրջեց որիշ կողմը։ — զինվորականը նրան շատ լիրը և ավելի տարիշ թվաց Սմման այժմ սկսեց զիտել առջեր զրունակ հանդիսականներին և նրա աշքերն ընկան այն յերկու կանանց վրա, վորոնց հետ հստած եր սթյակում զինվորականը։ Նա զննողաբաց նայեց նրանց, նրանք յերկուուն ել ուստ եյին յերեռում, միջին տարիքով, բայց իրենց տարիքեց արհեստական միջոցներով յերիտասարդացած։ Նրանք հեռվեց թե՛ն զեղեցիկ եյին յերեռում, բայց մոտիկից փորձառու կնոջ աշխն իսկույն տեսնում եր, թե արհեստական յերբեմն ինչպիսի հմտությամբ կարողանում է մըսել ընականի հետ։

«Ո՞վեկը են արդյոք», մտածում եր Սմման, աշքերը չենացնելով նըանցից, «Նրա բարեկամներն են, թե մեկը կին և, մյուսը — քոյլը կամ թե...»։

Սմման զզվանքով դեմքը շրջեց նըանցից, զարձավ և մտավ դաշնին։

XIV

Նա հոյսը բոլորովին կտրեց, թե այդ զիշեց թատրոնում կտեսնի Զազունյանին, Նա այլևս չեր կասկածում, վոր Զազունյանը կամ բոլորովին չզկետք և զոր թատրոն, կամ թե՝ յեկել եր և, տեսնելով, վոր զինվորականն այնտեղ և, հեռացել եր անմիջապես։

Նա այլին չեր ուզում մնալ, ուզում եր դուրս գնալ և տեղ տմունուն, թե զգուիը ցավում ե, տուն զնան, բայց ավելի լավ համարեց լսել կոնցերտի յերկրորդ բաժինն ել և հետո տուն զնալ մանավանդ վոր արզեն զանգը ավելի և հանդիսականներն սկսեցին ներս գալ Ներս մտավ և Զաքարը։

— Հը, մենակ չձանձրացմը, — հաբըց նա, նստելով կնոջ կողքին։

— Այն մեմ հետ եյիր խոսում, — պատասխանի տեղ հարցեց Սմման։

— Ի՞նչ, զոր տեսամբ։

— Այս, գուրս յեկատ Ինչ-վոր զինվորականին հետ մի կողմը քաշված տաք-տաք խոսում էինք, ո՞վ եր:

— Նա իմ և Զազունյանի ուսանողական ընկերն եր, վոր ուսումը մեղ հետ միասին ավարտելով, մոռվազ զինվորական ծառայության մեջ, Մինչև Հիմա Թիոզոսիայութեա եր լինում, իսկ վերջին ժամանակներու փոխ-գնդապետություն աստիճանն են տվել և տեղափոխել այստեղ, Ազգը Զազորսկի քե Ահա նու ոթյակում:

Զաքարյան աշխերով ցույց տվեց ոթյակը, ուր հենց նոր մասվ Զազորսկին յերկու կանանց հետ:

— Անողիսանը շատ հունարով տվա յեր, — շարունակեց Զաքարը, — Յեկ տեսնում ես, այդքան յերիտասարդ հասակում — նա հազիվ քառասուն տարեկան լինի — փոխ-գնդապետության աստիճան և ստացել Առում եր, վոր Պէնայի հակատամարտին մանակցել և և բավական աջող կերպով, ձեռքին ել վերը և ստացել, ցույց տվեց՝ Պատմում եր իր...

— Ո՞վեր են մուը նստած կանայց, — հարցրեց Եմման: — Զգիտեմ, միայն գիտեմ, վոր նա վոչ կին ունի և վոչ ազգական: Ե՞ս, զինվորական ե, Ելի: Ենթի ինձ նարզնես, զինվորականներին այդպիս ավելի հարմար ե:

— Կոր չամունանան և մեկի տեղ յերկու անրարոյական կանանց հետ ման զան, — նկատեց Եմման:

Զաքարը ծիծաղեց:

— Ինչձև անպատճառ անրարոյական, — ասաց նա: — Ինչպիս տեսնում եմ...

Նա չվերջացրեց և զլուխն արագ բարձրացրեց. նրա կողքին աթոռի մոտ կանգնած եր Զազունյանը:

— Պահ, — կանչեց նա. — այս վճրտեղից... յերկնօքից իջար. Եմման նույնպիս արագ բարձրացրեց զլուխը և նայեց Զազունյանին:

— Վոչ, այս մի քանի աստիճան իջա, — պատասխանեց ժպտալով Զազունյանը, ցույց տալով զաւլիճի մուտքը:

Նա սեղմեց զեռ Եմմայի, հետո Զաքարի ձեռքը:

— Այ քեզ սյուրպըիզ, — կանչեց ուրախացած Զաքարը: Այս յես քեզ համար տուսակ եյի վերցրելու Այսոր յերկու անգամ յեկա հյուրանոց, սպասեցի քեզ, բայց դու չկայիր:

— Ծնորհակալ եմ, վոր ինձ չեն մուտքել. բայց քեզանից առաջ յես արդեն ինձ համար տուսակ եյի վերցրել:

— Բայց վճրտեղ եյիր, ինչժամ այսօքան ուշացար, տեղդ վճրտեղ և Յեկ իմ տեղու նստիր, յես կկանգնեմ Համ, այս աթոռն ել իս մերն և մի կարգութեատա, վոր միասին նստենք: Յեկ նստիր:

— Զե, միննոյն և նստիր, շատ նստելով հազնել եմ: Յես տեղս կզանեմ, յերկըորդ կարգութեատ և կարծեմ:

— Հ՞Շ, ինչժամ այսօքան ուշացար:

— Մորաքրոջս տանն եյի: Այսաեղ մի մորքուր ունեմ: մի շատ բարի եեր կին և ապրում ե փեսայի և աղջկա տանը, Յես բոլորովին շղիտեյի, թէ նա այստեղ և ապրում, բայց այսոր անսպասելի կերպով պատահեցի նրա փեսային և այդ բանը նրանից միայն իմացա: Փեսան առավ իրենց տուն: Խեղճ կինը շատ ուրախացավ: Խեղճը կարծելիս և յեղել, թէ յես արդեն վաղոց մենել եմ: Մինչև հիմա յել չեր թողնում:

— Ագդպես հ՞Շ, — ասաց Զաքարը: — Իւարկե, քեզ պես թափառկան քրոջ վորդի վոր ունի, ինչժամ պեսք և քեզանից ճիշտ ենիկություններ չունենար: Բայց յես բոլորովին չեյի կարծում, թէ զու այս գիշեր կզան կոնցերա:

— Խաչմա:

— Յես ինչ գիտեմ: Վորովնեան ուշացար: Համ, — հանկարծ կանչեց Զաքարը: — Զազորսկին այստեղ և Տեսնմամ ևս ոթյակում, յերկու կանանց հետ:

Սմբան աշքի տակով նայեց Զազորնյանին տեսնելու համարը թէ Զազորսկու ներկայությունը նույն ազգեցությունը կունենար նրա վրա, ինչ վոր այդ որը, յերբ պատահեցին նրան փողոցում բայց Զազորնյանը, ըստ յերեսոյթին, գիտեր, վոր Զազորսկին այստեղ եր, և գիտեր, թէ վորտեղ եր նստած, վորովնեան նրա զեմքը մասց նույնը, ինչ վոր առաջ և նա բոլորովին չնայեց այն ոթյակին, վոր ցույց տվեց Զաքարը:

— Համ, — ասաց նա անստարերությամբ, — գիտեմ...

— Տեսնմամ ես, անպիտանը փոխութեազնուություն ասաիեան և ստացել և պաշտանով տեղափոխել են այստեղ, — շարունակեց Զաքարը: — Այսոր պատահել և քեզ պրոսպեկտի վրա, բայց զու չես տեսել նրան:

— Ճշմարիտ եւ Յես տիկնոջ հետ եյի: Նա ինձ բարենել եւ բայց յես չեմ նկատել: Տիկինն ասաց ինձ այդ:

— Զնայելով, վոր Թենդոսիայում ձեր մեջ ինչ-վոր անախորժություն և պատահել չասաց, թէ ինչ անախորժություն: մի ժա-

մանակ, յերեխ, կիրմանաս, ասում եր, — և դու, ինչպես յերեւ-
վում են, վիրավորված են նրանից, բայց և այնպես պետք է ասած,
վոր նա շատ լավ մարդ եր, զոյն յես սիրում եմ նրա բաց բնա-
վորությունը և խիզախությունը, նման, ուզմամ են քեզ ծանո-
թացնեմ նրա հետ, — զարձավ նա կնոջը:

Նման մի սուր և սառ հայացք նեսեց նրա վրա և ուզում
եր ասել, — մի մարդ, վոր անրարոյական կանանց հետ և ման-
գալիս, յետ չեմ ուզում նրա հետ ծանոթանալ, բայց մեկ ել մտա-
ծեց և ասաց:

— Չեմ հասկանում, այդ ինչ սովորություն եր, վոր առաջին
պատահած մարդու հետ խսկոյն ուզում ես ծանոթացնել ինձ:

Բայց հանկարծ մտածելով, վոր Զազունյանը կարող է այդ
և իր հաշվին առնել, խսկոյն քննքշությամբ և բարեկամաբար
նայեց նրան և նրա հայացքը կարծես ասում եր, — վհչ, վհչ,
ու. Զազունյան, դուք բոլորովին բացառություն եք կազմում, Բայց
Զազունյանը չտեսավ այդ հայացքը. նա մոայլ մտախոհությամբ
նայում եր զիբիժյորին, վոր հենց նոր մտել և նստել եր իր տեղը:

— Զարժանալի յե, — պատասխանեց Զաքարը կնոջը. — յես
իսո չեմ ստիպում, վոր ծանոթանաս, այլ ասում եմ, թե ուզում
ես՝ կծանոթացնեմ, թե չե՞ քո կամքն եր, պրծավ գնաց Համ, Ար-
մեն, — զարձավ նա Զազունյանին, — յես այն եյի ուզում հարց-
նել, թե այդ ինչ անախորժություն եւ պատահել ձեր մեջ,
Լովեց յերբորդ զանգի ձայնը. վարագույրը պետք է բարձ-
րանար: Դահլիճում լուռ թյուն տիրեց:

— Ուրիշ անգամ, ուրիշ անգամ, — մեքենայաբար պատաս-
խանեց Զազունյանը և զնաց իր տեղը նստելու յերկրորդ կարգում.

Վարագույրը բարձրացավ, Կոնցերտի յերկրորդ բաժինն
ոկավեց:

Զաքարը՝ վարագույրը բարձրանալուն պես՝ Զազունյանին
ել մտացավ, Զազորսկուն ել, կնոջն ել և սկսեց ուշադրությամբ
հետեւ կոնցերտի ընթացքին: Այն ինչ նմանայի բոլոր ուշեն ու
միտքը Զազունյանի կողմն եր: Այժմ նրան ավելի յեր սկսել
առաջնակ այն միտքը, թե ինչ անախորժություն եր պատահել նրա
և Զազորսկու: միջն:

Կոնցերտի այդ բաժինն ել նմանայի համար այնպիս վերջա-
ցավ, ինչպես առաջինը. նա վոշինչ չիմացավ, թե ովքեր և ինչ
յերգեցին: նա այն ժամանակ միայն ուշին յեկավ, յերբ սկսեցին
ծափանարել:

Զաքարը վեր կտցավ և գնաց Զազունյանի մոտ, վորը դուրս
եր գուլիս աթոռների շարքից:

— Արսեն, — ասաց նա, — յեկ զնանք՝ հաշտեցնեմ քեզ Զա-
զունյանը. հետ. խռով մեալը լավ չեւ.

Զազունյանը հոնքերը կիրաց:

— Զաքար, — ասաց նա խոռվ ձայնով, — յես քեզ հատուկ
պետք ե ինչպիսի, վոր ինձ մոտ այլն չառա նըրա՞ անոնք...

— Ինչպիս կամենում ես, ինչպիս կամենում ես, — շատապեց
վրա բերել Զաքարը: — Բայց ճշմարիտն ասած, ինձ շատ ե հետա-
մբթում...

— Խնդրում եմ, թողնենք այդ առայժմ և ինձանից փոչինչ մի-
հարցնիր, — կարեց նրա խոսքը Զազունյանը և գնաց դեպի Ամման:

— Դուքս չեք զալիս, — հարցը զաքարը:

— Դուքս չեք զնում աիկին, — իբ կողմից հարցը զա-
զունյանը Ամմային:

Ամման նայեց նրան և տեսավ, վորոնամադիր չե զուրս զալու:

— Վոչ, — ասաց նա:

— Իսկ զմա, Արսեն:

— Վոչ, — պատասխանեց Զազունյանը:

«Չի ուզում Զազունյանը հանգիպել» — մատենց Զաքարը:

— Իսկ յես զնում եմ, — ասաց նա և զուրս զնաց:

Ամման հավաքեց շրջապահատի ծայրերը, վորոնք ընկել եյին
Զաքարի աթոռի վրա և փոքր ինչ այն կողմը քաշվեց, վորուսով
Զազունյանը նստի:

Զազունյանը նստեց կողքի, աթոռի ծայրին, վորքան կարելի
էր Ամմայից հեռու:

— Ինչպիս հավանեցիք այս բաժինը, աիկին, — հարցը նա:

— Զդիտեմ, ճշմարիտ, — պատասխանեց նա. — այս գիշեր
յես բոլորովին արամագիր չեմ լսելու և համարյա ուշազբություն
չեմ գարձնում, թե ինչպիս են յերգում:

Յեզ իրավ, ուրիշ անգամներ Զազունյանի ներկայության ժա-
մանակ նա ուրախ եր լինում, բայց այժմ մի անորոշ տիրու-
թյան պաշարել եր նրան:

— Դուք թատրոն միշտ հաճախում եք, — հարցը զարձյար
Զազունյանը, վորպեսզի խոսակցությունն առաջ առանի:

— Թատրոն հաճախում ենք այն ժամանակ, յերբ նոր, ան-
ձանոթ ովերա յեն, ներկայացնում, — պատասխանեց Ամման, իսկ
հայոց ներկայացութերին հաճախում ենք միշտ:

Խոսքն ընկնելով հայոց թատրոնի մասին և վորովնեան Զարդարութեանն, իրը և նորելու, համարյա բոլորովին անձանոթ եր հայ թատերական կյանքին, այդ պատճառով Սմման և ակսեց պատմել հայկական ռեպերտուարի, ընմական ուժերի, նրանց անեցած աջղոտ թյան և ուրիշ բաների մասին:

Կոնցերտը վերջանալուց հետո Զազունյանը հենց թատրոնի գնեների մոտ բաժանվեց իր բարեկամենից:

— Խոչպես յերեւամ ե, Զազունյանին շատ ժանր վերավորանք է հասցըրել Զազունյանին, — տսաց Զաքարը կնոջը, յերբ կառք նըստեցին և զեռմ եյին տուն:

Երինը վոչինչ չպատասխանեց. Նա միայն ուզուց կմիի շալը և կոչ յեկավ կառքի անկյանը:

XV

Հնաեյալ շաբաթ Զազունյանը գնաց Շ... իր գործի քննությանը ներկա լինելու համար՝ Յերկաթուղու կայարանում նրան ճանապարհ դրին Զաքարն ու Սմման և նրա մորաքրոջ վեսանու աղջիկը՝ Բաժանվելին Զաքարն անուց.

— Մեզ չմոռանաս, Արսեն ջան, նամակ գրես:

— Չե, այդ տանջանքից ինձ ապատ պահիր, յես շատ ծոյլ եմ նամակներ գրելում, — պատասխանեց Զազունյանը:

— Կամ թե հեռագրիր, յերբ գործը տանեն. նկատի տնկեցիր, վոր մենք միշտ անհամբերությամբ կապասենք: Աջղությունն Բարի ճանապարհ:

Ենք նա պինդ համբուրեց Զազունյանի շրթունքը:

Այս ինչ Սմման բաժանվեց առանց մի խոսք անզամ արտասանելու: Նա միայն սովորականից ավելի ամուր սեղմեց Զազունյանի ձեռքը, հոնքերը փոքր ինչ ցած թողեց և քթի պնջերը լայնացրեց: այդ սովորությունն ուներ նա, յերբ տիսուր եր լինում և այդպիսի դեպքերում նրա դեմքը մի տեսակ ուրույն, զգաստ գեղեցկություն եր առանում: Զազունյանն յերկրորդ անգամն եր տեսնում նրան այդպես — մեկ թատրոնում յեղած զիշերը, մեկ ել այժմ, և յերկու անգամն ել նա առանձին ուշադրությունն եր գարձնում այդ բանի վրա: Թեև նա չեր սիրում, վոր՝ այդ մանկահասակ, գեղեցիկ կնոջ ժպտուն դեմքն այդպես մասյլվում եր, բայց և այնպես այդ ուրույն, զգաստ գեղեցկությունն ընց առաջին հայացքից ուղղակի թափանցում: եր նրա սրտի խորքը և այնտեղ ինչ-վոր նոր, անծանոթ լարեր եր շաբանմ: Դեռ վու

մի ժամանակ նա այնպես քննույց և ուշադիր չեր յեղել զեսպի Ամման, ինչպես այդ բաժանման միջնորդն Ամեն անգամ, քանի նայում եր այդ գեղեցիկ կնոջ տիսուր, թախծալից դեմքին, հանկարծ ինչ-վոր անհայտ զորություն կարծես, բռնում եր նրան և ասում — կաց, մի հեռանար այստեղից...

Սորաքրոջ աղջկա և փեսայի հետ նա բաժանվեց ինչպես սերտ բարեկամներից, Յերեսում եր, վոր այդ մի քանի որպա մեջ նա կատարելապես զրագիլ եր նրանց համակրությունը, նրանց ինպահցին, վոր նա, յերը Շրմից վերադառնա, ուղղակի իրենց տանն իջնի.

Զագունյանի մեկնելուց հետո Եմմայի համար աշխարհն կարծես դատարկվեց, Այն զգացմունքը, վոր Զագունյանի հետ ծանոթանալու որից աննկատելի կերպով սողոսկել եր նրա սիրուց և այնուհետև հետպես արմատներ եր արձակում, կարծես Զագունյանի մեկնելուն եր սպասում, վորպեսպի հանկարծ զգալի անի նրան իր բոլոր ուժը Այն ամենը, ինչ վոր առաջ սիրելի և հարազատ եյին իր սրտին և առանց վորոնց նա կարծում եր, թե իր կյանքը կյանք չի լինի, այսու նրա աշխարհ այլ ևս մի կոպիկի զին չունեցին, Ամեն ինչ հեռացավ, ամեն ինչ ծածկվեց թանձը քողով և այդ բոլորի տեղը բռնից մի բան, վորը ամենն ժամանակ թե յերեակայություն մեջ և թե յերազում կանգնած եր նրա առջև և ավելի ու ավելի հափառակում եր նրա սիրուն ու բոլոր մտածունքները, Թա Զագունյանի պատկերն եր, Վոտից ցզլուխ, կարծես իրականապես, այդ պատկերն ամենն ժամանակ կանգնած եր նրա աշխարի առջև, ուրվականն սման ամենուրեց հետևում եր և յերբեք հանդիսատ չեր տալիս նրան ։ Ելունչ ևս ուզում ինձնանից, Ինչ շատ անգամ մը թիջում եր նա, յերը գիշերը քունը մոտ չեր զալիս աշխերին կամ ցերեկը, վոչինչ չկարողանալով անելի ապուշի նման մի սենյակից մյուս սենյակն եր թափառում, Սաստիկ թախիծը պաշարել եր նրան, Վոչինչ չեր զբավում նրան, ընդհակառակն, ամեն ինչ անտանելի յեր թվում, ամենից ավելի ամեն իր անգամ կատակներով ու հիմարական ծիծաղներով, իսկ նրա գուրգուրանքն ու համբույրները ու մի-մի տանջանք եյին, վոր նա մի կերպ կարողանում եր տանելի Շատ անգամ այնպիսի թշնամական աշխով եր նայում ամռանուն, վոր կարծես աշխարհիս բոլոր թշնամությունը նա թափել եր դիմին, Մինչև անդամ Արտմիկը, սիրուն, խելուք Արամիկը, վորին նա միշտ յերեխաների կատարելատիքն եր համարում, նա ել յերեմ շատ շար և փշացած եր թվում նրան,

Համար կարողանում եր տանելի Շատ անգամ այնպիսի թշնամական աշխով եր նայում ամռանուն, վոր կարծես աշխարհիս բոլոր թշնամությունը նա թափել եր դիմին, Մինչև անդամ Արտմիկը, սիրուն, խելուք Արամիկը, վորին նա միշտ յերեխաների կատարելատիքն եր համարում, նա ել յերեմ շատ շար և փշացած եր թվում նրան,

«Այս ինչ եմ անում, այս ինչ եմ անում» շատ անզամ սպրառափած ասում եր ինքն իրեն, յերբ իր գըռթյան մասին սկսում եր լավ մտածել, «Միթե յես նրան... սիրում եմ. միթե այս սեր ե. միթե յես սիրահարված եմ. նրա վրա Վաչ, վաչ, այդ անկարելի յե, այս սեր չե, յես սիրահարված չեմ նրա վրա. Միթե սըրտիս տերն ինքս չեմ. Կամ ինչժամ պետք ե սիրեմ, ինչ իրավունքով. մի և նա, — մի ոտար մարդ, վոր ինձ հետ վոչ մի կազչունի, վոր այսոր այստեղ ե, վազն ով գիտե վարտեղ կլինի, ինչպիս այժմ արգեն հետացել ե այստեղից: (Ի՞նչժամ յե հետացել — արտանշում եր նրա սիրաը), Իմ սերն ամուսինս ե, իմ սերը միակ զավակս ե, — ահա ում եմ սիրում և ում պետք ե սիրեմ, քանի կենդանի յեմ. ոտարի հետ ինչ գործ ունեմ: Վոչ, այս սեր չե, այս ուրիշ բան ե. այս սատանա յե, այս մի չար վոզի յե, վոր մտել ե սիրուս և ինձ հանգիստ չի տալիս, ինձ այսպիս ասանջում ե, չարչարում: Եես կհալածեն նրան սրախց, կհալածեմ...»:

Եեվ նրա հալածելն այն եր լինում, վոր զարձյալ սկսում եր մտածել Զազունյանի մասին, պատկերացնել նրան իր առջե, մըտքումը խոսել, վիճել նրա հետ: Ինչնախարեյտ թյունն, իհարկե, չեր ոզնում և «սատանան», «չար վոզին» շարունակում եր հանգիստ շտալ նրան: Ի զուր եր նաև աշխատում հալածել Զազունյանին — այդ ոտար մարդու պատկերն իր մտքից և անձնատոր լինել ընթերցանությանը կամ անային պարագմոնքներին, ինչպես առաջ. ի զուր եր աշխատում մայրական առաջվա վառ խանգով սեղմել Արամիկին իր կըրքին, ամեն որ առաջվա սիրով պարագել նրա հետ, ամեն ինչ ի զուր, «չար վոզին» ամեն բանից յետ եր մզում նրան և ավելի վառ կերպով սանդեկով նրա առջե Զազունյանի պատկերն, ասում եր՝ — ահա թե ում մասին դու պետք ե մտածես շարունակ:

«Տեր ասում, զու ոզնիր ինձա շատ անզամ մընջում եր նա անզորացած, բայց ասում չեր լուս նրան:

Նա հուսահատվել եր:

Նրան ծանոթ չեր սիրո զգացումը, վորովհետեւ զեռ վոչ վոքի չեր սիրել, և այդ պատճառով չեր հասկանում, զլխավորը՝ չեր ուզում հավատաք, թե այն զգացումը, վոր նա «չար վոզի» յեր անվանում, հենց ինքը սերն եր, վոր բազզը, թեն ուշ, բայց նրան ել եր վիճակել: Լինելով միջակ կարողություն տեր ծնողների զավակ, նա իր մանկությունն ու որիորդական տարիներն անց եր կացրել բացառապիս ընտանեկան շրջանում, թեև խորթ,

բայց բարի և սիրող մոր հակողաւթյան տակ Նրա ընկերը զիրքն եր, բայց ուներ և մի սրաւակից բարեկամ, — զա զպրոցական ընկերունքներից մեկն եր, զոր հոգով չափ սիրում եր նրան, Նա իրեն կատարելապես յերջանիկ եր զդում, յերբ ձեռքին նոր զիրք ուներ կարգալու, կամ յերբ ընկերունք հետ զնում եր զրոսանքի, կամ փակվելով սենյակում, անվերջ զրոյցներ եր անում նրա հետ, Դրանից զուրս նու ուրիշ վոշինչ չեր կամնեռում Նա ձիճազում եր նրանց վրա, վլորութ կյանքի իմաստն ուրիշ կերպ հասկացած և կյանքի համար ուրիշ կերպ պատրաստված՝ անզազար ընկնում են զանազան արկածների և զանազան հոգսերի յիտեից, Նա ամուսնացավ այնպես, ինչպես ամուսնանում են նրա հման հազարավոր աղջիկներ, — ուսանց սիրահարվելու և ուսանց իրեն հաշիվ տալու, թե ինչ բանի համար Ամուսնացավ, վորովնեսն պետք ե, վերջապես, ամուսնանուլ, Զաքար Մարկոսյանը, վոր Նրա խորթ մոր ինչ-վոր հետո ազգականն եր, ուսումը նոր եր ազգարտել և յեկել Մանոթանալով իրենց տանը, Մման շատ եր հայանել Նրա ուրախ բնավորությանը միայն ուրիշ վոշինչ, և յերբ մի քանի ժամանակից հետո, նրանից ամուսնանուլու առաջարկության ստացավ, առանց յերկնօր ու բարակ մտածելու ընդունեց Նա ամուսնացավ և ապրում եր խազադ ու յերջանիկ, Ամուսնացած ժամանակն ել, ընտանեկան շրջանից զուրս, Նա ուրիշ վոչ մի կյանքի հետ մոտ հարաբերության չուներ և չեր ել ուզումունենալ, Որերն ու ամբիներն անցնում եյին իրենց կարգով, զրանց հետ անցնում եր և նրա հանդարա կյանքը, ինչպես մի խազադ գետ, առանց ալեկոծվելու, Հորիզոնը միշտ պարզ եր, արեւ միշտ պայծառ եր փայլում, Ուրիշ թնչ եր հարկավոր Նրա խաղաղ կյանքը այն ժամանակ զուրս յեկավ իր սովորական ընթացքից, յերբ աշխարհ յեկավ Արամիկը և իր հետ բերեց մոր համար սովորական հոգսերը, Բայց թնչ եյին այդ հոգսերն այն ահազին յերջանկության հանդես, վարով մասունքն եր ծնվելու որից պսակեց Ամմայի ընտանեկան խազադ կյանքը և մի նոր, հրապուրիչ հոսանք ովեց այդ կյանքին, Մման իր բոլոր սերն ու խանը նվիրեց եր այդ միակ զավակին, Շառ անզամ, յերբ սեղմառմ եր նրան իր կըծքին, մայրական անհուն յերջանկությանից կարծում եր, թե ահա, վորտեղ վոր ե, պիտի մարի, Նա սիրում եր և ամուսնուն, սիրում եր նրան համար, վոր եր ամուսինն եր, վորի ձեռքն ընդունել եր ինքն իր հոմար կամքով, Յեկ փառք աստծու, ուրիշ թնչ եր հարկավոր, Շատ անզամ իրեն

այն աստիճանն յերջանիկ եր զգում, վոր մինչև անգամ սկսում եր զախենալ, թե մի գուցե այդ իրեն եժան չնստի. կարծես այդ յերջանկությունը վոչ թե ինքը բազդի եր շնորհել նրան, այլ նա մի տեղից գողացել եր և ապորինի կերպով սեփականացրել իրեն:

Ամբողջ վեց տարի ամուսնական այզպիսի կյանք վարելուց հետո, Հանկարծ չշար վոգին ներս և սողոսկում նըրա անարատ սիրաց և ամեն ինչ տակն ու վրա յե անում, Նրա կյանքի պարզ հորիզոնը կամաց-կամաց սկսում և ծածկվել մռայլ ամսպերով, Նրա կյանքի խաղաղ հոսանքն սկսում և ալեկունվել, Խոչչափի կատարվեց այդ բոլորը, Ի՞նչ հրաշքով, վորի զեմը նա վազորոք չկարողացավ առնել, Այս ինչ տանջանցներ են, վոր նա կրում է, այս ինչ անցուն զիշերներ են, վոր նա քաշում է, այս ինչ ձանր, սպանիչ դառնությունն է, վորով ամբողջապես պատաժ և նրա սիրաց, Ուշ և նրա կյանքի այն շարունակ քաղցր թմրությունը, վորի մեջ նա իրեն այնքան անհոգ և յերջանիկ եր զգում. վոր անդութը նրան Հանկարծ սթափեցրեց այդ թմրությունից և ձգեց այդ անպանելի տանջանցների մեջ:

Որեքն անցնում եյին սպանիչ դանդաղությամբ, «Չար վորդին» շարունակում եր իր զործը, Սմման քիչ եր ուտում, քիչ եր քնում, Համարյա վոչ մի զործ չեր կատարում, ամեն բանից զզվում, ձանձրանում եր, ամեն մի շնչին բանի Համար բարեկանում եր աղախնի և ծառաների վրա, ամուսնու հետ միշտ քիթ ու մոռթով եր խոսում, Նրանից խորշում եր և միշտ մենակ եր ուզում մեալ, Ի հարկե, շարունակ այզպես չեր կարող տեսել, մի հետեանք, վերջապես, պետք և ունենար այդ լարված գրությունը, և ունեցավ. — յերկու շարաթից հետո նա անկողին ընկավ:

Զաքարի զլիխն, կարծես մի անգամից կըակ եր թափվել. Ուրախություն, ծիծաղ, կատակ, ամեն ինչ մռացել եր, Նա ման եր զալիս խենթի նման, Գլուխ եր կոտրում, Թե ինչ և պատահում կնոջը, վոշինչ չեր կարողանում իմանալ, Հարցնում եր իրեն—կնոջը, թե ինչ ցավ, ինչ վիշտ, ինչ ռոզո ունի նա, վոր նրան այդ զրության մեջ և ձգել, բայց միշտ պատասխան եր ստանում և վոչինչ կամ «ինց ել չգիտեմ», Նա հուսահատվել եր, չգիտեր ինչ աներ, Կոնջ անկողին ընկնելը նրա Համար կատարյալ ման եր, մասից ել ավելի, Նա զիմեց ընկեր բժիշկներին, Բայց ինչ պետք և աներին նրանք այնտեղ, վորտեղ ինքնազլուխ իշխում եր չշար վոգին, Սմմայի միակ ինդիքն այն եր, վոր իրեն հանգիստ թողնեն:

XVI

Յերեկո եր: Զաքարը տիտուր ու արտօնութենուած նոստած եր տուանձնաստենյակում և մտածում եր կնոջ զբության մասին: Յերեսում եր, վոր շատ եր տանջվում: Վորքան տանջում եր նրան եմմայի զբությունը, նույնքան, գուցե և ավելի, տանջում եր այն հանելուկը, թէ ինչ եր նրա այդ զբություն պատճառը: Յենթբողությունները մեկը մյուսի յետուից ծնվում եյին նրա պիտում, բայց վոչ մի բավարար հետևանքի շեյին հասցնում: Հանելուկը մեռմ եր հանելուում:

«Առում և մըսել եմ» մտածում եր նա: «Բնչ մըսել. մըսածին յետ յեփած ել կըսանաչեմ, չեմ տեսնում, վոր այստեղ ուրիշ դան կա... ահա յերկու շաբաթ ե, վոր վոտի վրա հարվում ե. ինչեւ,— ահա հանելուկ...»:

Յեղավ մի բողե, վոր այդ հանելուկի բացարար թյունը զըսնելու համար իր զանազան յենթադրությունների մեջ նրա միտքը կանգ առավ Զազունյանի և նրա մեկնելու վրա, բայց իսկույն ել սարսափով յետ վանեց այդ յենթադրությունը, այնքան անուլի և անհավասարի թվաց նրան այդ բանը:

Նա տարակուսանքով վեր քաշեց ուսերը, վեր կացավ և սկըսեց յետ ու տուջ քայլել սենյակում:

Այդ բողեյին դուռը արագ բացվեց և շատապով ներս մտավ մանկանասակ մի կին:

— Պարռն Զաքար... Նմմաս հիվանդ ե, — անհանգստությամբ կանչեց նա:

Զաքարը կանգ առավ և զարմանքով նայեց նրա դեմքին:

— Տիկին Աննա, — բացականչեց նա ուրախացած: — Այդ յերբ... այդ բնչակես... ինչ լավ ժամանակին յեկաց:

Նրանք ամուր սեղմեցին իրար ձեռքը:

Աննան նմմայի ընկերուհին եր:

— Նմմաս, իմ նմման վերտեղ ե, ոչ. Զաքար, — նույն անհանգստությամբ ասաց նա: — Մասսային հարցնում եմ, ասում ե՞ հիվանդ պառկած ե: Ինչեւ յե հիվանդ: Գնանք, ասրեք ինձ նրա մոտ: վթրտեղ ե նա:

— Այս, այս մի քանի որ ե, ինչ պառկած ե, — տիրությամբ հառաջնեց Զաքարը:

— Ի՞նչն ե ցավում, ինչպի ե հիվանդ: Գնանք, ասրեք շուտ ինձ նրա մոտ:

Նա բանեց Զաքարի ձեռքից համարյա քարշ ավեց իր յետեկց:

Զաքարը տարավ նրան կնոջ սենյակը:

Նիշար և գունաւա՝ Սմման պառկած եր մահճակալի վրա: Նու Հանել եր ձեռքերը վերմակի տակից և աշքերը ձզած տառապաղին՝ ըստ յերեսոյթին, ընկղմված եր խոր մատաժման մեջ: Նրա մոտ դրված եր մի փոքրիկ սեղան՝ զեղերի սրվակներով: Դուռը բացվելուն պես սթափվեց և նայեց ներս մանողներին:

— Եմմա ջան, — բացականչեց Աննան, առաջ վազելով դեպի նու: — Դու անկողնում պառկած...

Նա շոքեց մահճակալի առջև, զրկեց Սմմային և սկսեց համբուրել նրա գունատ շրթունքներն ու այսերը:

Սմման զարձավ կողքի վրա, և զարմացած նայեց նրան:

— Աննամ... Միթե այդ դու յես, — ուրախ, բայց թոյլ ձայնով կանչեց նա և մի ձեռքով զրկեց նրա զլուխը:

— Այս յես եմ, բայց այդ զու շես, — ասաց Աննան, նայելով նրա խոշոր, բայց հիվանդությանից ավելի խոշորացած աշքերին: — Այդ բնչ և դրությանց, բնչ ես գարձել, ինչ հիվանդանալու ժամանակ եմ, վոր հիվանդացել եմ:

Սմման նստեց:

— Վեր կաց, ինչ ես շոքել, — ասաց նա:

Աննան վեր կացավ և նստեց մահճակալի մոտ դրած աթոռի վրա:

— Հզի իոր շեն, — հարցըրեց նա, թեքվելով դեպի նրա շեմքն և առնելով նրա ձեռքերը:

Սմման բացասական կերպով շարժեց զլուխը:

— Հապամ:

— Մըսել եմ:

Աննան ձեռքը դրեց նրա ճակատին:

— Տաքություն չունեմ, — ասաց նա կասկածելով:

Սմման նայեց նրան և ժողոաց:

— Լավացա, վոր զու յեկար, — ասաց նա:

— Փառք ասածո, — կարծես մի ծանր բերից աղատվելով, կանչեց Զաքարը: — Ի՞նչու վաղ չեյիք զայիս, — զիմեց նա Աննային, — վոր այդպիսի հրաշք զործել զիտեք:

— Եթե զիտենայի, վոր Սմման հիվանդ է, զլուխս կոտրելով կզայի, — պատասխանեց Աննան, սիրով և քնքությամբ նայելով ընկերունքներ:

— Եթե ես յեկել, զալուղ մասին ինչու առաջուց իմացում չավիր, — հարցըրեց Սմման:

— Ինքս ել չգիտեյի, թե այսպես շուտ եմ զարու։ Ամուսինս զնաց Վեննաս առևտրական գործերով, իսկ յես մտադրվեցի զալ Քոթայիս մորաքրոջ մոտ՝ մի կամ յերկու շաբաթ այստեղ Թուլու համար, իսկ այստեղից ուղղակի, զնաց և զայի այստեղ՝ մորս մոտ և պետք են մասյի այստեղ մինչև ամռանուն վերապատճառը, այսինքն մինչև հունիս կամ հուլիս ամիսը։ Բաթումից զնացի Քոթայիս, բայց մորաքրոջ այնտեղ չգտա, զյուղ եր զնացեր ել չուզեցի սպասել։ Մի որ Թութայիսում մալով, մյուս որն, այսինքն յերեկ, վեր կացա և, ահա այսոր այստեղ եմ։ Ուզում եյի անմիջապես զալ քեզ մոտ, բայց բարեկամաներ, ազգականներ, ծանոթներ — զիտես, եթի — այնքան հավաքվել եյին, վոր հիմա ել հազիվ եմ պրեել նրանց ձեռքեց։ Բայց վոր զիտենաս վորքան կարուել եյի քեզ սիրելիս, Յերեակայիշ՝ նստում եմ կտոք, զուլիս եմ, ուրախություննից զլուխս կորցրած բարձրանում եմ վերև, ծառային հարցնում եմ աիկինը տմնն եւ։ — Հիվանդ եւ, ասում եւ, պառկած եւ։ — Կարծեցի, թե տունը զլիսիս վիւց։ Ներս եմ ընկենում ու։ Զաքարի մոտ՝ Սմմաս, ասում եմ, իմ Սմօնն մուր եւ, ու։ Զաքար, տարեք շուտ ինձ նրա մոտ, — և բանում եմ ձեռքեցը, քարշ եմ տալիս։ Նա բերում և ինձ քեզ մոտ և ահա քեզ ինչ զրություն մեջ եմ զանում։

Նա ծիծաղեց և նրա աշքերում յերեացին արտասուցի վայլուն կաթիներ։ Սմման ժամաց, իսկ Զաքարը, վոր շաբանակ ժպառում եր, նայելով նրանց, նույնպես ծիծաղեց, ինչպես ծիծաղում են յերեաները։ Նա պարզ կերպով տեսնում եր, վոր նման ընկերունուն տեսնելու բողեյից ույժ և կենդանությունն ստացով և տառջվա տիսրությունն ու թախիճը համարյա բոլորովին հեռացավ նրա զեմքեց։ Այդ պատճեռով նա անհուն շնորհակալություն եր զյում զեղի Աննան, վոր իր այցելություննից պատճեռ նրան հուսահատություննից և անստանելի մտատանջություննից։

— Դուք ել աշքում փոխվել եք, ու։ Զաքար, — ասաց Աննան, նայելով նրա զեմքեց։

— Եթշտ եւ, — պատճախաննեց Զաքարը։ — Դե յես ինչ. լավ ուտում եյի, լավ խմում, ճաշից հետո լավ քնում, — նայելով կնոջը, ավելացրեց նա և ծիծաղեց (Սմման նայելով իր ձեռքերին, հոնքերը ցած թողեց և քթի պնչերը լայնացրեց), բայց զբա զբությունն այս կարճ ժամանակում ինձ սպանեց. ել վոչ կենդանի եյի, վոչ մեռած...

— Ախ, Եմմա, Եմմա, — հանդիմանորեն շարժեց զլուխը Ասանան: — Սեթե վաղնեյք չես վեր կենալ, չզիտեմ, ճշմարիս, ինչ կանեմ: Ուրախ ուրախ զալիս եյի, ասում եյի՝ վերջապես յերկու տարվա կարուս կառնեմ, կվերադարձնենք մեր որիորդական քաղցր ժամանակները, — հիշում եմ ընթերցանությունը, զբոսանքը, խոսակցությունները վիճարանությունները, — իսկ ու այստեղ ծանր ու բարակ պառկել եմ անկողնում... անգութ չտանեմ, ապա ինչ ասեմ քեզ, Բժիշկ զալիս ե... Ախ, ներողություն, ոչ. Զաքար, — կանչեց նա ծիծառելով. — բժիշկ այստեղ կանգնած եք, յես ուրիշ բժիշկ եմ հարցնում:

— Զե, ինչ ներողություն, — տասց Զաքարը, — ուրիշ բժիշկ ե զալիս: Ապա ինչ իմ բանն ե... տառեւ տերտելունին, ուրինյա ի տեր՝ կլինի:

Այդ խոռքերի հետ նա բարձրաձայն ծիծաղեց:

— Կասես, վոր այսուհետեւ ել չզա, — տասց Եմման տունց նրան նայելու:

— Ո՞վ, բժիշկնե՞ւ:

— Այս, ինձ այլնս բժիշկ հարկավոր չե:

— Բայց դու դեռ թույլ ես. քեզ ելի...

— Ասում եմ, վոր հարկավոր չե. — պնդեց Եմման: — Են ինձ հիմա լավ եմ զգում:

— Ինչպես ուզում ես, ինչպես ուզում ես, միայն թե դու լավ լինես: Կուզես, այս գեղեցին ել տանեմ զուրս շպրտեմ:

— Ենք լավ կանես:

Զաքարը մտածով դռանը:

— Կարապետ, Կարապետ, — կանչեց նա դեպի դռերս:

Մտան ներս մտավ:

— Այս բոլոր գեղեցին հավաքիր և դուրս տար իսկոյն... ուզում ես ինքզ խմբը, ուզում ես թափիր: Շուտու:

Կարապետն ատամենը ցույց տվեց և սկսեց հավաքել սեղանի վրայից դեղերի սրվակները:

— Արամիկն մէր ե, Արամիկը, — հանկարծ մտաբերելով հարցը բեց Աննան, — կանչեցնեք տեսնեմ: Ինչպես մոռացել եյի, Իմ սիրելի Արամիկը...

— Լսիր, — դարձավ Զաքարը եառային, վոր սրվակները դուրս եր տանում: — Մաշային կասես, վոր Արամիկն իսկոյն այստեղ բերի:

Մտան դուրս զնաց:

Արամիկն այնպիսի քաջ և խելոք տղա յեւ դարձեւ վոր
ել ասել հարկավոր չեւ, — դարձավ Զաքարն Աննային:

— Միթե... այն նիհարիկն ու չարաճելին:

— Նիհարիկն ու չարաճելին: Այժմ ինձնից ել չաղ ու ինձ-
նից ել խելոք եւ:

— Միթե: Դու ել խո այնքան գովում եյիր նըրան նամակնե-
րիդ մեջ, Սմբաւ Նամակներդ կարգալիս շատ անզամ այնպիս
կարուում եյի նըրան, այնպիս կարուում, վոր վորանեղ ել պա-
տաճում եյի նըրա անունը նամակիդ մեջ, սկսում եյի համբուրել,
չմո հավատում: Թժբախտաբար նըրա պատկերը կորցրել եմ. մի
որ ամբողջ տռւնը տակն ու վրա արի, չկարողացա գտնել Բայց
այս անզամ յեւ ինքս պետք և հանել տաճ նըրա պատկերն ինձ
հետ միասին. թհայլ կատաք:

— Ձեզ փեշեր, — ասաց Զաքարը ծիծաղելով:

XVII

— Ահա նա, ահա իմ սիրելիս, — բացականչեց Աննան և, վեր
թոշելով տեղից, վազեց զեզի Արամիկը, վոր աղախնի առջնից
մտնելով անհամարձակ կերպով կանգնեց դուն մոտ: Մի ակն-
թարթում նա առավ յերեխօյին իր գըկի մեջ, բարձրացրեց և,
համբուրելով նըրա զեմքի յուրաքանչյուր պատահած տեղը, ձեռ-
քերի վրա տարբավ, նստեց դարձյալ իր աթոռի վրա. Ենքը համ-
բուրելուց կշտացավ, նստեցրեց նըրան իր ծնկների վրա և սկսեց
նայել նըրան այն սիրով ու հրճանքով, ինչպիս միայն կանաչք
են նայում: — Իրավ, Ի՞նչ մեծացել ե, Ի՞նչ զեղեցկացել, — տսում
եր նա, սեղմելով նըրան կը քիյն:

— Աշքով չտառ, — նկատեց նըրան Սմբաւ, վորի սրտի մեջ
զարթել եր մայրական հապարտությունը, տեսնելով ընկերունու իր
զավակին ցույց տված սերն ու խոնդը:

— Հա, հա, աշքով չտառ, — իր կողմեց վրա բերեց Զաքարը
և իր սովորության համեմատ բարձրահայն ծիծաղեց:

— Մի զախենաց, աշքու թեթե և, — պատասխանեց Աննան
և շարունակեց սիրով և հրճվանքով նայել Արամիկին:

Արամիկը նստեց Աննայի ծնկան վրա, զարմացած և հետո-
քրքրությամբ նայում եր նըրան. լըթունքները սեղմել եր իրու
և այսերը փքել. դրանից նըրա մանկական զեղեցիկ զեմքը ստո-
ցել եր մի տեսակ լուրջ, բայց շատ գրավիչ և սիրելի արտահայ-
տություն, վորպիսին ունենում են միայն յերեխաները:

— Ի՞նչ ես ինձ այդպիս նայում, ինձ շին ճանաչում, — հարցը Աննան:

— Կոչ, — զլու խը բացասական կերպով շարժելով, հապաղելով ողատասխանեց Արամիկը և շարունակեց նայել նրան:

— Ենք քո մամայի քույրիկն եմ:

— Իմ մամայի քույրիկը, — կարծես խոր մտածելով, ասաց Արամիկը և նայեց մորը, հսկող գարձյալ Աննային, գարձյալ մորը. կարծես ուզում եր վորոնե նմանություն գանել նրանց միջև:

— Այո, իմ քույրիկն ե, Արամիկ, իմ քույրիկն ե, — ժպատով հաստատեց մայրը:

Արամիկը գարձյալ նայեց Աննային:

— Հապա ինչեւ առաջ զուք չեյիք զալիս մեր առան, — հարցը նաև:

— Վորովնեան մայրիկդ ինձ միշտ ծեծում եր, — պատասխանեց Աննան կատակով:

Ենթեխան չհասկացավ կատակը. նա կիսեց հոնքերը և այտերը փերց:

— Ճիշտ չե, — կարծես վիրավորված ասաց նաև: — Մամաս վոչ վոքի չի ծեծում. — զուցե բարկացել և ձեզ վրա, ինչպիս անցյալ որը...

Նա լսեց և այտերը բոլորովին փքեց:

— Ի՞նչ, ի՞նչ անցյալ որը, — ծիծաղը զսպելով, հարց ու փորձ արագ Աննան:

— Բարկացավ ինձ վրա, — կամաց ասաց Արամիկը և զլուխը կախեց:

— Բարկացամվ... ինչեւ... յերեխ չարություն եյիր արել:

— Կոչ, յես վոչ մի չարություն չեյի արել, այլ ուրախուրախ ներս վաղեցի նրա մոտ... նա տիսուր նստած եր... հանկարծ բարկացավ ինձ վրա... հրամայեց, վոր իսկույն դուրս գնամ ե... յետելիցս ինձ... չար... փչացած տղա անվանեց...

Նրա ձայնը զողաց և նա, հանկարծ զեմքն ամուր սեղմելով Աննայի կրծքին, սկսեց հեկեկալ:

Հայրը, մայրը և Աննան սկսեցին ծիծաղել:

— Ինկապես վոր չար և փչացած տղա, — կանչեց Զաքարը: — Ինչովեւ միտն ե պահել, Միծամսիրտ, վիրավորանքը չի ուզում տաներ:

Ներողություն խնդրելով, նա դուրս գնաց հյուրին պատվելու պատրաստություններ տեսնելու:

Աննան հանգստացրեց Արամիկին, հաշոեցրեց մոր հետ, համբուրել տալով նրա ձեռքը, և մի քանի քաղցրեղեններ տվեց նրան, վոր բերել եր իր հետ:

Մի ամբողջ քառորդ ժամի շափ նստած թեալով Աննայի ծնկան վրա Արամիկը հոգնեց. Նա ուզում էր զորս գնալ և վազվզել:

— Ձեր հազուստը բոլորովին փչացրի, թողեք ինձ իշխեմ, — ասաց նա:

Աննան ձիճաղեց:

— Այ խորամանկ, — կանչեց նա, — ուզում ես վախչել և մյու ես համրում:

Նա պինդ համբուրեց նրա յերկու այտն ել և ցած զբեց:

— Ենք, զնա խազա, Բայց լսիր. Ինձ այսուհետեւ միշտ մարտայր կանչիր, իմացմբ:

— Իմացա:

— Ենք կսիրես ինձ ինչպես մամայից:

— Ինչու չեմ սիրի:

— Ենք քեզ համար միշտ քաղցրեղեն պըհեմ:

— Ինչ եմ անում քաղցրեղենը:

— Այ հպարտ... ինչեւ:

— Վորովհետեւ մամաս ասում ե, վոր քաղցրեղենը զառ և ատամեներին:

— Տեսնմամ ես սրան... Բաս յետ առու իմ տվածը:

— Ասա:

Արամիկը մեկնեց նրան նրա տված քաղցրեղենը:

Աննան դիմամամը դեմքը խոժուեց:

— Դու ինձ վիրավորում ես, — ասաց նա ծանը:

— Ի՞նչ անեմ, զուք ինքներդ եք յետ ուզում, յետ ել տում միս եմ:

Աննան չկարողացավ շձիճաղել:

— Լավ, այդ մեկը տար կեր, ու ո զառու չե, — ասաց մայրը. Արամիկը դարձավ և դիմեց դեպի դուռը:

— Սպասիր, — կանչեց նրա յետելից Աննան:

Արամիկը կանգ տառավ.

— Ուրիմ զու ինձ առանց քաղցրեղենի Ել կսիրես, — հարց Աննան:

— Եթե զուք ինձ սիրեք, յետ ել ձեզ կսիրեմ:

Աննան վեր թռավ տեղից, վազեց, զրկեց նրան և դարձյալ սկսեց համբուրել նրա զեմքի յուրաքանչյուր պատահած տեղը:

— Այս, յիս քեզ բնչակես եմ սիրում, այս, ինչպես եմ սիրում, — ասում եր նա և շարունակում իր համբույրները: Հիմա դու ինձ համբուրիր, վոր իմանամ, թե գու յել ինձ եմ սիրում, — ասաց նա, այսու մոտեցնելով նրա շրթունքներին:

— Այս, յիս ել ձեզ բնչակես եմ սիրում, — կանչեց Արամիկն, ամուր համբուրեց նրա այսն և դուրս փախավ:

Աննան մտախոնությամբ նայեց նրա յետնից, կամաց հառաջեց և զնաց նստեց իր տեղը:

— Եւրանի քեզ, Ամմա, — ասաց նա. — ինչքան յերջանիկ ես զու... յիս եմ, վոր չգիտեմ վոր մեղքիս համար զրկված եմ մի այդպիսի բաղդավորությունից:

«Ի՞նչքան յերջանիկ եմ յիս զառնությամբ մտածեց Ամման և Զազունյանի, պատկերը ցցվեց նրա առջև Հանկարծ նա մըոպաց և նայեց Աննային»:

— Ուզմում եմ քեզ տամ, — ասաց նա:

— Ե՞ս, ավոգն ասուված ե, զու ինձ ինչ պետք ե տաս, — տիսուր պատասխանեց Աննան: — Մինչև տանդ, յեթե վոչ մի քանի, զո՞նե մի հասիկ յերեխս չունենաս, ել ինչացը. յիս զու, ել ինչի յիս պետք, ինչ կյանք և ամուսնացած կոոչ կյանքն առանց յերեխայի, ինչ զգացմունք, ինչ յերջանկություն կարող ե հասնել մայրական զգացմունքին, մայրական յերջանկությունը: Ամեն ինչ, ամեն տեսակ զգացմունք խախուս և անցողական ե, բացի մայրական զգացմունքի առաջ. — մի թշվառ, շուտ բռնկող և շուտ ել մարող թղթերի բոց զարնանային արևի հարատես պայծառ հասագայթների հանդեպ: Հանրածանոթ սերը թեև լայնատարած, ըայց շրջափակված մի ծով ե, վոր անգաղար ալեկոծվում ե և ահազին պատմներ, ազետներ և բերում շատ անգամ, իսկ մայրական սերը պարզ, վճիռ ազրյուր ե, վոր հոսում և հանգարտ և չես իմանում վորտեղից և սկսվում և վորտեղ վերջանում. Մարզկանց մեջ ամենայերջանիկը մայրն եւ Զնայելով, վոր ինքս մայր չեմ, զժբախտաբար, ըայց յիս այդ հասկանում եմ, զգում եմ և զուցեց քեզնից ել ավելի: Գիտեմ, թե յիս քեզ վորքան նախանձում եմ Ամմա:

— Ի զներ, — կարծես յերազում արտասանեց Ամման, վոր այդ բոլոր ժամանակ հոնքերը կիսած և քթի պնչերը լայնացրած՝ շարունակ նայում եր զեղովի պատռեանը:

Աննան ցնցվեց, նա կարծես նոր տեսայ նմայի դեմքի տիսուր մտախոն արտահայտությունը: Նա կամաց թեթվեց զեղովի նրա գեմքը,

— Ի՞նչ... իդմեր, — հարցըրեց նա ծանրոթյամբ։
Սմման թեթև հառաջեց և շպատասխանեց։

Աննան արագ վեր կացավ աթոսի վրայից և նստեց նրա
անկողնի վրա։ Նա առավ ընկերունու ձեռքը և աչքերը հառեց
նըս աչքերին։

— Սմմա, զու շատ ուրիշ տեսակ ես յերեսում, — ասաց նա
առաջանեց ավելի ծանր։ — Դու խորհրդավոր ես...՝ յիս քեզ չեմ
հասկանում... բացատրիր... ինչ և պատահում քեզ։

Սմման հանկարծ իր կողմից նայեց նրան զեռ լուրջ, հետո
ժպասց։

— Ի՞նչ պետք ե պատահի, — ասաց նա պարզ։ — յիս այս-
տեղ անկողնում հիվանդ պառկած եմ, իսկ զու ինձ նախան-
ձում ես։

Աննան դրանով շխափվեց, նա թերահավատոթյամբ և լըր-
ջորեն նայեց նրա աչքերին և ուզում եր ինչ-վոր տակի, բայց
Զաքարը մտավ, և նա այլ ևս վոչինչ չասաց։ Այնոքեւուն նա շա-
րունակ դիտում եր Սմմային, բայց Սմման պահնելով, վոր անզգու-
շությամբ ինքն իրեն մատնել եր, աշխատում եր իրեն ուրախ
ցոյց տալ Սակայն առանց այն ել ընկերունու անհապասելի զա-
լուսաբ նրան մեծ ուրախություն եր պատճառել, մանավանդ իր
ներկա ծանր դրության մեջ, Նա իրեն մինչև անգամ առպղջացած
եր զգում։ Աննան տեսնելով, վոր իր կասկածանքն, ըստ յերե-
վոյթին, հիմք չունի, զադարեց նրան դիտելուց։ Սկսվեց մի
քաղցր և անվերջ զրոյց։ Զաքարը, տեսնելով, վոր կնոջ զրու-
թյունը շատ լավ ե, ուրախությունից վուս վրա չեր կանգնում։
Բայց նա աշխատում եր իրեն զառած պահել, վորպեսզի մի այն-
պիսի հիմք բան չափի, վորով զրոյի կնոջ ահաճությունը, ինչ-
պես վերջին որերում մի քանի անգամ պատահել եր։

Բավական ուշ եր, վոր Աննան պատրաստվեց տուն գնալու։
Սմման իննորեց նրան, վոր հետեւյալ որն առավույշան այցելի
իրեն։

— Լոյսը չծագած, յիս այստեղ եմ, — ասաց Աննան։

Մինչև փողոցի դուռը Զաքարն իջավ նրա հետ Այնտեղ նա
ամուր սեղմեց Աննայի ձեռքը։

— Անչափ շնորհակալ եմ ձեզմանից, ու. Աննա, — ասաց նա
զգացված։ — Զեղ ասաված ե ուզարկել, վոր Սմմային առողջաց-
նեց, իսկ ինձ ազատեք հուսահատությունից։

XVIII

Հետեւյալ որն առավուայան, յերբ Աննան յեկավ, Ամման զետքնած եր, իսկ Զաքարին իր առանձնասենյակում շտապով թեյ եր իմում, վոր գնաւ իր պաշտոնին, Աննան մատավ նըրա մոտ և մանրաւմասն հարց ու փորձ արեց Սմմայի հիվանդության մասին: Զաքարը պատմեց նրան, ինչ վոր գիտեր և ինչի մասին վոր գիշեր-ցերեկ մասամանջվամ եր, բացի Զաքարնյանի վերաբերմամբ ունեցած կասկածից, վորը շարունակում եր մասամանջել նրան, ինչքան ել վոր նա աշխատում եր վանել իր, մաքից այդ յենթազրությունը:

Աննան մասաման մեջ ընկավ, թեյը խմելուց հետո, Զաքարը զնաց, խնդրելով նրան, վոր Սմմային մենակ չթողնի:

Աննան մատավ Սմմայի ննջարանը: Ամման դարձյալ քնած եր, Հուշիկ քայլերով մատեցավ նրա մահակալին և նստեց աթոռի վրա: Սենյակում տիրում եր կիսախավար և ողը փոքր ինչ ծանր եր, նա վեր կացավ, լուսամուռներից մեկի վարագույրն յետ քաշեց, բաց արեց ողանոցը և դարձյալ զնաց նստեց իր տեղը, Ամման պարկած եր կողքի վրա՝ զեմքը նրա կողման արած: Գիշերային սպիտակ պլասկապի տակից դուրս եյին թափվել նրա փոյլուն մազերը, վորոնց մի փունջ ընկել եր նրա զեմքի վրա և թերեւ զողդողում եյին նրա հավասար շնչառությունից: Յերկար թերթերունքներն ստվեր եյին ձգել նրա փակ աշքերի տակ, այտերի վրա խաղում եր թեթև շառագույնը, շրթունքները փոքր ինչ բաց կարծես ժպառում եյին, Քնած ժամանակ նա զեղեցիկ և անմեղ եր յերեսում, ինչպես լինում են յերեխաները: Աննան սիրով և քնքությամբ նայում եր նրան, ինչպես նայում ե մայրն իր քնած յերեխային: Զգում եր, վոր անչափ սիրում ե նրան, ինչպես իր հարազատ քրոջը, և նրա համար ամեն բան պատրաստ ե անել, Շարունակ նայում եր նրա զեմքին, մտառությամբ զիտում նրա յուրաքանչյուր զիմազիճը և տեսնում եր, վոր նա թացել եր համարյա նույնը, ինչ վոր որիորդպական հասակում ժամանակը, կարծես, խնայել եր այդ զեղեցիկ զեմքը, վորը սեր, համեստություն և քնքություն եր շնչում, միայն այժմ փոքր ինչ նիւար և գունստ եր, բայց այդ ավելի նպաստում եր նրա քնքույշ զեղեցկությանը:

Աննան կամաց թեքվեց և զգուշորեն համբուրեց նրա այտը:

Ամման հանկարծ ինչ-վոր մի խուլ ճիչ արձակեց և ամբողջ մարմելով ցնցվեց: Աշքերը բաց արավ և իսկույն նստեց: Հայացքն անմիտ եր, զեմքը սարսափ եր արտահայտում: շնչում եր արագ:

— Ի՞նչ պատահեց, սիրելիս, — հարցը Աննան վախեցած Ամման շպատասիսանեց, անմիտ հայացքը շրջեց այս ու այն կողմը, հետո քիչ-քիչ ուշքի զալով, նայեց Աննային և ձեռքով շփեց գեղմբը:

— Այդ ոժու յես, — ասաց նա կամաց:

— Զինմի վախեցար, վոր համբուրեցի:

Ամման ձեռքը զըեց իր արագ բարձիսող կրծքին:

— Հենց նոր յերազումն քեզ եյի անսնում, — ասաց նա և աշխատեց ժպտալ:

— Ի՞նչպես, պատմիր տեսնենք:

— Իրու թե... Դու յերազի հավատմամ ես:

— Ի՞նչ հավատալու յետ:

— Ի հարկեր:

Ամման վերը պէտականը և մազերը յետ տարավ ճակատից:

— Վազմաց ես յեկել, — հարցը նա:

— Մեկ ժամ կլինի, — պատասխանեց Աննան:

— Մըթե... ինչժամ չեյիր արթնացնում:

— Միհանցն եւ ինձ իստ յերազումք եւ տեսնում եյիր:

Ամման ժպտաց:

— Եեվ բոլոր ժամանակ նատմած եյիր մասս, — հարցը նա:

— Վոչ, դեռ ամուսնուդ մաս եյի, հետո մաս քեզ մաս:

— Նա ամննն եւ:

— Վոչ գնաց:

— Ուրիշն բավական ուշ եւ, — ասաց Ամման, բուսամուտից դուրս նայելով:

— Ժամը առան եւ:

— Համ... Այսպիս շատ յես վոչ մի որ չեմ քնել:

— Այդ առողջանալուդ նշաննն եւ:

— Այո, յես այսոր ինձ բավական լավ եմ զգում և զրա համար պարտական եմ քեզ:

— Ողանցքն յես եմ բաց արել, ողը ծանր եր. կուզմո վակեմ, — հարցը Աննան:

— Զե, մաս:

— Վոչ, փակեմ, փակեմ. կմըսես, ցուրտ եւ:

Աննան վեր կացավ և փակեց ողանցքը:

— Ուրիշ... հա, յերազդ մռացար պատմեր:

— Զե, չեմ մռացել, եիմու կպատմեմ.

— Այս շախն ել վոր ծածկես, Սմմա ջան, այս ժամանակ ավելի բավ կլինի:

— Արա, ինչ ուզում ես, յես քեզ անձնատուր եմ լինում, — ասաց Ժպտալով Սմման:

Աննան շալը ձգեց նրա ուսերին և ծածկեց նրա մեջքն ու կուրծքը:

— Ահա այսպես Հիմա պատմիր՝ տեսնենք լոնչ յերազ ես տեսնի:

— Բայց այնպես սարսափելի յերազ եր, Աննա, — մասիս Հովհանն ասաց Սմման:

— Համ... յերենի շատ ես վախեցել:

— Շատ:

— Պատմիր, պատմիր:

— Իրուս թե անցնում եմ մի ընդարձակ դաշտով, — սկսեց Սմման, — Դաշտը կանաչ եր, ինչպես զարդարն է լինում: Տեսնեմ հեռու մի ճեր, ալեսոր մարդու շուրջը բազմաթիվ ջանել կանայք և աղջիկներ են հավաքված: Մեր մարդու ձեռքին բազմաթիվ վառ ճրագներ կան: Շուրջը հավաքված կանանցից և աղջիկներից վոմանք հավաքակում են նրա ձեռքից մի-մի ճրագ, վոմանց ծերունին ինքն եր տալիս և բոլորն ել ճրագները ձեռքներին սկսում եյին վախչել, կարծես վախենում եյին, վոր ծերունին յետ կերպի ճրագներն իրենց ձեռքից ճրագները վազելուց սաստիկ վառվում եյին: Փախչաղներից վոմանք, տառնց իրենց վաստակում ճրագի վառ բոցերից, տպատ վազում եյին և որպախուրախ ծիծաղում, կը կը ում, իսկ վոմանք այրում եյին իրենց զեմքը, հագուստը, յերբեմն լաց եյին լինում, յերբեմն ծիծաղում, զարձյալ լաց լինում, դարձյալ ծիծաղում և առաջինների հետ հավասար վազում եյին, իսկ յերբեմն ել վայր եյին ընկնում, թիթու բերանը արնուում, բայց ճրագները ձեռքներից բաց չեյին թողնում... Մի ինչ-վոր անդիմագրելի զրություն ձգում եր ինձ գեղպի ծերունին: Յես վազեցի դեպի նաև հասա նրան այն ժամանակ, յերբ արդեն ամենն ու հեռացել եյին նրանից և ճրագները ձեռքներին՝ վազում եյին ընդարձակ դաշտի վրայով: Մերունու ձեռքին մեացել եր մի հատիկ ճրագ միայն: Այդ ճրագը մերթ շատ պայծառ եր վառվում, մերթ շատ աղու: — Այդ ճրագն ել ինձ տուր, — բացականչեցի յես, ձեռքս մեկնելով: Մերունին զլուխը բացասական կերպով շարժեց: Նա մի զարնուրելի մարդ եր, «Ուշ յեկար» ասում և «քեզ չի հասնի»: — Տուր, տուր,

աղաջում եյի յես ճրագն ինձ սաստիկ գրավում եր «Յեթե տամ ասում ե, «Հազուսադ կայրեն» — Տհուր, տհուր, — թախանձում եյի յես Նա մեկնեց ինձ ճրագը և նույն ըստեյին դարձյալ յես եր ուզում առանելու բայց յես հանկարծ հափշտակեցի նրա ձեռքից և ձիժաղելով մյուսների պետ սկսեցի փախչել...

Եմման հանկարծ ցնցվեց և լսեց,

— Հետո, — հարցրեց Աննան, վորին ակամա հետաքրքրում եր նրա յերազը, — Են զետ շեմ յերեսում այդպես;

— Սպասիր, կերպաս, — ասաց Եմման,

— Հետո, — շարունակեց նա, — ճրագը ձեռքիս՝ փախչում եյի... չե, չեյի փախչում, թոշում եյի, ոլանում եյի... վոտներս զետնի վրա չեյին ճրագը սաստիկ վասվում եր. նրա բոցը դիպչում եր զեմքիս և այրում. Հանկարծ, տեսնեմ, կապավ հազուսափիս, հազուսում սկսեց այրվել Սարսափեցի... Ուզում եյի ճրագը վայր ձեմ ձեռքից, չեր լինում. կպած եր ձեռքիս, պոկ չեր գալիս... Այն ինչ՝ հակառակ իմ կամքին՝ յես շարունակում եյի ալանալ... Հանկարծ տեսնեմ զիմացս անթիվ զամփոշներ հաջոցով հալածում են յերկու հոգու մեկն իրեն թե Զաքարն ե, իսկ մյուսն Արամիկս Զաքարը բռնած ունի Արամիկի ձեռքից նրանց վազում են շների առաջից. Արամիկը սաստիկ ճշում ե, լաց և լինում... Ճրագը ձեռքիս սլացս նրանց դեմ նրանց շներից ազատելու մտցով «Ճրագը հանգցրու» զոռում և Զաքարը շշները կփախչին։ Են փշում եմ ճրագին, փշում եմ, չի հանգչում... «Հանցցրու» աղաջում և Զաքարը, «Հանցցրու», մասմա ճշում և Արամիկը. Են ավելի ուժով եմ փշում, զարձյալ չի հանգչում ճրագը. Շները դժոխային հաջոց են բարձրացնում... Հանկարծ վորոնդից — չզիտեմ, — հայտնվում եմ զու, մի անգամ փշում եմ և ճրագը հանգչում եմ.

Եմման լսեց:

— Հետո, — հարցրեց Աննան,

— Հետո, շուրջու սարսափելի խավար տիրեց...

— Ենք...

— Հանկարծ դեմքիս մի սաստիկ, խիստ սաստիկ, կարծես յերկաթի ձեռքի ապտակ զգացի... Այնքան սաստիկ եր այդ ապտակը, վոր ընկա և սկսեցի զլորվել մի մութ անհատակ անդունդ...

— Հմ, հմ, հմ, — բարձրաձայն ծիժաղեց Աննան. — Եերեխ այդ ապտակն իմ համբույրն եր.

— Եերեխ.

- Հետո, հետո ինչ:
- Հետո արթնացաւ:
- Ակսոս, յերանի առտակ չեյլ ավել, ով գիտե ել Բնչ Հրաբություններ եյիր աեւնելու:
- Չե, Աննա, լավ յեղավ, վոր արթնացրիր... ինչպես զարդութելի՛ յեր, — ասաց Սմման տիտղոսն:
- Հիմմ, — կարճ լուսթյունից հետո, հարցրեց Աննան:
- Սմման սթափեց, նայեց նրան և տիտղը կերպով ժպաց:
- Մեկնիր յերազու, — ասաց նա:
- Մեկնո՞մ... շատ լավ, Ծները իստ շներ են, Զաքարը — Զաքար, Արամիկն — Արամիկ, զու — զու, յես ել — յես մըրազը, զորով այրում եյիր զեմքդ և հագուստոց, հիվանդությունոց եր: Փշելով և հանգնելով ճրազը նշանակում և առողջացրի քեզ ե... Հիմմ պետք ե վեր կենաս, սիրելիս, և անկողինդ թողնես: Առանձինություններ հավանում են:
- Սմման դարձյալ ժպաց:
- Հավանում եմ, — ասաց նա: — Եեվ հիմմ ուզիզ, վոր վեր կկենած: Դու մեկ նեղություն կըիր, զանգը տուր:
- Ի՞նչեւ:
- Աղախինը գա հազցնի ինձ:
- Ախ, չե, սիրելիս, մաս զեռ անկողնում: յես կատակով ասացի: զու զեռ թոյլ ես:
- Չե, Աննա, հավասար չե: յես ինձ հիմմ բավական լավ եմ զգում: միշտ պատկած լինենի ել ավելի յե թուլացնում մարզու: տուր զանգը:
- Ի՞նչ հարկավոր ե: յերբ վոր այդպես ե, յես ինքս կհազցնեմ քեզ, — ասաց Աննան և սկսեց հազցնել նրան:
- Մի ժամկից հետո Սմման արդեն հազնված, լվացված և սանրված նստած եր մի ուրիշ տաք սենյակում բազկաթոռի վրա: Նրա զիմաց նստած եր Աննան, իսկ Աննայի մաս — Արամիկը: Փոքրիկ սեղանի վրա զբած եր սուրճը վրակեղոծ բաժակների մեջ, Յերկու վաղեմի և սիրելի Ծնկերուհիների միջև բացված եր այս քաղցր զրույցներից մեկը, վոր յերբեք չի վերջանում: Սմման իրեն մի տեսակ թեթև և հանգիստ եր զգում: Ի՞նչ-վոր տիտղը, բայց անդուրը զգացմունք լցրել եր նրա սիրառը:
- Զաքարն այդ որը սովորականից ավելի վաղ տուն յեկավ, Ավելորդ ե ասել և նկարագրել, թե ինչքան և ինչպես ուրախացավ նա, յերբ կնոցն անկողնից արդեն վեր կացած տեսավոր Այդ

որը կնոջից ծածուկ նու մի քանի անգամ համբուրեց Աննայի ձեռքը, իրուն անհուն յերախտազիտության և շնորհակալության արտահայտությունը:

XIX

Սմման, հետպհետեւ ուժի գալով, բոլորովին կազդուրվեց: Զազունյանի վրա սիրահարվելով (թեև նա այդ բանին վոչ մի կերպ չեր ուզում հավատաւ), նա իրեն կատարելապես մենակ եր զգում, ամուսինն առավել քան ուրիշը, բնականաբար, նրան անտանելի յեր թվում. Արամիկն ընկել եր յերկրորդ կարդը, հասարակական զրոսատեղերը հենց սկզբից ել նրան այնքան չեյին զրագում. ուրիշ ժգ կար և ինչ կար: Հարկավոր եր նրան մեկը, վոր փոթը ինչ թիթեացներ նրա մենակությունը, և այդ մեկը — Աննան եր, վոր իր կանացի բնական ընդունակությամբ ու սիրով, եր զալու հենց առաջին որից ունեցավ նրա վրա իր բարերար աղջեցությունը: Յեզ, իրավ, Աննայի մերկայտի թյան ժամանակ Զազունյանն այլ ևս այնպիս չեր զրադեցնութիւն Սմմայի միտքն ու սիրութ, ինչպիս առաջ այդ Շոտար մարզու պատկերը հետպհետեւ աղոտանում եր նրա հիշողության մեջ, Աննան զիստեր նրան զրադեցնել: Նա զալիս եր առավոտյան վազ, զնում եր գիշերն ուշ: Զագարն ամենայն անկեղծությամբ սիրեց նրան: Նա իրեն յերախտապարտ եր համարում զեզի այդ կինը և չգիտեր, թե ինչով և յերբ կարող և հատացանել նրան իրեն արտեւ ոյերկնային ծառայության համար, ինչպիս առում եր նա:

Որերն անցնում եյին, Սմման շարունակում եր ամելի ու ազիլի քիչ մասել Զազունյանի մասին, իսկ յերբեմն կատարելապիս մասանում եր նրան: Թեպի Զազունյանը տածած զգացմունքը սառչում եր նրան որտի մեջ և այլ ևս այնպիս չեր անհանգուացնում նրան: «Փառք ասածում մտածում եր նա ազատ և ուրախ շնչերով հազիկ հազ ազատվեցի»: Յեզ նա սիրով ու յերախտազիտությամբ նայում եր Աննային — իր շազատչին: — Միքելիս, ինչ պետք և անելի յես առանց քեզ, — ասում եր նրա այդ հայացքը:

— Ինչեւ յես ինձ այդպիս նայում, Սմմա, — հարցնում եր Աննան այգպիսի դեպքերում:

— Վարովհետեւ զու հրեշտակ ես:

— Վոր ասաված և ուզարկել, ինչպիս ասում և ամուսինուց:

— Այս,

— Բայց տարաբախտաբար, ինձ պղղեր են պակաս, — ասում եք Աննան ծիծաղելով:

— Այո, յեթև միայն պղղերը սատանաներին չեն պատկանում, — նկատում եք Սմման, Իրավ, Աննա, — ասում եք նա կարճ լուսթյունից հետո, — ինչժամ դու այդքան լավն ես:

— Ճոք կամ միրգ խո չեմ, վոր լավը լինեմ, — կանչում եք Աննան ծիծաղելով:

— Չե, Աննա, ասա, ինչժամ դու այդքան լավն ես:

— Են զդիտեմ «լավ» եմ թե վատը միայն զիտեմ, վոր քեզ շատ եմ սիրում:

— Ուրիշն պատճառն այդ եւ:

— Զգիտեմ:

— Այ, յես ել քեզ եմ շատ սիրում, հազար ինչժամ յես քեզ պես լավը չեմ:

— Դարձյալ «լավ»... Լավը վժըն ե, եւ Բարեսիրա, առջոջ, կենսուրմիտ:

— Չե, չե, լավը... լավն ուրիշ ե... Այ, լավն այն ե, վոր... յերբ յես քեզ տեսնում եմ և դու նստած ես մտաս, ինչպես հիմա, քեզ շատ եմ սիրում:

— Ի՞նքդ ել չես հասկանում, ինչ ես ասում, — ծիծաղում եք Աննան:

— Ի՞նչ անեմ, դու խո հասկանում ես:

— Լավ, հետո:

— Հետո այն, վոր դու ասում ես, թե լավն ես նրա համար...

— Են այդ չեմ ասում:

— Դու ասում ես, թե լավն ես նրա...

— Են այդ չեմ ասում, ասում եմ:

— Ասում ես, ասում... Դու ասում ես, թե լավն ես նրա համար, վոր ինձ շատ ես սիրում: Են ել քեզ եմ շատ սիրում, հազար ինչժամ, ասում եմ, յես ել քեզ պես լավը չեմ:

— Դու ինչ զիտես, թե «լավ» չես:

— Համ, յես ել լավն եմ:

— Զգիտեմ «լավ»ն ես թե չե, — ասում եք Աննան ժողոալով, — միայն յերբ յես քեզ տեսնում եմ և դու նստած ես մտաս, ինչպես հիմա, քեզ շատ եմ սիրում:

Սմման այդ խոսքերի վրա ծիծաղելով յերեխայի նման ընկնում եք նրա վզովը և համբուրում եք նրան:

Այսպես անցավ մոտ մի ամիս նմայի սիրոը բոլորովին խաղաղեց։ Ժամանակավոր ալեկոծությունից հետո, նրա կյանքը շարունակեց անցնել նույն կարգով, ինչպես առաջ։ Զաքարը նրա աշխում նորից գարձավ նույն բարի, իրեն պաշտող ամուսինը, նույն զվարեախոսը և նույն «ծիծաղելին», ինչ վոր առաջ։ Արամիկը նույնպես այլ ես այն չարք և «փշացած» ազան չեր, ինչ վոր իր «Հիմանդրության» ժամանակը. դա ել նրա աշխում նորից յերեխաների նույն կատարելատիպն եր, ինչպես առաջ։ Մասնաւերի վրա տեղի-անտեղի այլ ես չեր բարեկանուում Կերպուրն ուսում եր նույն ախորժակով, ինչպես առաջ, քնում եր նույնպես հանգիստ, ինչպես առաջ։ — մի խոսքով, ամեն ինչ առաջվա ընթացքը ստացավ, Ընդհակառակն՝ այժմ նրա կյանքն առաջվանից ել ավելի լավ և աննկատելի սկսեց անցնել, վորովհետեւ վաղեմի սիրելի ընկերունքն — իր «ազատիչ ըրեշտակը» — մասն եր։

Սակայն, չնայելով, վոր նրա սիրոը ստուել եր դեռքի Զազունյանը և նա այլ ես առաջվա նման շնոր չեր մտածում այդ մարդու մասին, այսուամենայնիվ, իներգուուտ անհամբեր սպասում եր նրա վերադարձին։ Ամեն անդամ, յերբ ամուսինը տուն եր գալիս, նա ակամա մի տեսակ հարցական և անհամբեր-հետաքրքիր հայացքով նոյում եր նրան, թե արզյոք լուր կամ հեռազիր շունը Զազունյանից, յերբ ե գալու նա։ Զազունյանի հեռունալուց հետո, վոչ մի անդամ նրա տնունը չեր հիշել ամուսուու։ Զաքարըն ել նրա հիմանդրության պատճեռով համարյա բոլորովին մոռացել եր իր վաղեմի բարեկամին։ բայց յերբ հիվանդությունն անցավ և նրանց կյանքն սկսեց ընթանալ սովորական կերպով, նա նորից հիշեց Զազունյանին և սկսեց խօսել նրա մասին։ Սովորաբար, յերբ խօսք եր բացվում Զազունյանի մասին, պատճեռ եր զանազան արկածներ նրա կյանքից, վորոնց մեջ նա այս թե այն կերպ միշտ հերոս եր ներկայացնուում Զաքարը պատճեռ եր հիսցմունքով, մեկը տան եր շինում, վոչ մի զովասանք չեր բոլուում, վոր շնորյալեր իր բարեկամի հասցեին, բոլորովին չկատկածելով, թե դրանով ինչեր եր շարժում կնոջ սրտում... Եմմայի Զազունյանի վրա սիրահարվելու մասին ունեցած կասկածը նա բոլորովին վանել եր մաքից։

— Ո՞վ ե այդ Զազունյանը, ու. Զաքար, — մի անդամ հարցեց նրան Աննան, վոր ներկա յեր նրա այդպիսի պատճեռ թյուն-ներից մեկին։

— Զազունյանը... Զազունյանն իմ ամենալավ և ամենասիրելի ընկերն ե, — պատասխանեց նրան Զաքարը, — Մի զարմանալի աղջիկ և առաքինի մարդ:

— ԶԵ՞ք չափազանցնում, — ժպտալով նկատեց նրան Աննան: — Այդ ածականները մի տեսակ խորթ են թվում ինձ:

— Չեք հավատում ինձ, հարցրեց Սմբային, — ասաց Զաքարը: — Եմմա, — զարձավ նա կնոջը, — ինչդ ասա, թնչպիսի մարդ և Զազունյանը:

— Այս, Զազունյանը լով մարդ ե, — զարդ կերպով պատասխանեց Եմման:

— «Լավ» — նկատեց նրան Աննան և ծիծաղեց:
Եմման նայեց նրան և նույնպես ծիծաղեց:

— Եմման ինքն ել չեր հավատում, յերբ յես նրան զովում եյի, բայց հիմա՝ տեսնում եք, — ասաց Զաքարը:

— Բայց մի և այդ մարդը, վոր յես չեմ ճանաչում, — հարցրեց Աննան: — Զեր տուն գնում-գուլբո եր:

— Ի՞նչպես չե, — պատասխանեց Զաքարը: — Ենթե մի յերկու յերեք շաբաթ առաջ գայիք, կտեսնեյիք նրան այստեղ. նա համարյա ամեն որ մեր տանն եր լինում: Ենթե դուք յեկաք, նա նոր եր հեռացել այստեղից: Անա զոյց շուտով կվերադառնա և դուք կտեսնեք, կծանոթանաք նրա հետ: Այսոր-վազը սպասում եմ հեռագրի կամ իրեն:

— Ո՞ւր ե զնացել:

Զաքարը պատմեց նրան, թե ուր և ինչ բանի համար ե զնացել Զազունյանը:

— Շուտով մեկ զա տեսնեմ, թե ով և ձեր այդ «աղջիկ» և առաջինիք մարդը, — ասաց Աննան: — Դուք այնքան զովում եք նրան, վոր ակամա շարժում եք հետաքրքրությունս:

— Կզա, կտեսնեք, կծանոթանաք և անձամբ կհամոզվեք, վոր յես ճշմարիս եմ տեսմ, — պատասխանեց Զաքարը: — Զազորսկուն մի քանի անգամ տեսա, Եմմա, — զարձավ նա կնոջը: — Հարցը թե ինչ տարածայնություն և պատահել նրա և Զազունյանի միջև, բայց նա, չնայելով, վոր կոնցերտի գիշերն ասաց, թե յերեւ այդ մի անգամ կիմանամ, բայց հիմա տեսմ ե, վոր այդ մի զաղանիք ե, վոր ինքը չի ասի: Ի՞նչքան ինչպրեցի, — չասաց: Ենս զարմանում եմ, ճշմարիս, թե ինչ զաղանիք պետք ե լինի: Զազունյանին ել մի քանի անգամ խնդրեցի, վոր ասի,

բայց նու ել վոչինչ չեր տում, միշտ հետաձգում եր: Հավատացիր, յիս շատ հետաքրքրվում եմ զրանով:

Սմման վոչինչ չասաց. նու միայն հոնքերը կիսեց և քթի պնդերը լայնացրեց:

— Իսկ այդ Զարծրսկին մը եւ, — հարցրեց Աննան:

— Զարորսկի չե, Զագորսկի...

— Ենրկի դու ել մի ուրիշ «աղնիվ» և «առաքինի» մարդ եւ Զաքարը ծիծաղեց:

— Չե, Զագորսկին մի շատ ճարպիկ և ազատամիտ մարդ եւ, — ասաց նու: — Դու ել իմ վաղեմի ընկերն եւ, ինչպես Զագորսկանը, Փոխողնապահ եւ:

— Նոր մարդիկ են: Զագորսկի... անպատճառ լեհ եւ:

— Այս, լեհացոյ արյուն ել և խոռը:

— Սմման ծանոթ եւ նրա հետ:

— Ուզում եյի ծանոթացնել, չուզեց:

— Ինչու:

— Զգիտեմ. ամեն մեկի հետ, ասումին, չեմ ուզում ծանոթանալ:

— Ա, յերեխ ձեր այդ «շատ ճարպիկ» և «ազատամիտ» մարդը հեռու յի «զարմանալի աղնվությունից» և «առաքինությունից» — նկատեց Աննան ծիծաղելով:

— Ինչու դուք այդպես եք կարծում, — հարցրեց Զարարը:

— Կորովինեան տեսնում եք, Սմման այն առաջինի հետ... Ինչպես եւ նրա ազգը:

— Զագոր... Զագորնյան:

— ...Զագորնյանի հետ ուզեցել և ծանոթանալ, ծանոթացել եւ զովում ենքան, իսկ այդ Զարոր... Զագորսկու հետ չի կամեցեց եւ ծանոթանալ, չի ծանոթացել և, ինչպես յերեսում եւ, չի հավանում նրան: Այնպես չե, Սմմա:

— Դու ել զարմանալի յես Աննա, — ոռանց նրան նայելու, թեթև անբավականությամբ նկատեց նրան Սմման: — Են նրա հետ ի՞նչ զործ ունեմ, զոր հավանեմ կամ չհավանեմ նրան: — Այրիշ բան չկամ խոսելու, զոր նրանց մասին եք խոսում:

Աննան ձեռքերը զրեց նրա ծնկների վրա, առաջ թեքվեց զեղի նրա զեմքը, խորամանկությամբ նայեց նրա աչքերի մեջ և հանկարծ ծիծաղեց:

— Ինչու «աղնիվ» և «լավ» մա, դու մասին խոսելիս ել չապցիր, զոր ուրիշ բաների մասին խոսենք, — նկատեց նու:

Եւ մանե սաստիկ կուրքմբեց,

— Ի՞նչ չար ես, Աննա, — վոստները հաստակին խփելով, բացականչեց նա բարկացած և վեր կացավ տեղից, — Այնպիսէ բաներ ես տում, վոր ակամա շփոթեցնում ես մարդու:

Եեվ նու դժգուն հեռացավ զեպի լուսամոռուը:

Աննան զեր կարճ ժամանակ մնաց նստած, հետո լուս, մըսպատակ վեր կացավ, մոտեցավ նրան և զրկեց նրա իրանը:

— Ի՞նչ նեղուիրու ես, Սմմա, — ասաց նա կամաց, — յիս կատակ եյլ անում, իսկ դու... մեկ նայիր քթիզ, ինչքան և կախվել, իսկ հոնքերդ, իսկ շրթունքներդ...

Նու բարձրաձայն ծիծաղից և ամուր համբուրեց նրա օտնքը:

— Դեռ, հաշտվենք, հաշտվենք, սիրելին, — ասաց նու — Ներիր ինձ, ել չեմ ասիր... Դեռ, շուտ, թե չե... լաց կը ինձեմ:

Սմման աչքի տակով նայեց նրան ու սկսեց անձայն ծիծաղել:

— Ա, հաշտվեցինք, հաշտվեցինք, — յերեխայի նման բացականչեց Աննան և թողնելով նրան, սկսեց ծափահարել: — Հաշտվեցինք, հաշտվեցինք, — կը կնեց նա, գարձյալ զրկեց նրան և համբուրեց:

Զաքարը, նստած իր տեղը, լուս նայում եր նրանց և յերշանիկ բարեմրտությամբ շարունակ մպտում եր:

XX

Անցավ գարձյալ յերկու շաբաթ: Որը շաբաթ եր, Սմման սպասում եր ամուսնուն հաշի: Այդ որն Աննան ինչ-վոր պատճեռով չեր յեկե: Սմման նստած եր մենակ և նոյն որվա լրագիրը ձեռքին՝ կարդում եր: Կերջապես Զաքարն յեկավ, նա այնպիս ներս վազեց կնոջ մոտ, վոր Սմման մինչև անզամ վախեցավ:

— Հեռազբի, Սմմա, հեռազբի, — բացականչեց նա, ձեռքին մի թուղթ շարժելով: — Զազունյանը գործը տարել և և զալիս և Վաղն առավույյան այստեղ կը ինի Անա, կարդա:

Նու ձեռքի թերթը ձգեց կնոջ ծնկների վրա:

Հեռազբի անունը լսելով, Սմմայի սրտում հանկարծ ինչ-վոր շարժվեց: յերկյալ եր արյոյոք այդ, թե ուրախություն, ինքն ել չզիտեր, միայն զզաց, վոր սիրուն սկսեց թը ուսւ Նա մեքենայաբար վերըը ծնկներից հեռազբը և լուս կարգաց հետեւյլը, վոր միւնույն եր, թե չկարգաց, վորովնեան զբանից վուինչ հասկացավ սաստիկ շփոթված լինելու պատճեռով: «Դործս տա-

բար՝ Կաղն՝ առավոտայան զնացքավ այդունք եմ Զազունյանք։ Նու մեկ ել կարդաց, դարձյալ վոչինչ չհասկացավ և հեռագիրը լուս մեկնեց Զաքարին։ Նրա ձեռքը թեթև դողում եր:

— Ի՞նչպես ես, վերջապես զալիս ե, թե վոչ, — կանչեց Զաքարը, հեռագիրն առնելով։

— Ի՞նչպես ես ներս ընկնում, վախեցրիր, — հանգիստ, մինչև անզամ սառնությամբ նկատեց նրան նմաններ:

— Ուրախություննից, ուրախություննից, սիրելին Ներիր։ յեթե վախեցրի Աննան չմ յեկել այսոր. մեկ նրան ել ավետեմ Դիմավորելու զժու ել կզար յերկաթուղու կայարան։

— ԵՇ ինչու պիտի զամ, — այս անզամ արցեն ուղղակի սառնությամբ պատասխանեց Նմման, տոսնց նրան նայելու։

— Հա, քո կամքն ե, — շտապով վրա թերեց Զաքարը։ — Առավոտայան այնպիս վաղ յես ինքու ել չեմ տանի քեզ. մվ զիտե, դարձյալ շմբուն, ավելի լավ ե, յես մենակ կզնամ, կը դիմավորեմ և հենց այնտեղից ուզգակի կրերեմ այստեղ թեյի. Ի՞նչ կասես։

— Ի՞նչպես կամենում եմ, — պատասխանեց Նմման և վեր կացավ տեղից։ — Ասթմ սեղան պատրաստեն, — հարցրեց նա։

— Ի հարկե, ի հարկե, Ուրեմն այդպիս վաղն տոտավոտայան... Նմման ել չլսեց նրան և դուրս զնաց։

Սեղան հաստծ ժամանակ նու համարյա բոլորովին չեր խոսում և յեթե խստում եր, այն ել սառնությամբ, սկզայն, յերեկոյան, յերը Աննան յեկավ նրա մոտ, նա հանկարծ սատիկ ուրախություն զգաց, ինքն ել շիմացավ, ինչ բանի համար։

— Ավելիութ տամ ձեզ ա. Աննա, — բացականչեց Զաքարը։ — Զազունյանը զալիս ե.

— Ա, վերջապես, — ասաց Աննան։

— Դուք ցանկանում եյք նրան տեսնել և ահա վաղն տոտավոտայան անզամանակ կտեսնեք։

— Այս, յես շատ եմ հետաքրքրվում տեսնել ձեր այդ «զարմանալի» ազնիվ։ և «տոտաքրի» մարդուն։

— Վազը, վաղն տոտավոտայան։ Այսոր յես հեռագիր ստացա նրանից. վաղն տոտավոտայան զնացքավ այստեղ կլինի. այնտեղից նրան ուղղակի պետք ե թերեմ մեր տուն թեյի։ Դուք ել, ի հարկե, այստեղ կլինիք և կծանոթանաք նրա հետ։

— Սքանչելի՛, սքանչելի՛, — կանչեց Աննան շինծու ուրախությամբ։ — Բայց ի՞նչ ես կարծում, նմմա, — զարձավ նա ըն-

կերռունան. — Կուսվանդմ ձեր... ըը... ինչպես և նրա ոզգը... Զա-
ղունյանին կուսվանդմ.

— Զարժմանալի հարց են տալին. յես ինչ գիտեմ, — պատաս-
խանեց նման ծիծաղելով:

— Չե, այնուամենայնիվ:

— Կարծում եմ, վոր կուսվանձեն:

— Հա... մ... Այս ինչ լավ կէինի. Բայց գիտեք ինչպիսի մարդ
եմ յերեակայում նրան. Յես նրան յերեակայում եմ հիսուն և յոթ
տարեկանուն...

— Ուժ, — կոմիքական սարսափով հառաջեց Զաքարը: —
Ի՞նչ եք ասում. նա հազիվ քառասուն տարեկան վնի:

Սման սկսեց ծիծաղել:

— Ի՞նչ անեմ. ուզում ե քսան տարեկան լինի, բայց յես
նրան հիսուն և յոթն եմ յերեակայում, — ասաց Աննան:

— Դեյ, վոր այդպիս ե, ասեք վաթուն տարեկան, Ելի:

— Չե, հիսուն և յոթը. Յես նրան յերեակայում եմ հիսուն
և յոթը տարեկան, յերեկար, մինչև կուրքքը ալեխառն մորուքով,
ծիծենանակի թերբի նման բեխերով...

— Ուժ, ուժ, — շարունակեց հառաջել Զաքարը, — իսկ Եր-
ման ծիծաղեց:

— ... Հազուսաը փոքր ինչ հնացած, ճիխտված և անհռունի, —
շարունակեց Աննան: — Աչքերը շարունակ մօլում են, զիմքից
միշտ մեղք և կաթում, ձայնը բարակ եւ կանանց հետ ծանրութ-
աւիս մինչև զետին զլուխ և առիխո և ամենաընտիր կոմպլիմեն-
տիր ասում: Բարեկելիս ամուր և յերեկար սեղմում և ձեռքը. Ամենքի
հետ, առանց բացառության, սիրով և խսում և ամեն մի զեպ-
քից ողուս և քաղում, վոր ձեզ վորեն ծառայություն մատուցի:
Շատախոս ե, փոքր ինչ — ներեցեք — թեթևամիտ, պարծենկատ
ե, վերջապիս, բռնոթի յե քաշում:

— Ուժ, — այս անգամ իսկապիս սարսափած զոռաց Զա-
քարը և ծիծաղից թուլացավ:

— Ի՞նչ ես ասում, Աննան, ինչ ես ասում, — մինույն ժամա-
նակ կանչեց նման և նույնպիս ծիծաղից թուլացավ:

— Ի՞նչ ե, վոչ մի նմանություն չկմ իմ և ձեր Զազունյանի
միջն, — հարցրեց Աննան:

— Մի զիմ անգամ, մի զիմ, — ասաց Զաքարը փոքր ինչ
հանգստանալով ծիծաղից: — Բռնոթի յե քաշում, — մտարերեց
նա և զարձյալ ծիծաղից թուլացավ:

— Բանոթի քաշելը վմբանեղից գտար, — ասաց Նմման շարունակելով ծիծաղել:

— Դե թու անեմ, վոր իմ յերեակայած Զազունյանը բռնոթի յե քաշում, — պատասխանեց Աննան նույնակես ծիծաղելով:

Գիշերը Նմման ձկարողացավ քնել: Զազունյանի մոտալուս զալուստը արդեն սկսել եր բորբոքել նրան նրանի մեջ զեպի նա ունեցած զզացմունքը, վորը, ըստ յերեայթին, բոլորովին ստուել և հանգիստ եր տվել նրան: Մաքերը նորից թռչում եյին զնոպի այդ ռոտար մարզը, յերեակայությունը նորից ստեղծում եր նրա պատկերը, ամեն վոք և ամեն ինչ նորից սկսում եր ծածկվել թանձր քողով և նրա առջև սկսում եր փայլել միայն այդ պատկերը: Իսկ այն զիտակցությունը, վոր վազն սոսավույան պետք և տեսնի Զազունյանին, խոսի նրա հետ, նրա սիրուը լցնում եր անհուն բերկությամբ: Վաղը, վմշը... Ինչու գիշերն այդքան դանդաղ և անցնում... յԵրբ պետք եր լուսանա....

Վերջապես լուսացավ: Զաքարը շտապեց զեպի յերկաթուզու կայարան, իսկ Նմման թաց տանը, հազնվեց և մինչև Զազունյանի գալը շուտ-շուտ մոտենում եր հայերան: Նա յերկար ժամանակ կանգնած եր թում հայերու առջեւ Այլին այնպես անհամբեր չեր, իւ չուիս գիշերը: մինչև անզամ ուզում եր, վոր Զազունյանն ուշ զա, վորովհետև իրեն մի տեսակ հուզված և շփոթված եր զգում և ուզում եր ժամանակ վաստակել, վորպեսզի փոքր ինչ անցնի այդ արտասովոր հուզունքն ու շփոթությունը և ինքը կարողանա Զազունյանին հանգիստ ընդունել: Նա այնքան եւ ուրախ չեր, իւ չուիս գիշերը: ինչ-վոր թեթև ախրություն պաշտրէ եր նրան և մի տեսակ անհասկանալի յերկյուզ ճմլում եր նրա սիրուը:

«Ախ, զո՞նե Աննան զա շուտով, տառմ եր ինքն իրեն, յերբ տեսնում եր, վոր հուզմունքն ու շփոթությունը վոչ թե անցնում, այլ ընդհակառակը՝ հատզեւու սասականում եւ «Մենակ... վախենում եմ...»:

Զաքարն ու Զազունյանն ուշանում եյին: զնացքը վաղոց արդեն ժամանած պետք և լիներ: Անհամբերությունը նորից պաշարեց նրան: Նա նստեց լուսամուտի առջև և սկսեց զորս նայեր Որը կիրակի լինելով: փողոցը սովորականից ավելի կենդանություն եր սացել: Մարդիկ անց ու դարձ եյին անում: Մասաներն ու ազախինները՝ կողովները ձեռքներին՝ կամ զնում

եյին շուկա կամ վերադանում եյին շուկայից։ Յեղանակը տաք երը Գարնանային առողջարար ողն ախորժելի թարմությամբ շոյում եր մարդու զեմքը։ Փողոցում տնկած հակակի ծառերն արդեն բավական ծաղկել եյին։ Նրանց նորածիլ կանաչ տերեները լուսավորված տառվոտարան արևի վռակեցող ճառագայթներով՝ պըսպղում և կարծես կաշեն եյին արձակում։ Ամբողջ քաղաքը ըստում եր։ Հեռվից լսվում եր յեկեղեցիների մեն և փոքր զանգակաների ուրախ զողանջուռը։ Հրաշալի յեր յեղանակը։ Սմման հանկարծ նորից անհուն բերկություն զգաց։ Ինչ-վոր քաղցր ութեթև մի զգացմունք տիրորժելի կերպով ճմլեց նրա սիրառ։ Նա ժպատաց, ձեռքերը ջզաձգորեն տարածեց ողի մեջ, վլորպես թե մեկին գրկելով, բռնեց իր տսերից և արմռնելներն ամուր սեղմեց կրծքին։ Նույն բովային նրա սիրան այն աստիճան թրթռաց, վոր մինչև անզամ ցավ տվեց։

«Ահ, միայն, — շնչաց նա, խոնարհվեց ծնկների վրա և ցընցողաբար կուչ յեկավ։

Կարճ ժամանակ մեաց այդ զրության մեջ, Փողոցից կառքի դրբաց լսվեց։ Նա վեր թռավ տեղից և լուսամռւտից ցած նայեց։ Կառքով յեկողները Զաքարն ու Զազունյանն եյին։ Զազունյանին տեսնելուն պիստ մի դոդ անցավ նրա ամբողջ մարմարվ։ Շոտարքի մտածեցավ հայելուն, մազերը, հագուստն ուղղեց և մեքենայաբար, կարծես սաստիկ հոգնած, նստեց։

Մի քանի բովայից հետո Զաքարը մտավ շտապով։
— Սմմա, լնչ ես շինում, — ասաց նա, — յեկ, Զազունյանը յեկավ։

Սմման վեր կացավ և դուրս գնաց նրա յետեից։

XXI

Հյուրասենյակում Զազունյանը կանգնած եր լուսամռւտի մոտ և հանում եր շականակազույն ձեռնոցները։ Սմմային տեսնելուն պիստ արագ մտածեցավ նրան։

— Բարեն ձեզ, տիկին, — ասաց ժպտալով և ամուր սեղմեց նրա ձեռքը։

— Բարի լինի ձեր գալուստը, — պատասխանեց Սմման։ Այժմ նա ի, են բոլորովին համարձակ եր զգում։ — Շնորհավորում եմ, գործը տարել եք։

— Շատ շնորհակալ եմ։ Բայց այժմ լնչպես եք զգում ձեզ, տիկին, — հարցրեց Զազունյանը, մի առանձին հայացքով նայելով նրան։ — Զաքարն ասաց, վոր դուք հիվանդ եյիք։

— Այս, վորքը ինչ մըսել եյի... հիմար բան եք, — պատասխանեց Սմբատ:

— Ով զիտե, ինձ ճանուպարբ գնելու գիշերը մըսեցիք. այն գիշեր բավական ցուրտ եք: Եշմարիս, խիղճո ինձ տանջում եւ տիկին, վոր յես եմ յեղել ձեր մըսելու պատճառը:

— Այս, դուք մի այնպիսի մեծ նշանակություն եք տալիս այդ բանին, — ասաց Սմբատ վորք ինչ կարմրելով: — Խոզիմ նըստեցեք: Են ձեզ յերկար ժամանակ սպասում եյի թյուր:

— Հա, գիտեմ ինչու պարան ուշացանք, Սմբատ, — ասաց Զաքարը: — Են իս ուղում եյի Զազունյանին կայարանից ուղղակի այստեղ բերել, բայց վորովհետեւ հետը ճամբրուկ-ճամբրուկ ուներ, այդ պատճառով դեռ զնացինք հյուրանոց, մի սենյակ վարձեցինք, ճամբրուկ-ճամբրուկն այնուեղ թողինք և մինչև հագուստը փոխեց, մինչև այս, մինչև այն, մինչև հյուրանոցից զորս յեկանք, մինչև կառը նատեցինք, մինչև յեկանք, մինչև կառքից իջանք, մինչև զանգը թաշեցինք, մինչև ծառան դուռը բաց արեց, մինչև բարձրացանք և մինչև ներս մտանք այստեղ, արդեն բավական ուշացանք: Հիմա վազեմ ասեմ, վոր մեզ թիզ հրամցնեն:

Ծեկ իսկապես դուրս վազեց:

Զազունյանը, հակառակ իր սովորության, համարյա շարունակ նայում եր Սմբային: Նրա հայացը և տիսուր եր, և քննույց, և հասացննին, կարծես վայսայում եր և մինույն ժամանակ ինչ-վոր բան եր վորուում Սմբայի զեմքի վրա, վոր և աջողվում եր և չեր աջողվում զանել: Այն ինչ այդ հայացը շփոթեցնում եր Սմբային: Նա չեր կարողանում համարձակ նա, ել Զազունյանին և շուտ-շուտ կարմրում եր: Զազունյանը վերջապես զադարեց նրան նայել զննող հայացըով:

— Ուրեմն, վասոք աստծո, տիկին, այժմ լավ եք, — ասաց նա, կարծես, թիթեացած մի ծանր բերից:

— Այս, այժմ ինձ կատարելապես առողջ եմ զգում, — պատասխանեց Սմբատն և, խոսքը փոխելով, հարցրեց: Թե ինչպես մկանվեց և ինչպես անցավ նրա գործը, վորովհետեւ չեր ուղում վոր իր հիվանդության յերկար խոսվի:

Զազունյանը համառոտակի պատճեց իր դատի ընթացքը Կարճ ժամանակից հետո յեկավ և Աննան Սմբատն և Զաքարը անմիջապես ծանօթացրին նրան Զազունյանի հետո: Սենյակը մանելուն պես աեսնելով Զազունյանին, Աննան իսկույն հասկա-

շավ, վոր նա յեւ էԱ՛, ահա թե ով և սրբնց շղարժմանալի աղնիվ» և «առաքինիք մարդը մտածեց նա, նայելով Զազունյանի փոքր ինչ այրված, լուրջ գեմքին և լայն, այրական թիկունքին, Նրան տեսնելու հենց առաջին վայրկյանից նա հիասթափվեց իր յերեսուկայած Զազունյանի վերաբերմամբ. — Ինչըսն զանազանությունն... Նա հիւեց Զաքարի զուֆք «ուփը» և, նայելով նրան ակամա ժըպտաց, — Իսկապէս վոր — մով, մով, ով. Զաքար, — կարծես տառմ եր նրան:

Նա զննողաբար նայեց Սմմայի պայծառ և միննույն ժամանակ շփոթված գեմքին:

— Ինչու այսոքան ուշացար, Աննա, — հարցըրեց նրան Սմման: — Եხո քեզ այսոր ավելի վաղ եյի սպասում:

— Եհկեղեցումն եյի սիրելին, — պատասխանեց Աննան: Մինչեւ պատարագը կիրքանար, բավական ժամանակ անցավ: Ել առն չգնացի, յեկեղեցուց ուղղակի այստեղ յեկա: Իսկ զու յեկեղեցի զնմամ ես, — հարցըրեց նա:

— Ինչպես չեւ, — պատասխանեց Սմման: — Վոչ մի կիրակի յես յեկեղեցուց յետ չեմ ընկնում, միայն այսոր չկարողացա զնաը վորովնետն սպասում եյի ով. Զազունյանին:

— Ցավում եմ, տիկին, վոր իմ պատճառով իզուր յետ եք ընկել յեկեղեցուց, — ասաց Զազունյանը:

Սմման թիթեւ կարմրեց:

— Վոչինչ, ով. Զազունյան, — աննկատելի հեզնությամբ պատասխանեց նրա տեղ Աննան: — Թանգարին հյուրի համար մի որ յեկեղեցուց յետ ընկնելը, կարծում եմ, այնքան ել մեծ զոհարերություն չպետք ել լինի:

Աննան իր ծանօթանալու հենց այդ առաջին որից զգում եր, վոր Զազունյանի հետ ուրիշ կերպ չեր կարողանում խոսել, յեթե վոչ հեգնորեն. ինչժամ, — ինքն ել չեր հասկանում: բայց միննույն ժամանակ նա մի տեսակ հաճույք եր զգում նրա հետ խոսելիս և ուղում եր խոսել:

— Եեկեղեցի մենամկ ես գնում, — հարցըրեց նա Սմմային:

— Վոչ, Արամիկին ել հետոս եմ տանում:

— Հազար ով. Զաքարը, — հարցըրեց Աննան, նայելով Զաքարին:

— Այդ բանում յետ ծույլ եմ և ժամանակ ել չունեմ զնալու, — շտապով ասաց Զաքարը և ծիծաղեց:

— Զի՞նի՞թ թե դուք ել մեր նոր մոզի յերիտասարդներին եք ուղում հետեւել:

— Ո՞յ, Շարատումի կառպիկներին, — կանչեց Զաքարը.

— Ի՞նչեւ զոք այզպին ստորացնում եք մեր յերիտասարգությանը, — նկատեց նրան Աննան, — Ի՞նկատի անեցեք, վոր յետեր յերիտասարդության զարգացած մասն ունեմ աչքի առջեխիկ զարգացած մասն ամեն բանի, առավելապես կրոնական խընդիրների վերաբերությամբ համոզունքով և զործում:

Ենք Աննան նայեց Զազունյանին, կարծելով, «Թե նա կապատասխանի իրեն (նա այդ խոսակցությամբ բաց արեց իսկապես նրա համար, վոր Զազունյանին խոսեցնել առ), բայց Զազունյանը լուռ եր:

— Այսինքն զոք ուզում եք տաել հաստա համոզմունքով, — վրա բերեց Զաքարը:

— Կարող եք և այզպին Հանկանալ, — ասաց Աննան, զարձաւ նայելով Զազունյանին:

— Դիտեմ, դիտեմ, — պատասխանեց Զաքարը: — Ի հարկեն, հաստա համոզմունքով և զործում. աստեղու չեն հավատում — Դարվին, կրոն չեն ընդունում — Ռուսոն. իսկ Դարվին + Ռուսոն = նիշտիկը, վոչչափանության:

Ամենքը ծիծագեցին նրա այդ համեմատության վրա, իսկ ինքն — ավելի:

— Հա, Արսեն, — հանկարծ զարձավ նա Զազունյանին. — ասում են, վոր նիհիլիստների համար վոչ մի, թեկող ընատուր, բարոյական որենք չկա. և վոչ մի աստվածային կամ մարդկային որենքով իրենց կապված չեն համարում և խիղճ ել չեն հանուչում. ճիշտ և այդ:

— Այզպիսի զենքում կարծում եմ, վոր յերկրորդ ջրհեղեղ պետք և լինել, — պատասխանեց Զազունյանը: — Ի հարկեն, մարդկությունը զեր այդ աստիճան չի ընկել և չի կարող ընկել:

— Ե՞նկնի, կը նկնի, — բացականչեց Աննան, — Անպատճառ կը նկնի և — շատ շուտով. Խոր թափանցողություն և խոր հասկացողություն չի հարկավոր, վորպիսպի ամեն մեկն այդ բանում շնամուզվի նայեցեց ձեր շուրջը, նայեցեց առորյա կյանքին՝ վեր տերկում և վեր ազգության մեջ վոր ուզում եք, — և զոք կտեսնեք, վոր բարոյականությունը ծանր հիվանդի նման հազիվ հազ կանզնում և վուաքի վրա և այսոր թե վազն անպատճառ պետք և ընկնի, մեռնի. Դրա տեղ անբարոյականությունը Դամոկլեսի սրի նման կախված և մարդկության զլիին և ամեն բռնկ սպառնում և իշնել իր զործը կատարելու. Մի քայլ ել զեպի անբարո-

յականություն, — և ամեն ինչ վերջացած և մարդկության համար, նրա վիճակն արգեն վճռված է:

— Իմ կարծիքով, սխալվում եք, տիկին, — պատասխանեց Զազունյանը. — մարդկության վիճակը դեռ չի վճռված, նրա վիճակը դեռ չի վճռված, նրա վիճակը նոր և վորոշվում է ձամարփակ, բարոյականությունը ներկա ժամանակում, ըստ յերեսոյթին, ընկած և կարծես այդ իսկապես այդպես ել ե, ըստ յերեսոյթին, ինչպես դուք ասացիք, նա նմանում է ծանր հիվանդի, վոր այսոր թե վազը պետք է ընկնի, բայց, իմ կարծիքով, դուք շատ եք շատապում զատավճրութիւնում, Բարոյականությունը ծանր հիվանդի նմանեցնելով, դուք այդ հիվանդի վրա նայում եք հուսահատ հիվանդափափրոջ նման, վոր ձեռքիքն արգեն լվացել, յետ և նստել, այն ինչ՝ յեթե դուք ուզում եք իսկապես իմանալ գործի եյտ թյունը, պետք և նայեք վոչ թե այդպես, այլ փորձառու բժշկի նման, ինչպես վոր ծանր հիվանդն ունենում է ճգնաժամ — կրիպիս, վոր վերջնականապես փորոշում և նրա զրությունը, այսինքն՝ վոր նա կամ պետք և մեռնի կամ պետք և առողջանա, նույնապես և մարդկությունը. — մարդկության ներկա ծանր զրությունը նրա ապազայի ճգնաժամն է, այդ ճգնաժամը վերջնականապես կվճռվի, թե արդյոք մարդկությունը պՄտք և մեռնի — այսինքն՝ բարոյապես բոլորովին ընկնի, թե պետք և առողջանա — այսինքն՝ բարոյապես վերածնվի:

— Ուրեմն միննույն ե, յիս չեմ կարող նայել և իբրև փորձառու բժիշկ, — ասաց Աննան, — քանի վոր փորձառու բժիշկն ել չգիտե, թե ինչը իսկապես կվերջանա՝ հիվանդության ճգնաժամը — մահավ, թե առողջությամբ, թե պրատիկ մինչ ոգուտ դրանից:

— Ինչու չե, — պատասխանեց Զազունյանը: — Փորձառու բժիշկը, յեթե նա լավ հասկացող ե, հետեւելով հիվանդության ճգնաժամին, այնուամենայնիվ, դարձյալ մի հետևանքի վրա ավելի կարող ե պնդել, քան թե մյուս հետևանքի վրա իսկ այդ մեծ բան ե, այստեղ դարձյալ հոգյան կա:

— Բայց դուք վեր կողմն ավելի յեք հակված մարդկության վերաբերմամբ, — հարցրեց Աննան զարձյալ աննկատելի հեղությամբ, — զեզի բարոյականության կատարյալ անկժամ, թե զեզի բարոյական վերածնություն:

— Դեպի բարոյական վերածնություն:

— Ուրեմն մարդկության ներկա զրություն՝ ճգնաժամին հետեւելով դուք մյու յեզրակացության եք յեկել, մյու հետևանքի վրա ավելի յեք պնդում:

— Այս;
 — Արդյոք կարծեց եմ հարցնել, ինչ հիմունքով;
 — Այս հիմունքով, վոր յուրաքանչյուր մարդ խիղճ ունի;
 — Ի՞նչ բան և «խիղճը» յես չեմ հասկանում, — ասաց Աննան,
 վոր ի ներքուստ սկսել եր զրգովին, ինքն եւ շիմանալով, թե
 ի՞նչու;
 — Եիդնը գիտակցությունն ե, — պատասխանեց Զազուն-
 յանը;
 — Ծուրաքանչյուր մարդ առանց բացառության գիտակցու-
 թյուն չունի;
 — Ունի, բայց մեկինն ավելի զարգացած ե, մյուսինն ավելի
 թույլ. — այդ գաստիարակությունից և մտավոր զարգացումից և
 կախված. լավ գաստիարակությունն ստացած և կրթված մարդու
 գիտակցությունը զարգացած ե, իսկ անխնամ թողածինը — թույլ։
 Բայց բանն այդ չե. բանն այն ե, վոր յերկումն ել ունեն զի-
 տակցությունն, որոնք և — խիղճ։ Հայտնի միացած վոր արյունարրու-
 ավազակ-մարզասպաններն անզամ հասկանում և զգում են իրենց
 արարքի վաստությունը։

— Ինձ հայտնի չե և յես վոչ վոքի չեմ հավատա, մինչեն վոր
 ինձ ինքն արյունարրու ավազակ-մարզասպանն այդ բանում
 անձամբ շխոստովանվի, — պատասխանեց Աննան։

Նա այլն չեր կարողանում իրեն զսպել. զրգիռն ակամա-
 յերեան եր զալիս։

«Խոսում ե այնպես, կարծես իրենից ավելի խելոք մարդ չկա-
 աշխարհին յերեսին, — մտածում եր նա. — այստեղ գառներ և
 գտեր, ովզում և խարել, իրեն անսսխալական ցույց տալ... ուրոյն
 մաքեր և հայտնում իրը թե...»։

Զաքարը, վոր հայտի չեր, թե ինչ հրաշքով այդքան ժամա-
 նակ լուռ եր, հանկարծ, ինչպես առում են, կոտրած գդալի պիս-
 մեջ ընկավ, բայց նման, տեսնելով, վոր խոսակցությունն Աննայի
 պատճառով քանի զնում, այնքան սուր ընթացք և ստանում,
 անսպասելի հմտությամբ վերջ տվեց նրանց պիճարանությանը։

XXII

Զազունյանի և Մարկոսյանների միջև բարեկամությունն իս-
 կապես այժմ սկսվեց։ Այս անզամ Զազունյանն առանց այլնայլու-
 թյան արդեն ինքն եր հաճախում նրանց տուն, և շարաթվա մեծ
 մասը նրանց միմյանց մոտ կարելի յեր անսնել, ի հարկե, նրանց

Ընկերության մեջ պակաս զեր չեր կտառարում և Անհանուն Շնայելով, վոր ինչ-ինչ անհասկանալի պատճառներով նա հենց սկզբից շսիրեց Զազունյանին, բայց և այնպես այդ մարդու ներկայությունը նրա համար բոլորովին անախորժ չեր. մինչև անգամ, յերբ պատահում եր, վոր Զազունյանը բացակա յեր լինում Մարկոսյանների տնից, նու կարծում եր, թե մի բան պակաս և և այդ պակասն իսկույն լրանում եր, յեր Զազունյանը զալիս եր: Զազունյանի հետ խոսում եր միշտ հեղոնոց յեղանակով, ինչպես առաջին որը. ամեն բանում աշխատում եր հակառակել նրան, և այդ պատճառով որ չեր պատահի, վոր նրանք վորենք բանի մասին չփրիարանեցին միմյանց հետ: Զազունյանը նույնպես հենց առաջին որից չսիրեց նրան և, չնայելով, վոր այդ կոնց ներկայությունն — ընդհակառակն — անախորժ եր նրա համար, այնուամենայնիվ, նա զեղի Անհան նույնքան քաղաքավարի և հարգանքով եր վերաբերվում, վորքան և զեղի նման: Սպակյան ինչ ել վոր լիներ, այնուամենայնիվ ժամանակը բոլորի համար ել անցում եր ուրախ և աննկատելի կերպով:

Այն ինչ նման որ որի վրա սարսափով տեսնում և զգում եր, վոր ինքն իսկապես սիրահարված և Զազունյանի վրա, ապա թե վոչ՝ թնչ եր նշանակում այն անհուն ուրախությունը, վոր Զազունյանն իր ամեն զալովը բերում եր նրա համար. թնչ եր նշանակում սրտի այն յերջանիկ թըթիռը, վորով ամեն անզամ նու հանգիստում եր Զազունյանին. թնչ եր նշանակում այն առանձին ախորժելի զգացումը, վորով նայում եր նա Զազունյանին, լսում եր նրան. թնչ եր նշանակում այն անտանելի, սպանիչ զգացումը, վոր պաշարում եր նրան, յերբ մի որ չեր տեսնում Զազունյանին. թնչ եր նշանակում... մի խոսքով՝ թնչ եր նշանակում այն ժշտական տենդոյին զրությունը, վորի մեջ նու զգում եր իրեն: Մի առժամանակ քնած զգացմանը նորից զարթել եր նրա կրծքի մեջ և այս անգամ արգեն այնպիսի ուժով եր սկսել գործել, վոր թվում եր, թե այլևս վոչ մի Անհան չեր կարող այդ զգացմանը նորից քննեցնել, հանգստացնել. Այս արդեն առաջվա զգացմանը չեր. առաջվա զգացմանը մի թեթև քամի յեր, վոր հազիվ շարժում եր ծառերի կատարները, բայց այժմյան զգացմանը մի անեղ փոթորկի և, վոր, հետզհետե սաստկանալով, սպառնում և ունագին կաղնիներ հիմն ի վեր տառալեն՝ անարգել առաջ սլանալու համար: Սկզբում նման այդ զգացմանըին անձնատուր յեղավ կուրորեն, առանց մտածելու, և այդ ժամա-

նակ նա իրեն կատարելապես յերջանիկ եր զգում, բայց մի անգամ, յերը ամուսինը նրան գուրզուրում եր, հանկարծ, մի ակընթարթում սոսկալի թույն ընկավ նրա սրտի մեջ և այդ որից արգելն սկսվեց նրա համար անսասելի հոգեկան տանջանքների ժամանակը, նա մի անգամից զգաց, թե վորքան սարսափելի յերը զրությունը Դառն զիտուկցությունն, ինչպես շիկացած յերկաթ, շանթում եր նրա ողեղն ու սիրար:

«Մնչ անեմ՝ միասնական անսասելի հուսահատությամբ մասնաւում եր նաև: «Այս մնչ կրակ և սրաւումա... մեր փախչեմ, լինչպես ազատվեմ այս անսասնելի դրություննից... Գոնե Զաքարյանցնան բարի վիճնի, այնքան լավը չինի, զո՞նե նա վատ վարդելիս լինի ինձ հետ... ինչու յես ասում եմ նրան, զզվում եմ նրաննից... այն ժամանակ յես կփախչելի նրա հետ, հավելյան նրանը կլինելի, նրա աղախինը, նրա սորուկը կլինելի... տեր ասաված, տեր ասաված...»:

Ենի ինչպես մի մարդ, վոր, հանկարծ սթափելով, տեսնում է իրեն շրջապատված կրակի առնելի բոցերով և վոչ՝ մի տեղից, վոչ մի կողմից յելք չի գտնում ազատվելու համար, նույնպես և նա: — վոր կողմից ել քննում, կշուռ եր իր զրությունն, ամեն կողմից տեսնում եր իրեն շրջապատված տանջանքով և հուսահատությամբ: Մի յելք միայն կար այդ զրություննից ազատվելու համար, այն և Զազունյանի ընդմիշտ հեռանալը, բայց այդ այն աստիճան սոսկալի յեր թվում նրան, վոր նա մինչև անգամ չեր ուզում, վախենում եր այդ մասին մտածել: Նրան թվում եր, նա զզում եր, թե Զազունյանի հեռանալուն պես վշտից և հուսահատությունից անպատճառ կմեռնի ինքը, Ընդհակառուկը, նրա բոլոր մտավոր և հոգեկան աշխարհը մարմարցիլ եր միայն այն անհուն ցանկության մեջ, վոր Զազունյանը միշտ իր մոտ, իր աշքի առջև լինի:

«Մնչ անեմ, մնչ անեմ՝ անզաղար մտածում եր նա տանցվելով և վոչ՝ մի տեղից պատասխան չեր ստանում այդ «մնչ անեմ»-ին:

Այն ինչ Զազունյանը շարունակում եր հաճախել նրանց տուն: Նրան տեսնելուն պես, կարծեն մի կտխարդական զրությամբ, նմանայի տանջանքն իսկույն չքանում եր և զրա տեղ նրա սիրաը լցվում եր անհուն ուրախությամբ: բայց նա ամեն կերպ աշխատում եր զսպել իրեն, վորպեսզի վոչ՝ մի բանով չմատնի իրեն, մանավանդ այն ժամանակ յերը Աննան ներկա յեր լինում,

վորովնեաւ վոչ վոքից այնքան չեր վախենում, վորքան Աննայից, Առանց այն ել նրան թվում եր, թե Աննան արդեն ամեն բան հասկանում եր և իրեն միշտ հետամուտ և լինում, միշտ կասկածավոր աչքով և նայում նա սկսեց խորշել Աննայից. Ինչ-վոր անհայտ մի զգացմունք յետ եր մզում նրան իր վաղեմի ընկերունոց և այլն թույլ չեր. տալիս այնպես մտերիմ լինել նրա հետ, ինչպես առաջ նա մինչեւ անզամ զզում եր, վոր Աննան հետզետե ընկնում եր իր աչքում և մի տեսակ տեսելության զգացմունք բռն եր զնում իր սրբի մեջ զեպի նա, մանավանդ այն ժամանակ, յերբ Զազունյանի մասին խոսք ընկնելով, Աննան միշտ իրեն հասուկ հեղունոթյամբ եր խոսում նրա մասի ։ Շատ անզամ Աննայի խոսակցության այդ հեղնական ձեզ և Զազունյանի հասցեյին շապյած արհամարհական ածականներն այն աստիճան անտանելի եյին թվում նրան, վոր նա քիչ եր թում ուղղակի արգելեց նրան, վոր նա Զազունյանի մասին այլ ես վոչ մի խոսք չարտասանի: Յերբեմն ել նրան թվում եր, թե Աննան Զազունյանի մասին այնպես աննպաստ խոսում և միշտ նախանձից, թեև տեսնում եր, վոր Աննան իրեն ցույց և տալիս նույն քննցոյց մտերժական սերը, ինչ վոր առաջ և նրա վարժունքի մեջ, ըստ յերեսոյթին, հակառակորդունու մի նշույլ անզամ չկատ Պակաս չեր առնջվում նաև այն ժամանակ, յերբ Զազունյանի մասին խոսում եր Զաքարը, չնայելով վոր նա Զազունյանի մասին միշտ հիացմունքով եր խոսում: Մի անզամ, այլն չկարողանալով համբերել, նա մինչեւ անզամ բարկացած կանչեց Զաքարի վրա:

— Քանի գոփես, քանի... հազար անզամ լսել ենք:

Աննան այնպիսի արարածներից եր, վորոնք մի հայացքով իմանում են, թե բանն ինչութեև և վորոնք սուր զիտողությունից հազիվ թե հնարավոր և լինում վորեն բան ծածկել. այդ պատճառով նկատում եր, թե ինչ և կատարվում նմանյի մեջ, մանավանդ վոր Սմման, չնայելով իր բոլոր նախազզուշ թյուններին, այնքան ել լավ չեր կարողանում պահել իրեն: Ակզրում Աննան այդ բանին համարյա նշանակություն չեր տալիս: Նա կարծում եր, թե մի աննշան տպավորություն եր, վոր Զազունյանի պես զեղեցիկ մարդիկ սովորաբար թողնում են մանկանասկ կանանց վրա, բանի վոր նրանք նոր են, խորեզմավոր են, և կարծում եր, վոր ժամանակի հետ անցնելով Զազունյանի այդ խորեզմավորությունը, կանցնի և նմանյի վրա թողած տպավորությունը: այդ պատճառով նա ուշազբություն չեր զարձնում այդ բանի վրա:

բայց տեսնելով, վոր Զաղունյանի թողած տպավորությունը հասարակ, անցողիկ տպավորությունն չե, Աննան սկսեց լուրջ ոշագրությունն զարձնել այդ բանի վրա, նմանն նրան տակացին շատ անփորձ եր թվում, և այդ պատճառով նա իր բարոյական պարուցն եր համարում նախազգուշացնել ընկերունուն այն վատանգավոր ճանապարհոց, վորի վրա անզիտակցորեն վոտաք եր զրել նա, Մի քանի անզամ փորձեց այդ բանի մասին խոսք բանալ նմայի հետյ բայց ինչ-վոր անհամարանալի պատճառով թե սիրտ չեր անում և թե ժամանակը հարմար չեր լինում, Վերջապես մի անզամ տպավուայան հաստատ վճռականությամբ նա պնաց նմայի մոտ պարզապես խոսելու այդ մասին:

XXIII

Ամեն անզամ, յերբ նա զալիս եր նմայի մոտ, ժպտալով կամ ձիթազելով ուղղակի ներս եր վազում նրա սենյակը, բայց այս անզամ նրա զեմքի վրա վոչ ծիծառ կար, մըշ ժպիտ ներս մտայ ծանր, հաստատան քայլերով և մինչեւ անզամ չնայեց նմային:

Նմանն նստած եր լուսամուտի առջև Շեռավործը ձախ ձեռքին զըել եր ձնկան վրա, իսկ աջ ձեռքի արմունկը լուսամուտի տախտակին հենած և կզակն ափի վրա դրած՝ շարունակ նայում եր զեզի դուրս Խաչպես յերեւում եր, ընկղզմված եր մտածմունքների մեջ, բայց Աննայի մանելուն պես՝ հանկարծ սթափվեց և հարցական — զարմացական հայացքով նայեց նրան:

— Նմա, յես ուզում եմ քեզ հետ մի բանի մասին խոսել, — ասաց Աննան զարձյալ չնայելով նրան և ձեռնոցները զուրս քաշելով ձեռքերից:

Նմանն զետ կարմքեց, հետո զունատվեց Խսկոյն հասկացավ, թե բանն ինչութե և, և հպարտ, մինչեւ անզամ արհամարհական զերք ընդունեց, կարծեն զբանով ուզում եր ասել՝ — ասմ, քեզնից չեմ վախենում:

— Ի՞նչ բանի մասին, — հարցըրեց նա, աշխատելով վորքան կարելի յե ձայնին հանգիստ յեղանակ տալ:

Աննան հանեց ձեռնոցները, վերցրեց զիլարկը, համարյա շպրտեց բազկաթոռի վրա, արագ մոռեցավ նրան և, կանգնելով նրա առջև, համարձակ նայեց նրա աչքերին:

— Դու սիրահարված ես Զաղունյանի վրա, — ասաց նա: Նման թեն զիտեր, վոր նա այդ պետք եւ ասեր և առաջուց պատրաստվել եր նրան համարձակ դիմավորելու, բայց այնու-

ամենայնիվ դարձաւ չկարողացավ չկարմը և չգունատվեր նա վոշինչ չպատասխանեց և, իրեն թե սաստիկ զարմացած, միայն աչքերը չուցաւ:

— Ճիշտ չ՛մ, — հարցրեց Աննան, շարունակ նայելով նրա աչքերին:

Սմման զլուխը բացասական կերպով շարժեց:

— Ճիշտ չ՛մ, — պատասխանեց նա ծանրությամբ:

— Միրահարված չ՛մ, — կրկնեց Աննան:

— Միրահարված չիմ, — նույն կերպով պատասխանեց Սմման: Աննան հոնքերը կիտեց և նրա գեմքը խիստ արտահայտություն ստացավ:

— Ինձնից ծածկը ևս, — հարցրեց նա ծանրությամբ:

— Թեզնից վոշինչ չիմ ծածկը և վոշինչ չունեմ ծածկելու, — համարձակ կերպով պատասխանեց Սմման:

— Դու սեւս ես ասում, — կանչեց Աննան:

— Են, սուս չեմ ասում:

— Սեւս ես ասում, ասում եմ:

— Սուս չեմ ասում:

Աննայի գեմքը նորից հանգիստ արտահայտություն ստացավ: Սես զիտեմ, վոր դու սիրահարված ես, — հանգարտ և համոզող ձայնով ասոց նու:

— Դու սիրավում ես:

— Չեմ սիրավում, Սմմա:

Սմման իրեն թե տարակուսանքով վեր քաշեց ուսիրը և, չպատասխանելով, գեմքը դարձրեց զեպի դուրս:

— Սմմա, ասա ճիշտը, ինձնից մի ծածկիր, — համոզող ձայնով կրկնեց Աննան:

— Ին վոր զիտեմ սիրահարված եմ, ել լինչ կանես իմ սսելը, — հեղուրեն նկատեց Սմման, զեպի զուրու նայելով:

— Են ուզում եմ, վոր դու ինքդ այդ հաստատես:

— Են քեզ ասում եմ, վոր սիրահարված չեմ:

— Ասա, ասում եմ:

— Զարմանալի յե, լինչ ասեմ, քանի վոր վոշինչ չկա, — անհամբերությամբ կանչեց Սմման, արագ զեպի նա դառնալով:

— Ասա, ասում եմ, — կրկնեց Աննան:

Սմման նայեց նրան թշնամաբար:

— Դու կատամկ ես անում, — հարցրեց նա:

— Են կատամկ չեմ անում, Սմմա:

— Հապմէ:

— Ենս լուրջ կերպով եմ խոսում, շատ լուրջ կերպով:

— Ի՞նչ ես ուզում ինձնից:

— Խոսափանվիր, վոր սիրահարված ես Զաղունյանի վրա:

— Տեր ասոված, — անոն սմբեր արտասանեց Սմման:

— Խոսութանվիր ասում եմ:

— Դիցուկ թե սիրահարված եմ, — հանկարծակի վճռականությամբ ասաց Սմման և սաստիկ ատելությամբ նայեց նրան:

— «Դիցուկ թե» չի հարկավոր:

— Էմվ, սիրահարված եմ, այժ, սիրահարված եմ Զաղունյանի վրա. Ի՞նչ ես ուզում ինձնից, — կանչեց Սմման և վեր թռագ տեղից:

Աննան կարճ ժամանակ նայեց նրան լուս:

— Գիտես, յես այդ պարզ խոստովանքի անդ եմ ընդունում, Սմմա, — ասաց նա:

— Առում եմ սիրահարված եմ Զաղունյանի վրա, կիմմ, ի՞նչ ես ուզում ինձնից, — կը կնեց Սմման, իրեն համարյա կորցնելով: Նա սաստիկ գունատվել եր, զրթունքները նկատելի կերպով դողում երին, աչքերը փայլում երին և սպիտակ ճակատի վրա կարմիր բծեր երին յերեան յեկել:

Այս ի՞նչ Աննան հանգիստ տիրությամբ նայում եր նրան:

— Գիտես, Սմմա, յես քեզ այժմ բոլորովին չեմ կարողանում հանաչել, — կարճ լուսթյանից հետ ասաց նա կամաց, — Սերը քեզ բոլորովին փոխել ե:

— Ի՞նչ ես ուզում ինձնից, ի՞նչ ասմ, — կանչեց Սմման:

— Եերբ հանգստանաս, այն ժամանակ կատամ, իսկ հիմա ինձ չեմ հասկանա, — թիթե հառաչելով ասաց Աննան և, հեռանալով նրանից, նստեց մի աթոռի վրա:

Սմման այս անգամ նայեց նրան արհամարհական հայացքով:

— Գիլիս վերակացու յե յեկել, — ասաց նա, իրեն թե ինքն իրեն, և շատապով դուրս դնաց, զուռն ամուր զրիկացնելով իր յետելից:

Աննան արագ նայեց նրան, վեր թռագ և վազեց նրա յետելից, բայց զուռն մոտ հա՛ կարծ կանգ առավ և զուռնությամբ ժապաց: — Ախ, սիրելիս, ինչպես խելթով կորցրել ես, — շշնջաց նա մեղմ տիրությամբ և վերագարձավ, նստեց իր տեղը:

Գիտենալով, վոր այդ որն այլևս վոչինչ չի կարող անել և իր մեալն ավելուրդ ե, մը նչեն անգամ ավելի կզրդուի Սմմային, նա

շուտով վերկացավ և հեռացավ սաստիկ տիտոր ու ծանր սրտով։ Բոլորովին չեր նեղանում Սմմայից, վորովնեան հասկանում եր, վոր նրա փոփոխության պատճառը միայն սերն է. նա միայն ժամանակում եր սիրելի ընկերունու համար, վոր այդքան կուրուրնեն անձնատուր եր յեղել այդ սիրուն, վորը, նրա համոզմանքով, կորստարեր եր։

«Ահ, վհչ մտածում եր նա, չյետ չեմ թողնի այդպես. այն զիմակավոր սրիկան կկործանի այդ խղճուկին և բավական չեմ միայն դրան, նա այն խեղճ մարդուն — Զաքարին եւ կթշվառացնի... իսկ Արամիկը... ԶԵ, չԵ, ինչ ուզում եւ լինի, չեմ թողնի այդպես... Ախ, սրիկա, սրիկա...»։

Սաստիկ կատաղությունը բորբոքվել եր նրա սրտում Զագունյանի զեմ և նա զետ վոչ վոչի այնպես չեր տաել, ինչպես այդ մարդուն։ Նրա կատաղությունն ու տաելությունն ավելի ևս բորբոքվում երին, յերբ տեսնում եր, վոր ինքը բոլորովին անզոր և այդ մարդու զեմ կռվելու։

XXIV

Հետեյալ տռավույյան նա դարձյալ գնաց Սմմայի մոտ։ Զագարը տռնը չեր, ինչպես և նախորդ որը։ Աղտիսինը հայտնաց նրան, վոր տիկինը ննջարանումն և և վոչվոչի չի ընդունում։

— Եսկ վոչ ի՞նձ, — կանչեց Աննան։

— Տիկինն այդպես հրամայեց, — պատասխանեց ազախինը։

— Ես նրան ցույց կտամ «տիկինն այդպես հրամայեց», — տաց ինքն իրեն Աննան և շտապեց զեպի Սմմայի ննջարանը։ Նա բանեց դռան փականքից և առաջ հրեց։ Դուռը փակ եր ներսից։

— Սմմա, բաց արա, — կանչեց նա։

Ներսից ձայն չկար։

— Սմմա, բաց արա, — կրկնեց նա։

Դարձյալ ձայն չկար։

— ԶԵս լսում, Սմմա։

Նա շարժեց դուռը։

— Ո՞վ ե, — վերջապես լսվեց ներսից Սմմայի ձայնը։

— Ծես եմ, բաց արա։

— Տիմա չեմ կարող ընդունել։

— Ասում եմ բաց արա։

— Տիվանդ եմ։

— Բաց արա քեզ ասում եմ։

— Աննա, խնդրում եմ հիմա ինձ հանդիսա թող,

— Բայց արա, թե չե կեռարիմ զուռը, — կանչեց Աննան և զուռն ուժգին շրբնէրխացրեց:

«Այս լսվեց ներսից մի հուսահատկան հառաջանք և զուռը բացվեց:

Նրա առջե կանգնած եր Սմբան զուռառ և անշարժ:

Նրանք միաժամանակ նայեցին միմյանց, վճրպես յերկու կատապի, անհաջող թշնամիներ:

— Զիս ամաչում... չմս ամաչում... չմս ամաչում, — կանչեց Աննան հետզնեան այցնը բարձրացնելով: — Դու զժվել ես, թե... Ի՞նչեւ եյիր զուռը փակել և չեյիր ուզում ինձ ներս թողնել. ինչժամ եյիր փակել, ասա, աենանեմ նրա համմար, վոր յես ուզում եմ քեզ սխալ հանապարհից հեռացնել, նրան համմար, վոր յես ուզում եմ քեզ կորսայան անդունդից հեռացնել, նրան համմար, վոր յես քեզ ասաված գիտե, թե ինչպես եմ սիրում: Խելագար, անմիտ, մեկ ժոտածիր, թե ինչ ես անում, ինչ սոսկալի թշվառությունն ես պատրաստում քեզ, ամուսնուդ և յերեխայիշ համար: Ի՞նչ ես տեսեմ այն սրիկայի, այն կեղծավորի, այն, այն... զիմակավոր ավազակի մեջ, վորի համար այդպիսի զժություններ ես անուում: Անմիտ, անմիտ, զու ամուսին ունես, զու վորդի ունես: Այս այն սրիկան Զաքարի մի յեղունդն անզամ չարժե, մամ ես թողնում և համ զիբեկն ես ընկնում: Խելգթ վմբանեի եւ:

Հոնքերը կիսած, քթածակերը լայնացրած և ձեռքերը բռունցք կազմած՝ Սմբան կանգնած եր նրա առջն անշարժ եւ, առանց ձայն-ծպուն հանելու, սառն, արհամարհնայով շարունակ նայում եր հատակին:

— Սիրում ես, մով ե քեզ զբա համար մեղադրում, — շարունակեց Աննան քիչ հանգստանալով: — Դու ի՞նչ մեղավոր ես, վոր սիրում ես... բայց իս հասկանմամ ես, վոր այդ սերը ներելի չե քեզ, վոր զու իրավունք չունես քո պայմաններում սիրելու ուրիշին, ուրեմն, ինչժամ չես ուզում, վոր քանի ուշ չե, զբա զեմն առնելու համար խելք խելքի տանք, մի բան անենք: Ի՞նչու այդ ծածկում ես ինձնից և զես զուռը փակում ես իմ առջե, Մըթե կործում ես, վոր յես քո վատն եմ ցանկանում, յես, վոր մանկական հասակիցս քեզ միշտ հոգով չափ սիրել եմ: Ի՞նչպես չես տեսնում այն սոսկալի թշվառությունը, վոր զու ի՞նքդ պատրաստում ես քեզ համար, զես մի կողմը թողնենք Զաքարին ու Արամիկին... Յեկ, յեկ նստենք այստեղ և խոսենք հանգիստ, յեկ:

Յեզ, բռնելով նմայի ձեռքից, համարյա քարշ տվեց նրան իր յետելից, նստեցրեց, իսկ ինքը նստեց նրա դիմաց:

— Գիշերս չեմ քնիլ քո մասին մտածելով, — շարունակեց նա: — Յերեկվանից դեռ յես իմը չեմ, քո տեղ յես եմ տանջվում և զու զեռ իմ տոշե փակում եմ զուռդ... Ախ, Եմմա, Եմմա, ի սեր աստծո, իսկը արի, իսկը ի, թե չե... Մոռացիր այն սրիկային, այն ավագակին: Նա քեզ չե տալ այն, ինչ վոր դու յես ցանկանում. Նա միայն կթշվառացնի քեզ, յերգվում եմ, վոր կթշվառացնի: Դու չպիտես, թե ինչպիսի մարդ: Ենա, — Բնձ հարցրու, յես եմ ճանաչում նրան: ամեն նայելով թափանցում եմ նրա հոգին: Նրա այն կորրեկտ, զեղեցիկ գիմակի տակ հազար և տասն հազար սատանա կա թագնված. Բնձ ես նայում նրա արտաքի-նին կամ Բնձ ես նայում Զաքարին, վոր իր անմիտ և անմեղ զավասանքներով նրան յերկինք և բարձրացնում: Զաքարը միամիտ մարդ ե, քեզանից ավելի շուտ խարվող. — դու Բնձ լսիր, Բնձ, ուրիշ վոչ վոքի ե, տառված ե վկա, չես զզիա: Ախը մեկ այս ել մտածիր: Նրան վոր սիրում եմ, այդ աստիճան, վոր անձ-նատուր ես յեղել այդ սիրոյն, վոր վոչ մի միջոցով չես ուզում զբա գենե առնել, վերջն Բնձ պետք ե անեն, Բնձով պետք ե այդ բոլորը վերջանաւ: Պետք ե տունդը տեղդը, ամուսնուդը, վորդուդ թողնես և փախչեմ նրա հետ, հմ... պետք ե անարատ անունդը, պատիվդ զոհեմ այն սրիկայի համար... կանեմ այդ, հմ, կանեմ... Բնձ ես լսել, ինչժամ չես խոսում:

— Դու խոսում ես Ելի, յես ել Բնձ խոսեմ, — ասաց հեղնութեան, վորը արհամարհանքով շարունակ նայում եր ուրիշ կողմբը:

Աննան աշքի տակից մի զգաստ և խիստ հայացք ձգեց նրա վրա:

— Եմմա, — կարճ լուռթյունից հետո, տապ նա ծանր և հանդարս, — միթե յես այլևս քո մտերիմ ընկերուհին չեմ. Եմման շպատասխանեց:

— Միթե յես այլևս վոչ մի նշանակություն չունեմ քո աշքում, միթե անկեղծ սրբութավությունս և սերս միայն արհամարհանք են շարժում քո սրտում:

Եմման լուռմ եր:

— Միթե մի թափառական, մի քաղզախնդիր սրիկա, վոր զբաղված ե ուրիշի յերջանկությունը զողանալով և անմեղ ընտանիքներ սրբազզելով, ինձ ել կարողացավ քո սրտից հանել:

Նմման հանկարծ նայեց նրան, նրա հայացքը կատապղի յեր՝
— Ի՞նչ ես ուզում ինձանից, — հարցը եց նա խստը իննու:
— Այն սրբկային վանդիր այստեղից, — կանչեց Աննան:
Նմման նոյն հայացքով նայեց նրան և սաստիկ կատա-
ղությունից յերկար ժամանակ վոշինչ չկարողացավ պատա-
խանել:

— Հիմա յես ոկտաք և ասեմ քեզ՝ խելքի արի, — վերջապես
ասաց նա և, վեր կենալով տեղից, հեռացավ մի կողմէ:

— Ի՞նչ, դու կարծում ես, թե այդ անկարելի՛ յե, — կարէ
լուսթյունից հետո, ասաց Աննան: — Են խո չեմ ասում, թե նրա
սիլինդրը վերը ու լուսամուտից գուրս շպրախ: Կամ թե՝ ծառա-
ներին հրամայիր, վոր վզակոթին տալով զուրս անհն այստեղից:
Դու ուղղակի կարող ես հիվանդ ձեւանալ և, յերբ նա կզա, զուրս
չգնալ նրա մատ, պըծավ զնաց: Այսպիսով նա ինքն ամեն բան
կհասկանա և վոտք կկարի այստեղից:

— Խնդրում եմ, բավական և այդ ֆասին խոսես. յես այլ
ևս չեմ կարող քեզ լսել, — ասաց Նմման և ուզում եր զուրս զնալ:

— Վհչ, բավական չե, բավական չե, — կանչեց Աննան,
վազելով նրա յետենից և բռնելով նրան, — յես քեզ հանգիստ չեմ
տա, մինչև չլսես ինձ, զիշեր-ցերեկ յես կտանջմա քեզ, մինչև
վոր զու առաջվա ճանապարհի վրա չկանգնես: Զազունյանին
վանդիր այստեղից յես քեզ ստում եմ:

— Թե չե... — հեգնական ժպիտով հարցը եց. Նմման:

— Թե չե... յես ինքս կխայտառակեմ նրան և կվոնողիմ այս-
տեղից:

Նմման մի ծաղրական-արհամարհական հայացքով չափեց
նրան վստից ցոլուխ:

— Հետո, — հարցը եց նա:

— Հետո նա ավելի շուտ զլուխը քարովը կտա, քան թե այս-
տեղ այլ ես վոտք դնի:

— Բոկ քեզ մգ կվանդի այստեղից...

— Վոչվոք:

— Յես, — խլվելով նրա ձեռքից և զոսող հզարտությամբ
խփելով իր կրծքին, կանչեց Նմման: — Են կվանդեմ քեզ այստե-
ղից, հասկանմամ ես, յես... Այստեղ նայիր. ով ում տանն ինչ
իրավունքներ և ուզում բանեցնել... Խնդրեմ, խնդրեմ... Դու ինչ-
վոր քեզ շատ ես յերեակայում... Քեզ վոչ վոք չի խնդրել, վոր
զա այստեղ կարեկից և սրացավ լինես... Թըամաներ ունես

տար ուրիշին տուր, այստեղ վոչ վոք հիմար չկա... ամեն մեկը իր խելքը, իր հասկացողությունն ունի Այնտեղ, այնտեղ — ձեր տանը... այս ուրիշի տունն ե...

Ենք դարձյալ մի ծաղրական-արհամարհական հայացքով շարժելով նրան վատից սպլոխ, ինքնավստահ, հպարտ քայլերով դուրս գնաց:

Անհան մեաց քարացած:

XXV

Զազունյանը մինչև իր Շ... զնալն անտարբեր չեր գեղի Սման։ Նրա սրտումն ել սիրո նման ինչ-վոր բան եր սկսել շարժվել, վորին նա համարյա վոչ մի նշանակություն չեր տալիս, վորովնեռն այդ միայն հիմարություն եր համարում։ Ենք դրա համար նա ուներ յերկու պատճառ, վորոնց նա անազին նշանակություն եր տալիս, — մեկն այն, վոր Սմման պատա չեր, ամուսին և զավակ ուներ, վորոնց նրան սիրում և պաշտում եյին, և այդ ամուսինն, իրըն անհատ, իրըն մարդ մի կողմը թողած, իր բարեկամը, իր ընկերն եր, վորին զավաճանել չեր կարող, իսկ յերկորդ պատճառը... Սակայն յերկորդ պատճառն, անազին նշանակություն ունենալով հանդերձ, այն աստիճան մեծ դեր եր խաղացել և գետ շարունակում եր խաղալ նրա բարոյական աշխարհում, վոր նա այդ մասին յերեք չեր ուզում մտածել և ամեն կերպ աշխատում եր մոռացության տալ... Սակայն առաջին անգամ անջատվելով Սմմայից և զնալով Շ..., նա զգաց, վոր այն զգացմունքը, վոր ինքը կատարյալ հիմարություն եր համարում, այնքան ել հիմարություն չեր և արդեն կարողացել եր համար մի վորոց և նշանավոր տեղ բռնել նրա սրտում։ Դաշտեն, յԵրբ... — ահա հարցեր, վորոնց նա ինքն ել չեր կարողանում պատասխանել և վորոնց նրան, յեթե վոչ յերկորդ, գոնե զարմանք եյին պատճառում։

«Հիմարություն ե, հիմարություն ե» դարձյալ չեր ուզում նա հավատալ, չնայելով վոր Սմմայի պատկերը նրա աշխերի առաջից չեր հեռանում, չնայելով, վոր այժմ, հակառակ իր սովորության սկսել եր անձնատուր լինել «Հիմար» ցնորքներին, վորոնց մեջ նա մի տեսակ քաղցրություն եր զգում, մի տեսակ ախորժելի կաշկանդող ոյժ։ «Հիմարություն ե, հիմարություն անդազար կը կնում եր նա ինքն իրեն։ «Այս մի տպափորություն ե, վոր շուտով կանցնի»։

Ենք իրավ. «Հիմարությունը» սկզբի որերում միայն հանդիսաւ շատով նրան, այնուևեան սկսեց փոքր առ փոքր խաղաղել, իսկ շարաթներ անցնելուց հետո նրա սիրուն սկսեց բարախել սպառական կերպով. Սմմայի պատկերն ել հեռացավ նրա աշքերի տառչից, «Հիմար» ցնորքներն ել հանգիստ տվին նրան. կարծես բոլորովին վոչինչ չեր ել պատահել. Այդ բանին քիչ չնպաստեց նրա զատի ցնությունը, վորը սկզբում շատ վաս կատ եր զնում. Նա ակամա ստիպված եր ցնորքները մի կողմ թողնել և մասմել եր զատի մասին, նոր միջոցների դիմել, միշտ աշալուրջ մաւ, վորպեսի զատը տանուէ չտա. Ենք տանուէ չտվեց: Սմմն ինչ վերջացնելով և կարվածների մասին հարկավոր կարգադրությունն անելով, նա պատրաստվեց Թիֆլիս վերագանձաւու, իսկ Թիֆլիսից մտադիր եր անմիջապես շարունակելու. իր ճանապարհորդությունը, նախ քան Թիֆլիս գնալը, նա մտարերեց Զաքարի Խընդիրը և հեռազրեց նրան:

Եերկաթուղու յերկրորդ կարգի վագրեաւմ նատած՝ նա վերապանում եր Թիֆլիս և նրա յերեակայության մեջ նորից հարություն եր առնում Սմմայի պատկերը և զբա հետ առաջին «Հիմար» ցնորքները նորից պաշարում եյին նրան, Այդ բանին համար նա այլ ևս հաշիվ չեր տալիս իրեն, ուրիմ և շեր աշխատում հեռացնել իրենից յերեակայության այդ անկոչ հյուրերին, վորոնք ինչ վոր զադունի զորությամբ զողունի մանում եյին նրա ուղղով և զրադեցնում նրան: Վորքան մասենում եր Թիֆլիսին, այնքան նրա սիրու բարախում եր անհանգուստությամբ. նա կարծում եր, վոր յերկաթուղու կայարանում Զաքարի հետ իրեն կղիմավորի և Սմման, և ինչը նրա յերեակայական պատկերի տեղ կտեսնի նրա իսկական պատկերը: Ակամա անհանկանալի մի ցնծությունն պաշարեց նրան: Բայց յերբ կայարանում նրան հանդիպեց մի-այն Զաքարը, նրա այդ ցնծությունը տեղի տվեց մի տեսակ հիսաթափության, իսկ յերբ Զաքարից իմացավ, վոր Սմման նրա մեկնելուց հետո հիվանդացել եր, սկզբում շատ վախեցավ: «Չի՞նի՞թի թե սիրահարվել ե ինձ վրա». առաջին անգամ այդ միտքը կայծակի արագաթյամբ անցավ նրա զլխով և, բովեական յերկյուղից հետո, նրա սիրությունաց մի աեսակ յերջանիկ ինցնաբավականությամբ: Սակայն մաքում նա իսկույն ենթ սկսեց ձիմազել իր վրա, վոր այզքան հեռու գնաց, վորովհետեւ ինչպես իր Սմմայի վրա սիրահարվելը, նույնպես և Սմմայի իր վրա սիրահարվելը նա կատարելապես «Հիմարություն» եր համարում: Այ-

նուհեած նոյն որը տեսնելով Ծմմային և սկսելով խոր դիտել նրան, նու մեկ համոզվում եր, վոր նա անսարքեր չե զեպի ինքը, մեկ եր, իր թերահավատության պատճեռով, նրան հակառակն եր թվում բարց, այսուամենայնիվ, յերկու զեպքումն ել նա ի ներքուստ ավելի հակված եր զեպի վերջին յենթագրությունը:

Որերն ու շաբաթներն անցնում եյին Զազուայանն իր սրտի մեջ յեղած հեմարությունն» այժմ իր իսկական անունն եր տալիս: Ինընախարեյտթյունով, ի հարկե, վոչինչ չեր դառնա: իրականությունն ամեն զեպքում միշտ իրականությունն և մեռմ: Որ որի վրա նա սարսափով տեսնում եր, վոր այդ հեմարությունն ահապին ուժ և զրություն և ստանում և անսակելի արագությամբ տիրապետում և նրա բոլոր մյուս զգացմունքներին, նրա ամրող եյությանը: Ծանապարհորդությունը շարունակելու միտքը միշտ հալածվում եր նրանից, վորպես բռնի ստեղծած ցընորք, յերբեմն մանում եր նրա զլուխը և, առանց մի վարոշ վճիռ ստանալու, նորից չքանում, անհետանում եր Ուրիշ ավելի քազզը, ավելի հոգեզմայլ ցնորքներ շարունակ վիստում եյին նրա զիմում, վորպես կախարդիչ հորիներ, և նրա բոլոր մտավոր կարգությունը կենարոնացնում եյին միայն իրենց վրա: Վորքան նա աշխատում եր սառը, լուրջ խռականությամբ հալածելու իր գըլ-իրից այդ ցնորքները և կշռագատելու իր գրությունը, չափելու այն անդունողի խորությունը, վորի մեջ աննկատելի կերպով ընկնում եր ինքը, այնուամենաւնիվ, այդ բոլորի հետեանքը գարձայլ առաջվա ցնորքներն եյին լինում: Կորքան նա աշխատում եր Ծմմայից հեռու փախչել, այնքան այդ նորատի, գեղեցիկ կինը, վորպես մագնիս ձգում եր նրան զեպի ինքը, և նա չեր կարողանում զիմադրել այդ ձգողական ուժին և նա սիրում եր ամենավառ զգացմունքով և անսակելի տանջվում եր, վոր իր այդ սիրով վոչ իրեն և վոչ Ծմմային չի կարող տայ յերջանկության մի նշոյլ անգամ, այլ, ընդհակառակն, իր հետ նրան ել սաստիկ առկերջանիկ կդարձնի, նա արդեն բաց և արել սոսկալի թշվառության դուռը և բռնած այդ անմեղ կնոջ ձեռքից՝ ուզում ե նրան ներս քաշել այնտեղ... Վհչ, վհչ, թեև արդեն մոտ են այդ թշվառության դրան շեմքին, բայց քանի զեռ ուշ չե, քանի զեռ չեն կոխել այդ շեմքը, պետք և անհապաղ դրա զեմ միջոցներ ձեռք առնել, պետք և կանգ տանել, առաջ չենալ, պետք և յետ զառնալ, պետք և... այն, պետք և հետանալ: Ենթե սիրում ե կամենում և իր սիրո առարկայի յերջանկությունը, ապա այդ

յերջանկությունը, ինզնի և առողջ զատողության ասելով, պետք է վորոնի միայն իր ընդմիջութեանալու մեջ, հապա այն վեհ, բարոյական պարտականությունը, վոր զրված և նրա վրա, վորոցին ընկերոջ վրա այդ բառի վոչ թի սահմանափակ, այլ ամենաընդհարձակ, բուն նշանակությամբ։ Միթե անձնազուռնությունը չե զրա միակ և ուզիղ միջոցը, Անձնազուռնութթանը... Միթե չե այն յերջանկությունը, վորի յետեից վազում և մարդկությունը, բայց վորում և զրա այլանգակած ուրվականը, միայն... Միթե սերը չե զեզի ընկերն, որին և ինքնուրացությունը, անձնազուռնությունը ընկերի համար։ Ինքնուրացությունը, անձնազուռնությունը... Միթե բառը միշտ բառ պետք և մեա, հապա զըթը...

XXVI

«Եեվ այդպիս, վճռված եւ պետք և հեռանալ» մի անզամ շատ յերկար ժամանելուց հետո, ասաց ինքն իրեն Զազտնյանը և սկսեց հազնվել, նա ուզում եր վերջին միամ նախավերջին անզամ այցելել Մարկոսյաններին և մի կամ յերկու որից հետո... բարի ճանապարհ։ Ինչպես ուզեցոյցի ուլաքը, վոր ինչպես եւ բանում ես, միշտ զեզի հյուսիսի և զանում, նույնպես և նա. — ինչ կերպ և ինչ կողմից եւ վոր քննության եր յենթարկում իր զրությունը, խիզեց և առողջ զատողությունը միշտ կանգ եյին առանձ այն բանի վրա, վոր պետք և հեռանալ։

Մի կերպ, կարծես տենզի մեջ, հազնվելով, նա զուրս յեկավ և զիմեց զեզի Մարկոսյանների տուն։

Յերեկո յեր, արեն արդեն մայր եր մտել, Զնայելով, վոր նա ուզգակի գնում եր Մարկոսյանների տուն, բայց տակավին յերկու միտ եր՝ զնամ թե վոչ, վորովհետեւ կարծում եր, վոր նրանք այդ ժամանակ, զուցե, զուրս յեկած կլինեն զրուսնքի, մանավանդ վոր յեղանակը շատ զեղեցիկ եր. բացի զրանից, նա հենց սկըզբից վայխնում եր, զզում եր, վոր ինքն անհարող կլինի իր բերանով հայտնելու նմանյին, վոր ինքը մի կամ յերկու որից հետ պետք և հեռանալ. այդ նրան միենույնն եր թվում, թե ինքն իր բերանով պետք և կարգար իր զատավերուր, նա գնում եր և հետզհետեւ քայլերը զանդապեցնուում։ Վորքան տաջ եր զընում, այնքան նրա մաքերն անկանոն ընթացք եյին ստանում, այնքան նրանք հեռանում եյին վերջնական վճռից։ — Արդյոք զնամ թե չզնա, արդյոք նրանք տանը կլինին, թե վոչ, և յեթե տանը լինեն, արդյոք նմանյի ներկայությամբ հայտնի Զաքարին

իր հեռանալու մասին, թե սպասի մի ուրիշ անգամի... արդյոք լավ չե՞լինի, յեթե մի քանի որով հետաձգի իր հեռանալը, Չնայելով, վոր վերջին խնդիրը նա արդեն վճռել վերջացրել եր, բայց այժմ մի անհասկանալի զորությամբ այդ վճիռը հետպահեած թուլանում եր և խնդիրը նորից քննությունն եր պահանջում:

Այզպիսի տատանութերի մեջ եր նա, յերբ հանկարծ տեսավ Զաքարին կառքով անցնելիս Զաքարը նույնական տեսավ նրան և կառքն իսկույն կանգնեցնել ավեց: Զազունյանն իջավ մայթից և մոտեցավ նրան:

— Ո՞ւր ես գնում, — հարցրեց Զաքարը, ձեռք տալով նըրան: — Ենէ նստիր, գնանք մեր տուն:

Զազունյանը նստեց: Կառքն առաջ անցավ:

— Գալիս եյի ձեր տուն, — պատասխանեց Զազունյանը:

— Հա-մ... փառք ասածու Յերեի այս յերկու որը վոտներից հինա եյիր դրել, վոր շեյիր գալիս: Տիտր նստում ենք, տիտր վեր կենում: Զե, յեղբայր, գեռ սկզբից չպատք ե գայիր մեր տունը բայց վոր մի անգամ յեկար, այլ ես իրավունք չունես մի որ անգամ բացակայելու: յես այդպիս եմ հասկանում բարեկամությունը Դու խո գիտես, վոր քո ներկայությունն առանձին բավականությունն ե պատճառում մեզ, ել Բնչ ես նազ ու թուզ ծախում Հավատացիր, Արսեն, վոր առանց քեզ մենք շատ տիտր ենք լինում, մանավանդ վոր Աննան ել այս յերկու-յերեք որը չցիտեմ ինչ պատճառով, այլ ես չե գալիս մեր տուն: Յերեի գու և նա միասին խոսք եք կապեւ, վոր մեզ բոլորովին մենակ թողնեք:

Զազունյանին խիզն սկսեց տանջել. ինչպիսէ միամիտ բարեկառություն և ինչքան խոր, անկեղծ հավատ զեալի ընկերը: Կարելի՞ յե միթե այդպիսէ մի կատարյալ հավատ ի չարը որը դնել: Առա մի զենք, ինքն ըստ ինքյան մի անհշան, բայց և միենույն ժամանակ իր անզիտակցությամբ մի զորավոր զենք, վորի առաջ պետք ե ըթանա չարամառ թյունը, վորին հանդիպելով ամոթանար պետք ե փախտուստ տա վատությունը... Վոչ, Զաքարն իր այն համարյա յերեխայական անկեղծ սիրով և հավատով ընավ խղճալիք չեր թվում Զազունյանին. ընդհակառակը՝ Զազունյանն այդ ըոսպեյին նայում եր նըրա վրա վորպիս մարդու. և ընկերի կատարելատիպի, իդյալի վրա, վորի առջև հոգեզմայլությամբ պատրաստ եր ծունկ խոնարհել, Բնչ են հազարավոր թշվատ ոթելլուներ այդ մարմնացյալ սիրու և հավատի առաջ: Միթի

այդպիսի մարդը չարժե այն անձնազնությանը, վոր ինքը — Զագորանյանը կամենում եր բերել նրա համար, վորը իսկապես առած անձնազնությանը ել չեր լինի, այլ մի տեսակ մարդկային, ընկերական պարտականությանը:

Նա հարմար և ի գեղակ համարեց հայտնել Զաքարին իր հեռանալը և գիտեր, վոր նա իր կողմից տուն գնալուն պիս կը հայտնի այդ մասին իր կնոջն, ուրեմն այդպիսով ինքը կաղամակիր Սմմային անձամբ հայտնելու դժվարությունից:

— Այս գուցեց վերջին անգամն ե, վոր զալիս եմ ձեր տուն, — առաց նա տիտուր ժպիտով:

Զաքարին արագ, մինչև անգամ վախեցած, նայեց նրան:

— Ի՞նչպես, — հուրցրեց նա:

— Շուտով պետք և հեռանամ այստեղից, — պատասխանեց Զագորանյանը:

— Ուր, թնջուկն, յմըր, թնչ ես ասում, գծվել ես, — վրա տվից Զաքարը, չափատալով: — Կատամկ ես անում:

— Հավատացեր, չե, իս առաջ ել ասում եյի, վոր պետք և հեռանամ:

— Ուրիմն վճռել ես, հասամատ վճռել ես:

— Վաղուց եմ վճռել:

— Բայց մւր, յեղբայր, ուր պետք և գնաս, յիս չեմ հասկանում:

— Ո՞վ զիսե...

— Ե, յեղբայր, թե ասավածդ կորեն ձեռք վերցրու այդ հիմայ մտադրությունից: Ուզում ես նեղացիր, բայց յիս հիմարության եմ համարում աննպատակ ճանապարհորդությունը: Հա, ելի մի ամիս, յերկու ամիս, յերեք ամիս, մի տարի, — ես հասկանում եմ, բայց ամբողջ կյանքը նվիրել ճանապարհորդությանը, — այդ կըկնում եմ մեծ հիմարություն ե, հավատացիր, մեծ հիմարություն: Դոնեն վորնես աշխարհապական ընկերության անդամ լինեմ, ելի մի բան ե. կասեմ ճանապարհորդում ես ուստիսահրական նպատակով, գիտությանն ուզում ես ոգուտ տալ, բայց ախր ճանապարհորդել լոկ ճանապարհորդելու համար, անոգուտ, առկարդյուն... Զե, յեղբայր, չե, ինչ ուզում ես ասա, յիս ելի կասեմ, վոր այդ մեծ հիմարություն ե, մեծ:

Զագորանյանը չպատասխանեց. ինչ-վոր նոր, տակավին անձանոթ մի տիտուր թյուն պաշարեց նրան:

— Նստիր քեզ համար, — կարճ լուս թյունից հետո, շարունակեց Զաքարը, — տուն, տեղ զիր, ամուսնացիր, սիրիր, սիրվիր:

վորդիք ունեցիր, ապրիր քեզ համար հանգիստ, խաղաղ, — աճաք քեզ յերջանկություն, առա քեզ ոգտակար կյանք, թե չե, մի որ այստեղ ապրել, մյուս որն — այստեղ, ամբողջ կյանքը թափառականությամբ անց կացնել... լինչ միտք ունի: Չե, յեղբայր, գուցե յես եմ համար և քեզ լավ չեմ հասկանում, հ՞ը... Բայց ապա մեկ ինձ բացատրիր, թե մշտական հանապարհորդությունն ինչով և լավ նստակյաց կյանքից:

— Քեզ համար վոչնչով, բայց ինձ համար շատ բանով, — պատասխանեց Զազունյանը:

— Որինամկ:

— Դու ինձ չես հսկանա, վորովնեան չպիտես, թե ինչ բան և հանապարհորդությունը:

— Ելի:

— Որինակ հենց նրանով միայն, վոր իմ յերջանկությունն, յեթե միայն այդ յերջանկությունն կարելի յե անվանել, հանապարհորդության մեջ և գտնվում, ինչպես քոնը — նստակյաց կյանքի մեջ:

— Ախը որինակ:

— Ելի դու քոնն ես պնդում. այստեղ վոչ մի որինակ հարկավոր չես Կորպեսզի ինձ հսկանաս, պետք և անձամբ հանապարհորդած լինես և ձգութեան ունենաս դեպի հանապարհորդությունը:

Ցես զարմանում եմ, հշմարիս... Ախը, յեղբայր, յեթե հանապարհորդությունը վորեն առավելություն ունի նստակյաց կյանքից, ել ինչը չես կարող բացատրել ինձ, թե ինչուն և այդ առավելությունը:

— Դու ինձ ասա, թե ինչն անպատճառ նստակյաց կյանք ես սիրում և վոչ հանապարհորդություն:

— Վորովնեան նստակյաց կյանքը՝ ամեն բանով լավ և ոգտակար և հանապարհորդությունից:

— Իսկ յես ել կասեմ, վոր հանապարհորդությունն ամեն բանով լավ և ոգտակար և նստակյաց կրանքից:

— Ի՞նչով որինակ:

Զագունյանը ժպտաց:

— Տեսնձւմ ես, մենք դարձյալ յետ գնացինք, — ասաց նաև — վոչ մի որինակ հարկավոր չե, ասում եմ: Այդ կախված ե անհատի ընավորությունից, հակումից: Ինչը մեկը խորոված և սիրում, մյուսը — փրավ, ինչը մեկը գինի յի սիրում, մյուսը — զարեջուր,

ինչու, մեկը շուն և սիրում մյուսը — ձի. կարմղ ես բացատրել զբանց պատճառները, ԶԵ, Այնպես ել յես:

— Ե՛ս, մախլաս, — ասաց Զաքարը մի տեսակ տիսուր և հուսանատ դժողովությամբ և թեթև հառաջեց:

Յերկուսն ել կարճ ժամանակ լսեցին:

— Արսեն, արի իմ խաթրու մեա, ձեռք վերցրու ճանապարհորդությունից, — հանկարծ ասաց Զաքարը, նայելով Զազունյանին:

— Անկարող եմ, Զաքար, — մեզմությամբ պատասխանեց Զազունյանը: — Ինձ համար մահու չափ անտառնելի յե մի տեղում յերկար մեալը: սաստիկ ձանձրանում եմ... Ահա քանի ժամանակ և յես այստեղ եմ և գու չես կարող յերեակայել թի այժմ ինչքան ձանձրացել եմ այստեղից, — խարեց նա:

— ՄԵՐ մոտ, մԵՐ քեզ ձանձրացնում ենք, — զարմացած հարցրեց Զաքարը:

— Ե՛ս, Զաքար... յերեխայի նման խո միշտ ձեր յետեից չեմ ընկնի, — ասաց Զազունյանը տիսուրությամբ:

— Դե վոր այդպիսի համաճ ես, պատված բարի ճանապարհա, — բարկացած կանչեց Զաքարը: — Գնա ուր ուզում ես, զնա թափառիր, ինչքան ուզում ես. յես իսկի չեմ ել ուզում քեզ արգելք լինել:

Յերկար ժամանակ յերկուսն ել լսեցին:

— ՅԵՐՔ ես զնում, — հարցրեց քթով Զաքարը:

— Կամ վաղը, կամ մյուս որը, — պատասխանեց Զազունյանը:

XXVII

Կառքը կանգ առավ Զաքարի ընակարանի դռանը: Նրանք իջան և բարձրացան վերև, հյուրասենյակ, Զաքարին ուզում եր զնալ տեսնելու, թե ինչ և անում կինը, ինչու չի մտնում, զլխավորապես հայտնելու. Նրան Զազունյանի հեռանալը, վոր իրեն սաստիկ աղջել եր, յերբ հանկարծ մտավ Աննան Յերեսում եր, վոր նա նոր չեր յեկել և փոքր ինչ առաջ սաստիկ հողովել եր:

— Ա՛, վանք աստծո, — նրան տեսնելով, կանչեց Զաքարը: — Հաղիվ միտներդ եք բերել մեզ:

— Ներեցք ինձ, այս յերկու-յերեք որը յես հիվանդ եյի, դրա համար ել չեյի զալիս, — ասաց Աննան, սեղմելով նըս ձեռքը, իսկ Զազունյանին միայն թեթևակի և համարյա առանց նրան նայելու, կարծես ակամա, զլուխ տալով:

Զազունյանն այդ առաջին անգամը չեր տեսնում, վոր Աննան լավ աշքով չեր նայում իրեն:

— Ի՞նչպես, ի՞նչ եր պատահել, — հարցրեց Զաքարը:

— Չգիտե՞ք ինչ կպատահեր. շուտ հիվանդացողինը և շուտ առողջացողինը կամ ողուխը պետք է ցավիկիս լիներ կամ պետք և մրսած լիներ, — պատասխանեց Աննան բռնի ժպիտով, վոր պեսզի ցոյց շատ եր հուզմունքը, վորից, ինչպես յերեսում եր, նա դեռ չեր հանգստացել և չեր կարողանում հանգստանալ:

— Հա, այդ մեկը ճիշտ ե, այդ մեկը ճիշտ ե, — շտապով պատասխանեց Զաքարը: — Բայց մեր և Եման. զուք նրա մձա եցիք. ինչու ներս չի զալիս, — ասաց նա, ուզելով զուրս գնալ:

— Նա հիմա կզա, նա հիմա կզա, ա. Զաքար, — շտապեց պատասխանալ Աննան:

— Ախր զուք չգիտեք, ա. Աննա, Զազունյանը վազը կամ մյուս որը վճռել և արդեն հեռանալ այստեղից, — ասաց Զաքարը տիրությամբ:

Աննան արագ նայեց Զազունյանին: Նրա դեմքի վրա յերեսց զարմանք և ուրախության, վոր նա չկարողացավ ծածկել:

Զազունյանը նկատեց այդ և հոնքերը փոքր ինչ կիտեց: Նա նստած եր, ըստ յերեսութին, բոլորովին հանգիստ:

— Այժ, ա. Զազունյան, — հարցրեց Աննան:

— Այո, — պատասխանեց Զազունյանը:

— Կազմը կամ մյուս մըը,

— Այո:

— Զարմանալի յե, ինչու այդպես հանկարծ...

Զազունյանը հոնքերը ավելի կիտեց. նա արդեն ամեն բռն հստկանում եր:

— Հանկարծ ասացիք ու թողթք, — վրա բերեց Զաքարը: — Գոնե յերկու շաբաթ, գոնե մի շաբաթ, գոնե հինգ որ առաջ հայտներ, թե՛ այս ինչ որը հեռանում եմ, այն ինչ այսոր...

Ներս մտավ Եման մետաքսյա մոխրագոյն շրջազգիստով, վոր կոկ և մեծ ճաշակով կանգնած եր նրա փոքր ինչ առաջ թեքված, բայց կանոնավոր, ճկուն կազմվածքի վրա: Ներս մտավ համարձակ, մինչև անզամ հպարտ քայլերով, ինչպես վոչ մի ժամանակ ներս չեր մտել: Յերեսում եր, վոր նա նույնազն հուզված ել, յեղեւ, ինչպես Աննան, և հուզված եր յեղեւ Աննայից ել ավելի: Նրա սպիտակ ճակատի վրա տակավին յերեսում եյին կարմիք բծեր, իսկ վզի և ծնուների վրա կազմոյա յերակները,

վորոնք սաստիկ հուզմունքից գրգռվել — ձգվել եյին։ Մինչև Զազունյանը նրան տեսնելուն պիս վեր կկենար և կշտապեր զեզի նա բարեկար համար, Սմման իր կողմից արագ քայլերով մուտքավ նրան և ամուր սեղմեց նրա ձեռքը, ինչպես վոչ մի ժամանակ չեր սեղմել։

— Դուք զիտեք, թե ինչ բանի համար յես պետք և մեղադրեմ ձեզ, իսկ յես զիտեմ, թե ինչ պետք և պատասխանեք դուք ինձ, — ասաց նա ժողովով, համարձակ և անսովոր արագախոս առթյամբ, կարծես մոկին ջզրացնելով, — և այդ պատճառով վոչ յես կասեմ ձեզ իմ մեղադրանքը, վոչ ել դուք ձեր պաշտպանությանը կամ... ներողությանը, — այդ ավելորդ ե... Բայց այժմ կարծում եմ, վոր ձեր այցելության համար յես պարտական եմ ամուսնուս։

— Միավում ես, Սմմա, ինքն եր գալիս այստեղ։

— Համա... ավելի լավ, — բացականչեց Սմման։ — Սակայն, այս ել եմ կարծում, վոր այս յերկու որն, առանց մեզ, ոկետք և վոր ձանձրանալիս լինեյիք, ինչքան ել զրադված լինեյիք վորեւ գործով։ Ներեցեք ինձ, վոր յես համարձակվում եմ այդպիս կարծել և այդ ուղղակի ասում եմ ձեզ, վորովնենու, — յես նշանակություն ունի մեզ այցելելը, ինչպես և մեզ համար մեն նշանակություն ունի ձեր ներկայությունն այստեղ։

— Դուք կատարյալ իրավունք ունիք այդպիս կարծելու, — պատասխանեց Զազունյանը։ — Ի՞նձ համար միշտ մեն պատիվ և ձեզ այցելել։

Նա շփոթված և զարմացած նայում ելո Ռմմային։ Ի՞նչ և նշանակում այս։ Սմման այզպիս համարձակ, այդպիս աշխատաժ, այդպիս արագախոս և պարզախմա... Նա նախ նայեց Զաքարին, հետո Աննային, կարծես նրանցից սպասելով այդ հանելուկի բացառությունը։ Զաքարի դեմքին նա տեսավ զարմանքի նման մի բան, իսկ Աննայի դեմքին — հազիվ նկատելի մի հեղինական ժպիս, վոր կարծես ասում եր՝ — զիտեմ, զիտեմ ինչ և նշանակում այդ։

— Իսկ զ՞ու ինչ կասես, Սմմա, վոր այս պարոնը հեռանում է վաղը; — ասաց Զաքարը։

— Ի՞նչ, — կասես սաստիկ վախից հանկարծ ցնցվելով, պատասխեց Սմման և արագ նայեց Զազունյանին։ Մի ակնթարթում նրա դույնը թռավ։

— Կամզը, — Հարցը յերկարացնելով և կարծես ինքն իր ձայնից վախենալով։

— Այսինքն վաղը կամ մյուս որը, — ուղղեց Զաքարն իր սխալը։

— Այս, — նույն կերպ Հարցը Սմման, զլուխը անզգայարար փոքր ինչ առաջ տանելով և շարունակ նայելով ուղղակի Զազունյանի աշքերին։

— Այս, — պատասխանեց Զազունյանը շփոթված։

Սմման այլ ևս վոչինչ ձկարողացավ տեղի, Նրա շարքն ոգը կարծես հանկարծ սպառվեց, Նա մեքենայարար հեռացավ զեզի լուսամուտը և նույնպես մեքենայարար նստեց աթոռի վրա մեջքն Աննայի կողմեա անելով։

— Այսոր ինչ շող ե, — արտասանեց Նա շնչառպառ, նորից վեր կացավ, ուժով բաց արեց լուսամուտի փեղկերը, վոր իսկոյն շաջողվեց, և նորից նստեց աթոռի վրա։

Զազունյանն և Աննան, ի հարկեն, հասկացան, թե բանն ինչ չումն ե, բայց Զաքարը տեսավ և վոչինչ ձևակացավ, Նա միայն զարմացած նայեց կոնդը։

Սենյակում յերկար ժամանակ լուսթյուն տիրեց,

— Թեյլ պատրաստ ե, — զիմեց կնոջը Զաքարը։

— Ի՞նչ, — Հարցը Եմման մեքենայարար նայելով նրան։ Զաքարը բոլորովին զարմացած նայեց ուղղակի նրա աշքերին։

— Թեյ, — կը կնեց նա։

— Թեյ... Հա, իսկոյն..., — ասաց Սմման, շտապով վեր կացավ և շտապով դուրս գնաց՝ անցնելիս մի սաստիկ կատաղի և ատելությամբ լի Հայացք ձգելով Աննայի վրա։

Այսուհետեւ մինչև Զազունյանի գնալը նրա իմելքը կարծես զիմին չեր, Նա նմանում եր մի կասկածավոր մարզու, վորին անսպասելի կերպով վրա յեն հասել մարդիկ և նա շփոթությունից, շտապելուց զգիտե, թե ինչպես անի, վոր նրանց ձեռքը շընկնի։

Թեյից հետո, յերբ արդեն մընել եր, Զազունյանը վեր կացավ, վոր զնա, վորովհետեւ պարզ տեսնելով Սմմայի զրությունը, նրա համար անսահելի ծանր եր մեռլ այնտեղ, Զաքարը փորձեց շբողնել նրան, բայց Նա չմնաց, պատճեռ բերելով, վոր պետք և հանապարհի պատրաստություններ տեսնի։

— Ի՞նչ, զու վմզն ես զնում, — կանչեց Զաքարը։

— Զե, զուցե վաղը ձկարողանամ զնալ, — պատասխանեց Զազունյանը հապաղելով։

— Հա, այդ եր պակաս վոր վաղը զնայիր, — մըթմըթաց Զաքարը: — Սպասիր յիս ել եմ քեզ հետ գուրս զալիս:

Զեռք տալու ժամանակ Նմման կարծես հանկարծ ուշքի յիշավ:

— Գնալուց առաջ, ի հարկե, մեզ չեք մոռանալ, — անսպասելի հաստատ ձայնով և տունց նրան նայելու, տաց նա: Նրա ձայնն այնպնս եր հնչում, վոր, կարծես, նա սաստիկ վիրավորված եր Զազունյանից:

Զազունյանը չկատասխանեց, միայն ամուր մեղմեց նրա ձեռքը:

XXVIII

Զաքարի և Զազունյանի դուրս գնալուց հետո Աննան ու Նմման մնացին մենակ միննույն սենյակում: Աննան շարունակ նստած եր միննույն տեղը, միննույն բազկաթորի վրա: Նմման, առանց նրան գեթ մի տնօքամ նայելու, կարծես նա բոլորովին այնուեղ ել չեր, զնաց նստեց լուսամուտի մոտ, առաջվա նման մեջքը նրա կողման անելով:

Սենյակում յերկար ժամանակ լուսթյուն եր տիրում: Կարծես այնուեղ վոչ վոչ չկար: Դուրս արդեն բավական մութն եր: Սեղանի վրա պայծառ վասպում եր հսկա լամպը: Նմման շարունակ նայում եր զեղովի դուրս, իսկ Աննան նրա ծուրակին:

— Ինչքմն վատ բան և հրամաթափությունը, — վերջապես, կարծես ինքը իրեն, կամաց խոսեց Նմման: — Ես կարծում եյի, թե աշխարհին յերեսին մի ընկերուհի, մի քոյլը ունիմ, վոր հարկավոր դեպքում պատրաստ կլինի ինձ համաց մինչև անզամ կյանքը զոնելու, այն ինչ անմիտ չեյի իմաստում, վոր մարդկային սրտում յերբեմն բույն և զնում այնպիսի զգվելի, գարշելի մի զգացմունք, վոր ամեն ինչ տակն ու վրա յե անում: այդ զգացմունքը — նախանձն ե, չար, ու նախանձը, վոր մարդու ամեն ժամանակ փոխում ե և ընդունակ ե զարձնում ամեն տեսակ սուր արարքների...

Աննան, ի հարկե, հասկացավ, թե նա զրանով ում և ինչ և ուզում ակնարկել, բայց ավելի լավ համարեց լոել, բան թե պաշտպանել իրեն, չնայելով, վոր Նմմայի խոսքերը բավական զիսպան նրա սրտին, թեն նա շատ լավ իմանում եր, վոր Նմման այդ ժամանակ ինչ ել ասեր, բոլորը ներելի յեր նրան:

— Ինչմէ յիս այսպիս պետք և տանջվեմ, ինչմէ, — կար լուսթյունից հետո, շարունակեց Նմման դողդոջյուն ձայնով: —

Բացի սիրելուց և զարձյալ սիրելուց, յես թնչ եյի արել նրան, թնչ վրաս եյի տվել նրան, վոր նա ինձ այս սոսկավի դրության մեջ ձգեց... Սըտիս մեջ կրակ, դժողք ձգեց, իսկ ինքն այժմ նայում է ինձ և զվարճանում...

Նրա ձայնը բոլորովին ողղաց. Նա ձեռքերը դրեց լուսամուտի տախտակի վրա, զեմքը թաղեց կոների մեջ և ցնցողարար սկսեց հեկեկալ:

Աննան այս անգամ զարմացավ. թնչ և ասում. «Նա» ձեմ և վերաբերում, — իրմն, թե Զագունյանին... վերջին խոռօքերից յերեսում ե, վոր իրեն և վերաբերում, Բայց ինքն թնչ մեզ ունի նրա տանջանքների մեջ. Նա չկարողացավ համբերել վեր կացավ և շտապով մոտեցավ Նմային:

— Նմա, — ասաց նա, տաջ թերվելով դեպի նա, — թնձ ես մեղազրում, թնձ ես ասում:

— Այս, քնզ եմ մեղազրում, քնզ եմ ասում, — առանց գլուխը բարձացնելու արտասանեց Նման հեկեկանքի միջից:

Աննան բոլորովին զարմացավ:

— Յես քեզ թնչ եմ արել և հարցրեց նա:

— Դու ինձ թնչ ես արել, — հանկարծ բացականչեց Նման կատաղությամբ վեր թռչելով տեղից: — Անմ թնչ ես արել: — Նա յերկու ձեռքով բռնեց կը ծիրից և ուզեց պատել շրջազգեստը: — Պատուիր կուրծք և տես, թե թնչ ես արել... պատուիր...

— Հիսուսին ու Քրիստոսին, Նմա, Հիսուսին ու Քրիստոսին, ուր խելազարվել ես, — շնչած Աննան, վախեցած ակամա յետ յետ գնալով:

— Դու կարծում ես, թե յես հիմնը եմ և վոշինչ չեմ համեման, — կանչեց Նման հետզետես ավելի ու ավելի կատաղելով: — Դու կարծում ես, թե թնձ հետ կարող ես խաղալ, թնչպես անմիտ յերեխայի հետ: Թնչեւ, յես զնացել ասել Զազունյանին, վոր հեռանա այստեղից... Թնչեւ, ասա թնչեւ:

— Նմա, Նմա, թնչ ես ասում, մվ և զնացել, մվ և ասել, կանչեց Աննան սաստիկ զարմացած:

— Դժու, դժու, դժու... Դու չեյթը ասում, թե կիսայտառակեր և կվունդես նրան այստեղից, դժու չեյթը ասում... ասա, դժու չեյթը ասում:

— Այս, յետ եյի ասում, բայց հետո մվ և նրան խայտառակեր, մվ և նրան ասել, վոր հեռանա այստեղից, Նմա:

— Դժու, ասում եմ, դժու... քաջության ունեցիր և մի ծածկիր,

— Են այդպիսի բան չեմ արել, նման ի զուր ևս մեղադրում:

— Քաջություն ունեցիր և մի ծածկիր, մի ծածկիր:

— Աստված և վկա, նման, յես այդպիսի բան չեմ արել:

— Ա՛, վախենում եմ խոսովանվել, վորովնեան զգում ես, վոր շատ անարժան, շատ ստոր բան ես արել համ... վախենում ես խոսովանվել, վորովնեան ինքո ամաչում եմ քո արարքից համ... Ո՞խ, Աննա, ինչքան առում եմ քեզ, ինչքան զգում եմ քեզանից... յեթե հնար ունենամ, արյունով կիսմեմ... Թնա, հետացիր այստեղից, իսկեւյն հեռացիր այստեղից... Այլ ես չեմ ուզում քո բարեկամությամբը, հարկավոր չեմ... Թնա, զնա այստեղից... այլ ես վուց չդնես այստեղ, զնա...

Աննան զունաս և անշարժ նայում եր նրա անզումպ կատաղությունից շառագունած և արյունով լցված աչքերին:

— Ինչ ասեմ, նման, — ասաց նա տիսոր հառաչելով, — զու այնպիսի զրության մեջ ես, վոր յես ակամա պետք և լուծ և հնազանդվեմ քեզ:

— Ի զուը, ի զուը, — պատասխանեց նման հպարտ արհամարհանքով: — Են դեռ չեմ իսկելագարվել, իսկ յերբ կիսելագարվեմ, այն ժամանակ ուրախացիր... Իսկ այժմ, — ինդընեմ:

Ենք նա հպարտությամբ ցույց տվեց զուը:

Աննան մի կարճ միջոց խղճալի հայացքով նայեց նրան. Նա ուզում եր բան ասել, բայց ձայնը չհպատակեց նրան. Նա շատ զեղի զուը, բայց հանկարծ նստեց այնուեղ զրով աթոռներից մեջի վրա և ձեռքով գեմքը ծածկելով, սկսեց լաց լինել:

Նման, վոր բոլորովին չեր սպասում այդ, հանկարծ ցնօքեց և առաջին նվագ նեաց արձանացած. Նա մինչեւ անզում գունատվեց: Հետո կամաց-կամաց սթափվելով, նա ներքին շրթունքը սեղմեց առամեների մեջ, հոնքերը վայր թռղեց և կամաց, կարծես զգուշությամբ, զուրս զնաց, առանց մի ձայն հանելու:

XXIX

Զաքարն յերկար տեղ հանապարէ ձգեց Զազունյանին և խնդրելով, վոր զնալուց առաջ անպատճառ այցելի իրենց, պերագարձավ տուն:

Զազունյանը Նմանյին թռղեց շատ ծանր սրտով: Վոչ մի ժամանակ նրա սերն այնպես չեր բորբռքվել զեղի նման, ինչպես այդ կարճ միջոցում, միննույն ժամանակ նրա սրտում ծագել

եր անհուն իշղճահարություն զեզի այդ անբախտ կինը։ Թեև շատ անզամ նա Սմմայի մեջ տեսնուում եր սիրաւարության նշաններ, բայց և այնպես զարձյալ կասկածուում եր այդ մասին, առկայն իր վերջին այցելությունից հետո, նրան այլ ևս կասկածելու տեղիք չեր մեռմ։ — Սմմայի ոտարուուի զրությունը պարզ ապացույց եր, վոր այդ կինն իսկապես սիրում և նրան և սիրում և խենթի նման։ Այդ գիտակցությունը, կարծես, հանկարծ կաշկանգեց նրա վատները։ Հեռանարու մատադրությունը հետպետե թուլանուում եր. նա զգում եր, վոր այդ այցելությունից հետո ինքն այլ ևս չի կարող հեռանալ — զնալ ընդունիչու և այն ել այշպես շուտ — մի կամ յերկու որից հետո Սմման այժմ նրա համար ամեն ինչ եր — և կյանք, և յերջանելություն։ կարելի՞ յեր միթե թողնել այդ կյանքը և յերջանելությունը և հեռանալ — մեր...

«Ենչքան դժվար ե» շնչաց նու անհուն տանջանքով, նո պզում եր, վոր կամքն ընկնդվում եր սիրու ույժի առջև ինչ պետք և աներ. արդյոք հեռանելու, առանց Սմմային տեսնելու, թե, նախ քան հեռանալը, զարձյալ այցելին նրան. բայց նո գիտեր, վոր այդ այցելությունից հետո արդեն ինքն այլ ևս բոլորովին անկարող կիննի հեռանալը, բոլորովին կընկնդի սիրու առջն, իսկ զրանից վարդան թշվառություններ պետք և ծագեն....

«Դոչ, վոչ, առանց տեսնելու պետք և հեռանալ, առանց տեսնելու մասեծում եր նաև չԱհա, վաղնենթ, վաղնենթ... Թող ինչ ուզում են կարծեն, բայց յես առանց տեսնելու կհեռանամ... Վաղնենթ, վա...»

Հանկարծ նա սարսափեց իր գլխում ծագած մի նոր մտքից. — Ինչ կիննի արդյոք Սմմայի զրությունն իր հեռանալուց հետո Յեթի առանց նրան տեսնելու հեռանա, հեռանա ընդ միշտ, արդյոք դրանով գործն ուղղմած կիննի, արդյոք զրանով ամեն բան կվերջանամ, թե զրանից մի ուրիշ, վոչ պակաս սարսափելի թշվառություն կծագի... ԶԲ վոր Սմման սիրում և նրան և սիրում և զուցն նրանից ել վառ, բորբոքված սիրով, և այդ պատճառվ անկասկած չԲ արդյոք, վոր Զաղունյանն իր հեռանալով ահազին հարված կպատճառի նրա սրտին... Յեկ արդյոք Սմման կարծի և ասնել այդ հարվածը... արդյոք հուսահատությունից նա վորեն գժրախտություն չմ բերի իր զլիխին...»

Զաղունյանը ցնցվեց,

— Ահա թե վեպը վորտեղից և սկսվում, — ասաց նա, լսելի կերպով, անցնելով մի մութ փողոցով.

«Նոշ, անմտություն, մեծ անմտություն կլինի սռանց նրան
աեւնելու հետահաջը, զարունակեց նա մասմել. «Պետք ե, ան-
պատճառ պետք ե աեւնել՝ նրան, առնենքնապես աեւնել պետք և
բացատրել նրան պրեծի զրությանը, պետք ե բանալ նրա աշ-
քերը, պետք ե համոզել նրան, պետք ե զգուշացնել նրան և
այսահետեւ... այս, այնահետեւ համարձակ և հանգիստ խզեղով կտ-
րելի յի հեռանալը»:

— «Հաված ե, — ասաց նա համարյա բարձրաձայն, զարու-
նակելով առաջ անցնել:

— «Բայց թնջղես աեսնել նրան առանձին, վմբակով, յԵրբ։
մտածեց նա և շուտով հուսահատվեց, վորովնես այդ հարցերին
վոչ մի բավարար պատասխան չգտավ։

— Տեր ասաված, թնչ անեմ, — արտասանեց նա խորին
առնջանցով և նրա մտքերն սկսեցին խճճվել. Այժմ արդեն նա
ամեն կողմից իրեն կաշեանդված եր զգում, թնջղես մի մարդ,
վոր ընկած և ձեռքն ու վորաքը կապկած և վոչ մի հաւը չի
գտնում այդ կապանքից պատվելու։

Սաստիկ հուսահատված կես գիշերին նա վերադարձավ հյու-
բանոց։

Դիշերը շատ անհանգիստ անց կացրեց, հետեյալ որը նույն-
պես թե մտավորապես և թե գիզիկապես իրեն սաստիկ տանջ-
ված եր զգում. Շատ մտածելուց նրա ուզեղը կատարելապես
հոգնել և անընզունակ եր զարձել մի նոր բան մտածելու. Ման
եր գալիս շշմածի նման. Թուրս եր գալիս հյուրանոցից, թափա-
ռում եր, ինքն ել չիմանալով վորտեղ և ինչու, նորից վերա-
գուստում եր հյուրանոց և կարճ ժամանակից հետ նորից զուրս
եր զնում, թափառում. Մի քանի անգամ ուզեց զնալ Մարկոս-
յանների տուն, բայց վոչ մի անգամ ել չզնաց ինքն ել չիմա-
նալով ինչու։

Այդպիս անցկացրեց նա ամբողջ որը. Դիշերը զարձյալ զուրս
յեկավ թափառելու. Արդեն բավական ուշ եր, յերբ նա կամեցավ
վերագուստալ իր սենյակը, Բայց հանկարծ զզաց, վոր սաստիկ
քաղցած ե. այդ որը նա վոչ թեյ եր խմել վոչ ճաշել, Մասվ
յեկառապական պայծառ լուսավորված ճաշաբաններից մեկը և
սպասավորի բերած խորակացուցակի վրա ցոյց տվեց առաջին
պատճած կերակուրը. Պահանջեց և մի շիշ զինի. Այս սենյակում,
վորտեղ ինքն եր նստած, բացի իրենից, ուրիշ վոչ վոռ չկար,
հեռավոր սենյակից մի քանի մարդկանց ձայներ եյին լսվում,

վորոնց, ինչպես յերեսոմ եր, մի բան եյին խաղում, Յերկար ժամանակ անցավ, մինչև վոր սպասավորը, վերջապես, բերեց պահանջանք կերակուրը և դինին, Զազունյանը սկսեց տառել և խմել Սպասավորն յերկորդ կերակուրն եր բերել նրա համար, յերբ հարեան սենյակներից մեկից դուրս յեկավ մի բարձրակառակար սպասավորն յայից նրան և ճանաչեց:

Զազորսկին եր:

XXX

Իսկույն յերեսոմ եր, վոր Զազորսկին բավական արբաժ եր: Նրա դիմքը կարգել եր, աշխերը պատորվել եյին, նա բավական գեղեցիկ տղամարդ եր, զեղեցիկ կազմված տով և առավել և գեղեցիկ կապույտ աշխերով վորոնք նրա ձվաձև, սափրած զեմքին՝ մինչև անգամ արբաժ ժամանակ անձնավուսան — համարձակ և մինչեւ յա ժամանակ քաղցր և զբավիչ արտահայտություն եյին տալիս: Գլխարկս աշխերի վրա փոքր ինչ վայր թողած, նա ուղարձ եր անցնել Զազունյանի նստած սենյակով և դուրս դաւը յերբ հանկարծ նկատեց Զազունյանին, վորը զլուխը զիտմամբ կախել եր կերակրի վրա, ցույց տալով, թե չի տեսնում նրան: Զազորսկին քայլը ծոեց և առանց ջատպելու մռահցավ նրան:

— Փառք աստուծո, վոր այս անգամ գեղքը հանդիպեցնում և մեզ միմյանց շատ աշուղ պայմաններում, — տասց նա ֆրանսակերեն թեն սուր, բայց փոքր ինչ խանձրած ձայնով և կանգնեց նրա սեղանի առջև:

Զազունյանը զլուխը բարձրացրեց և մայլ հայտցնով լուս նայեց նրան:

Զազորսկին ձեռքը տարավ գեղի գլխարկը և զինվորականի պատիվ տվեց նրան:

Զազունյանը զլուխն ամենեկին շշարժեց:

Զազորսկին ըստ յերեսյթին, բոլորսկին ուշադրության շշարձրեց վրա վրա:

— Թեն մենք մի քանի անգամ հանդիպել ենք միմյանց, — շարունակեց նա ռուսերեն, — բայց ամեն անգամ ել դուք ինձ շտեմանելուն եք տվել, Մի անգամ ել, յերեխ սխալմամբ, դուք նայեցիք ինձ, յես ձեզ բարենցի, բայց պատասխան չստացա, ինչպես այս բռնկելիս, բայց ի սեր տառուծո, մի կարծեք, թե այդ բոլորը հիշեցնելով, իմ նպասակա ե, թեկող անուղղակի, հանգիմանել ձեզ, — Բավ լիցի, Ամեն մեկն իր անհատական իրավունքները և անընարարելի կամքն ունի, այլապես մենք չենք

ապրում. ձեր ժամանակներում. Բացի դրանից, ամեն մեկն իր հասկացողաթյունն, իր համազմունքն ունի իրերի, յերեսյթների վերաբերմամբ, սխալ թե ուղիղ — այդ վոչ վոքի գործը չե, այդ միայն իր գործն ե. ամեն մեկն ինքն և իր արարքի պատասխանառուն, Ակզրունքը շատ զեղեցիկ ե, և յես մանավանդ հետեւմ եմ այդ սկզբունքին. Դուք զիտեք, վոր յես աղասամիս մարդ եմ և ամեն բանի վրա նայում եմ անհատական իրավունքների անսակեալից՝ այդ պատճառով յես բոլորովին շկմ նեղանում, վոր բարեխո շեք պատասխանում. այդ ձեր անհատական իրավունքն ե, ձեր անրոնաբարելի կազմն ե Բայց հարգելով ձեր այդ իրավունքն յես առավել և պետք և հարգեմ իմ իրավունքը — պաշտպանելու ինձ ձեզ համար ուղիղ բայց ինձ համար սխալ այն կարծիքի, զուցե և համոզման վերաբերությունը վոր զուց հայտնի անցքի պատճառով կազմել եք. իմ մասին. Իմ նպատակն չե փոխել իմ մասին ձեր ունեցած կարծիքը կամ համոզմունքը, վոր ինչպես ասացի, ձեզ համար ուղիղ ե, բայց ինձ համար — սխալ այն, վոր ինքն ինձ արդարացնեմ ձեր առջն և պաշտպանեմ իմ անհատական իրավունքները. Հուսով եմ, վոր զուց բարեհան կզանվեք զեպի ինձ և շնորհ կանեք լսելու Թույլ կտմք ինձ արդյուք նաև ձեզ սեղանի մոտ.

Զազունյանը ձայն չհանեց նոյն մոայլ հայացքով նա նայում եր ուրիշ կողմէ.

Զազուրսկին մեաց կանգնած:

